

ՀԵՆՐԻԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1945-2011 ԹԹ.**

ՀՏԴ 947:941(479.25):325

ԳԴՄ 63.3(2)+63.3 (2Հ)

Ա 161

*Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
խորհուրդը*

Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկն., դոց. Ա. Դարբինյան

Աբրահամյան Հենրիկ

Ա 161 Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ./
Հ. Աբրահամյան: Երևանի պետական համալսարան.-Եր.: ԵՊՀ հրատ.,
2011.- 122 էջ:

Աշխատանքում լուսաբանվում է խորհրդային և հետխորհրդային հասարակության պատմությունը, որն ընդգրկում է պատմական կարևոր մի ժամանակաշրջան, որը լի է բազմաթիվ հակասություններով, ներպետական, քաղաքական և միջազգային բարդ իրողություններով: Աշխատանքում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են. պատերազմից խաղաղ շինարարության անցումը, երկրի ավերված տնտեսության վերականգնումը, աշխարհը երկու հակամարտ համակարգերի բաժանումը, «սառը պատերազմի» քաղաքականությունը: Հատկապես կարևոր տեղ է տրված ԽՍՀՄ քաղաքական համակարգում կատարված փոփոխություններին, խրուշչովյան «ձնհալի» քաղաքականության, անհատի պաշտամունքի դատապարտման հարցերի լուսաբանմանը, այդ հարցում երկրի ղեկավարության վարած ոչ հետևողական քաղաքականությունը: Աշխատանքում ցույց են տրված խորհրդային համակարգի ճգնաժամի պատճառները, գորբաչովյան վերակառուցման քաղաքականության այն քայլերը, որոնք ուղղված էին հասարակության դեմոկրատացմանը, հրապարակայնությանը, բազմակարծության ձևավորմանը: Աշխատանքում հանգամանորեն վեր են լուծված ԽՍՀՄ փլուզման պատճառները և հետխորհրդային շրջանում ԱՊՀ երկրների միջև նոր փոխհարաբերությունները: Առանձնահատուկ տեղ է տրված Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության հարաբերություններին, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին:

Աշխատանքը նախատեսված է պատմաբանների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 947:941(479.25):325

ԳԴՄ 63.3(2)+63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1475-4

© ԵՊՀ հրատ., 2011

© Հ. Աբրահամյան, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

5

Գ Լ ՈՒ Խ 1

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍՌԱԶԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945-1953 թթ.)

1. Անցումը խաղաղ շինարարության և պատերազմից տուժած տնտեսության վերականգնման 9
2. Աշխարհի բաժանումը երկու համակարգերի և «Սառը պատերազմի» քաղաքականությունը 13
3. Երկրի հասարակական-քաղաքական կյանքը և վարչահրամայական համակարգի ամրապնդումը 17

Գ Լ ՈՒ Խ 2

ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆՈՐ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1953-1964 թթ.)

1. Պայքար իշխանության համար և փոփոխություններ քաղաքական վերնախավում 24
2. ԽՄԿԿ 20-րդ համագումարը և խրուշչովյան «ձնհալը» 28
3. Վերափոխումներ տնտեսական կյանքում և չօգտագործված հնարավորություններ 34
4. Խորհրդային արտաքին քաղաքականության հակասությունները խրուշչովյան շրջանում 40

Գ Լ ՈՒ Խ 3

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1965-1984 թթ.

1. Խորհրդային հասարակության կայունացման նոր կուրսը 47
2. Տնտեսական ռեֆորմները 1960-70-ական թվականներին 52

3. Միջազգային հարաբերությունները 1960-1980-ական թվականների սկզբներին. խորհրդային արտաքին քաղաքականության հակասությունները	57
---	----

Գ Լ ՈՒ Խ 4

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԳՈՐԲԱՉՈՎՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ

1. Գորրաչովյան վերակառուցումը և հասարակության վերափոխման առաջին քայլերը	63
2. Հասարակության դեմոկրատացման նոր կուրսը և քաղաքական կուսակցությունների ու շարժումների ձևավորումը	68
3. ԽՍՀՄ-ի փլուզումը և ԱՊՀ-ի ձևավորումը	73

Գ Լ ՈՒ Խ 5

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1991-2011 թթ.)

1. Ռուսաստանի Դաշնության քաղաքական զարգացման հնարավորություններն ու ղեկավարությունները	79
2. Շուկայական տնտեսության կայացման և զարգացման գործընթացները	89
3. Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ անդամ մյուս երկրների փոխհարաբերությունները հետխորհրդային շրջանում	100
Վերջաբան	117
Резюме	119
Գրականության ցանկ	120

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա ժամանակաշրջանում ավելի, քան երբևէ, մեծացել է հետաքրքրությունը խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի պատմության, նրա իմաստավորման, շատ հարցերի վերագնահատման, նոր մոտեցումների մշակման նկատմամբ: Այդ իմաստով նման համեմատական հետազոտությունը հայ պատմագիտության մեջ առաջիններից մեկն է, որում փորձ է արվել միաժամանակ ներկայացնել ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ հետխորհրդային ժամանակաշրջանի պատմությունը, անել համեմատություններ միանգամայն տարբեր երկու համակարգերի, տարբեր ժամանակների, տարբեր արժեքների միջև, քանզի ԽՍՀՄ-ի փլուզումը կտրուկ կերպով փոխեց ոչ միայն նախկին Միության ժողովուրդների, այլ նաև ողջ համաշխարհային պատմության ընթացքը:

Աշխատանքում փորձ է արվել քննական դիրքերից վերլուծել և գնահատել խորհրդային հասարակության, նրա պատմության մի ժամանակաշրջան, որն ընդգրկում է 1945-2011 թվականները, երբ խորհրդային մարդը, նրանում ապրող 100-ից ավելի ազգերի, ժողովուրդների ներկայացուցիչներ ֆաշիզմի դեմ հսկայական զոհերի գնով տարած հաղթանակից հետո, որոշակի հույսերով և հավատով ձեռնամուխ եղան վերականգնելու երկրի ավերված տնտեսությունը, բուժելու պատերազմի պատճառած վերքերը, հուսով, որ կմեղմացվեն կամ իսպառ կվերացվեն ստալինյան աշխատանքի այն մեթոդները, այն բռնաճնշումներն ու հետապնդումները, որոնք բնորոշ էին հատկապես 1920-1930-ական թվականներին, որոնց գոհ գնացին միլիոնավոր անմեղ մարդիկ, շարքային քաղաքացիներ, որոնց շարքում քիչ էին նաև հայ ժողովրդի շատ ու շատ ներկայացուցիչներ:

Աշխատանքում ցույց են տրված նաև այն ջանքերն ու քայլերը, որոնք ուղղված էին ստալինյան անհատի պաշտամունքի հաղթահարմանը, որը կապված է 1953 թ. Ի. Ստալինի մահից հետո ԽՄԿԿ XX համագումարում բարձրացված Ստալինի անհատի պաշտամունքի դատապարտման, քննադատության և պատմությանը հայտնի խրուշչովյան «ձնհալի» ժամանակաշրջանի հետ:

Աշխատանքում միաժամանակ ցույց է տրված ներկուսակցական և ներքաղաքական այն պայքարը, որը բնորոշ էր խորուշովյան «ձնհալին», որը որքան էլ որ փորձում էր ձեռքագատվել տասնյակ տարիներ երկրում հաստատված, կարծրացած աշխատանքի հին բյուրոկրատական, վարչահրամայական մեթոդներից, հաղթահարել այն հնարավոր չէր, քանզի երկրի նոր ղեկավարությունը նույնպես մեղսակից և մասնակից էր երկրում իրականացված օրինախախտումներին: Նման վիճակն էլ համզեցրեց երկրի ղեկավարության ներսում ներքաղաքական նոր պայքարի, նոր խարդավանքների և ի վերջո՝ երկրի ղեկավարության նոր փոփոխությունների: Խորհրդային հասարակության այդ շրջանն էլ՝ 1960-ական թվականների կեսերից մինչև 1980-ական թվականների սկիզբը, կապված է, այսպես կոչված, բրեժնևյան ժամանակաշրջանի հետ, որի ժամանակ էլ երկիրը աստիճանաբար ներքավեց տնտեսական, բարոյաքաղաքական մի նոր ճգնաժամի մեջ: Եվ որքան էլ որ երկրի նոր ղեկավարությունը՝ Լ. Ի. Բրեժնև Ն. Ս. Կոսիգին տանդեմը և նրանց շրջապատը գիտակցում էին կառավարման խորուշովյան ժամանակաշրջանի արատները, սխալները (սուբյեկտիվիզմ, վոլյունտարիզմ, վարչահրամայական մեթոդներ և այլն) և փորձում փոխել կառավարման հին համակարգը, հին աշխատառճը և ավելի մեծ իրավունքներ տալ Միութենական համրուպետություններին և այլն, այնուամենայնիվ, հաղթահարել այդ ամենը հնարավոր չէր:

Փաստորեն, երկրում 1960-ական թվականների երկրորդ կեսին սկսված վերափոխումները, տնտեսական ռեֆորմները, հասարակության դեմոկրատացման ուղղությամբ կատարվող քայլերը ցանկալի արդյունքներ չտվեցին, որոնք էլ ավելի խարսցրին երկրում քաղաքական, տնտեսական ճգնաժամը: Փաստորեն, ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ որքան էլ երկրի ղեկավարությունը տարբեր համաժողովներում, տարբեր ամբիոններից բարձրացնում էր ճիշտ հարցեր, նշում երկրի առջև ծառացած խնդիրները, միևնույն է, դրանք հիմնականում մնում էին թղթի վրա, քանզի երկրի քաղաքական վերնախավի, ընտրանու շրջանում պահպանողական, հին, կարծր, քարացած մտածողությունը ավելի գերիշխող էր, որն էլ դառնում էր խանգարող գործոն հասարակության նորմալ զարգացման համար:

Խորհրդային հասարակության համար առավել ճակատագրական դարձավ 1980-ական թվականների երկրորդ կեսը, որը կապված էր պատմությանը հայտնի գորբաչովյան վերակառուցման քաղաքականության հետ,

քաղաքականություն, որը փորձեց սոցիալիզմին նոր շունչ հաղորդել, այն մոդեռնացնել, արդիականացնել՝ առաջ քաշելով «սոցիալիզմը մարդկային դեմքով» մի նոր կարգախոս՝ ցանկանալով «արագացման» իր նոր կուրսով նաև արագացնել երկրի զարգացումը, որը կրկին մնաց ցանկություն, մնաց թղթի վրա: Դեռ ավելին, ի վերջո գորբաչովյան վերականգնման քաղաքականությունը ավարտվեց նրանով, որ Խորհրդային Միությունը և ողջ սոցիալիստական համակարգը փլուզվեց: Սկսվեց թավշյա հեղափոխությունների մի շրջան, որի արդյունքում նախ ԽՍՀՄ-ի հենքի վրա առաջացան 15 նորանկախ պետություններ, իսկ հետո Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի ժողովրդադեմոկրատական երկրներում սկսված նոր գործընթացները հանգեցրին հին կարգերի փլուզմանը և նոր կարգերի ձևավորմանը: Սրանք համաշխարհային մասշտաբի գործընթացներ էին, որոնց նկատմամբ կան տարբեր մոտեցումներ, գնահատականներ, հաճախ իրարամերժ, ծայրահեղությունների հասնող գնահատականներ՝ նույնիսկ հասնելով նրան, որ ԽՍՀՄ-ի փլուզումը թելադրված էր դրսից՝ Արևմուտքից: Այդ իմաստով ԽՍՀՄ փլուզման պատճառների և դրա հետևանքների մասին կան հրապարակված բազմաթիվ աշխատություններ, որոնցում փորձ է արվում ավելի օբյեկտիվ դիրքերից ներկայացնել Խորհրդային Միության և սոցիալիստական ճանապարհի փլուզման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, ընդ որում, այդ գնահատականները հաճախ իրարամերժ են ոչ միայն հետխորհրդային շրջանում Ռուսաստանի Դաշնությունում լույս տեսած պատմագիտական աշխատություններում¹, այլ նաև Արևմուտքում հրապարակված աշխատություններում², որն էլ նշանակում է, որ քննարկվող խնդրի նկատմամբ հետաքրքրությունը զնալով ավելի է մեծանում: Ելնելով այդ հանգամանքից՝ մենք ևս փորձ ենք արել մեկ համատեքստում ներկայացնել Խորհրդային Միության և հետխորհրդային ժամանակաշրջանի

¹ Новейшая история Отечества: XX век. В двух томах. Т. 1, Т. 2. М., 1999; Новейшая история России. 1914-2008 (Под ред. М. В. Ходякова). М., 2008; Новейшая история. Подробности 1945-1999. М., 2000; Политическая история России. М., 1998; Д. Валовой. XXI век. Три сценария развития. М., 1999; Ш. М. Устинов. История Советского государства. М., 2008; А. С. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Сивохина. История России. М., 2006; В. П. Семин. Русская история: проблемы и спорные вопросы. М., 2007 և այլն:

² Дж. Боффа. От СССР к России. М., 1996; Н. Верг. История Советского государства. 1900-1991. М., 1999; Дж. Гренвилл. История XX века. Люди. События. Факты. М., 1999.

(1945-2011 թթ.) պատմությունը, հատկապես հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանը ևս մոտ 70 տարի Միության մյուս հանրապետությունների և ժողովուրդների հետ ապրել, աշխատել, ստեղծագործել, պայքարել է մեկ պետության կազմում՝ նրա հետ կիսելով թե՛ հաջողությունները և թե՛ դժվարությունները: Հատկապես կարևոր տեղ է տրված ԽՍՀՄ փլուզման պատճառներին և հետևանքներին, հետխորհրդային շրջանում առաջացած այն մոր փոփոխություններին, այն մոր հարաբերություններին, Բազմաթիվ չլուծված ազգամիջյան այն հակամարտություններին, որոնք որպես ժառանգություն մնացել են նախկին ԽՍՀՄ-ից, որոնց լուծմանն էլ այժմ ուղղված են տարբեր քաղաքական ուժերի, երկրների ջանքերը, առանց դրանց դժվար է ապահովել յուրաքանչյուր երկրի համար հուսալի երաշխիք՝ նորմալ և կայուն զարգացման համար:

Գ Լ ՈՒ Խ 1

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945-1953 թթ.)

1. ԱՆՅՈՒՄԸ ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

Խորհրդային Միության հաղթանակը Ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ հնարավորություն տվեց խորհրդային ժողովրդին անցնելու խաղաղ շինարարական աշխատանքի և վերականգնելու երկրի ավերված, պատերազմից տուժած տնտեսությունը:

Հաղթանակն անշափ ծանր ու թանկ գին ունեցավ խորհրդային ժողովուրդների համար: Այն ձեռք բերվեց մարդկային վիթխարի զոհերի, զրկանքների և ավերածությունների գնով: Տարբեր գնահատականներով մարդկային զոհերի թիվն հասել է 27 մլն.-ի: Փաստորեն, երկրի բնակչության յուրաքանչյուր յոթներորդ քաղաքացին զոհվել էր: Պատերազմի ընթացքում թշնամու կողմից գրավված երկրի եվրոպական մասը հայտնվել էր փլատակների տակ: 25 մլն. մարդ զրկվել էր տանիքից և հայտնվել անօթևան վիճակում: Մոտավոր հաշվումներով երկրի բնակչությունը 1941 թ. հունվարի 1-ից մինչև 1946 թ. հունվարի 1-ը 196,8 մլն. մարդուց պակասեց՝ կազմելով 162,4 մլն., այսինքն՝ կրճատվեց 18 %-ով:

Անասելի չափով մեծ էին կորուստները նաև երկրի տնտեսության մեջ: Թշնամին ավերել էր 1710 քաղաք ու ավան, ավելի քան 70 հազ. գյուղ ու շեն: Ավերակների էին վերածվել երկրի կարևորագույն կենտրոններ Լենինգրադը, Մոսկվան, Կուրսկը, Վորոնեժը, Խարկովը, Դնեպրոպետրովսկը և բազմաթիվ այլ քաղաքներ: Ավերվել էին 32 հազ. ձեռնարկություն, 6 մլն. շինություն, շարքից դուրս էին եկել 65 հազ. կմ երկաթգիծ, հազարավոր մշակույթի օջախներ, պատմական հուշարձաններ և այլն: Բանվորների և ծառայողների թիվը պակասել էր 5,3 մլն.-ով,

իսկ գյուղատնտեսության բնագավառում, եթե պատերազմի նախօրյակին զբաղված էր 35,5 մլն. մարդ, ապա 1945 թ. 29,3 մլն., որը բնական է, ազդում էր գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալի վրա: Օրինակ՝ պատերազմի տարիներին հացահատիկի բերքատվությունը մեկ հեկտարի հաշվով 8,6 ցենտներից իջավ մինչև 5,6 ցենտների: 1945 թ. գյուղատնտեսության համախառն ընդհանուր արտադրանքը կազմում էր նախապատերազմյան արտադրանքի 60 %-ը: Թշնամու պատճառած ուղղակի վնասը գնահատվում էր 679 մլրդ. նախապատերազմյան ոուրլի կամ՝ 125 մլրդ. դոլար, ինչը 5,5 անգամ գերազանցում էր. ԽՍՀՄ-ի 1940 թ. ազգային եկամուտը: Ընդհանուր առմամբ պատերազմի ժամանակ պատճառված վնասը և ռազմական ծախսերը միասին կազմում էին 2 տրիլ. 569 մլրդ. նախապատերազմյան ոուրլի, որը թշնամու գրաված տարածքների եկամուտների կորուստների հետ միասին հավասար էր երկրի ազգային հարստության 1/3-ին³:

Երկիրն այդ ծանր վիճակից հանելու ճանապարհը տնտեսության՝ խաղաղ ժամանակներին համապատասխան վերակառուցումն էր, աշխատուժի ապահովումը, տնտեսության նոր մոդելի մշակումը և բազմաթիվ ու բազմաթիվ խնդիրների նոր որակով լուծումը:

Առաջին հերթին փոփոխություններ կատարվեցին պետական կառավարման մարմինների կառուցվածքում: Վերացվեց Պաշտպանության Պետական Կոմիտեն, որի բոլոր գործառույթներն անցան ԽՍՀՄ Ժողկոմխոբին. որն էլ 1946 թ. մարտին վերափոխվեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդի: Այս նոր մարմնի նախագահ դարձավ Ի. Վ. Ստալինը, որը շարունակում էր իր ձեռքում կենտրոնացնել կառավարման բոլոր լծակները: Իր դիրքերն ու խորհրդային համակարգն ավելի ամրապնդելու նպատակով Ի. Ստալինը, 1946 թ. մարտի 9-ին ելույթ ունենալով ընտրողների առջև և «պովելով հաղթանակած ժողովրդի տրամադրություններից. մեկ անգամ ևս հիմնավորեց այն գաղափարը, որ պատերազմը ցույց տվեց, որ խորհրդային հասարակարգը հանդիսանում է հասարակության կազմակերպման լավագույն ձևը, քան ցանկացած ոչ խորհրդային հասարակարգ⁴:

³ Տե՛ս *Новейшая история России 1914-2008*, М., 2008, էջ 320-321; *В. А. Шестаков, Новейшая история России*, М., 2007, էջ 300: *Новейшая история Отечества xx век*, Т. 2, էջ 234; *Н. Верт, История Советского государства 1900-1991*, М., 1999, էջ 329; *Дж. Гренвилл, История xx века. Люди, события, факты*, М., 1999, էջ 332:

⁴ Տե՛ս *В. А. Шестаков, Новейшая история России*, М., 2007, էջ 302:

Դրանից ելնելով էլ՝ 1945-1946 թթ. քննարկվեցին երկրի տնտեսության զարգացման 4-րդ հնգամյա պլանի (1946-1950 թթ.) հարցերը: Այդ քննարկումներն ավարտվեցին նրանով, որ հաղթանակեց տնտեսության զարգացման նախապատերազմյան մոդելի կողմնակիցների տեսակետը: Խնդրի քննարկման և մոդելի ընտրության մյուս նրբությունն այն էր, որ հաշվի էր առնվում նաև հետպատերազմյան ժամանակաշրջանի միջազգային իրադրությունը:

4-րդ հնգամյա պլանով նախատեսվում էր արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառում նախ վերականգնել նախապատերազմյան մակարդակը, իսկ հետո՝ այն գերազանցել:

Տնտեսության վերականգնման մյուս առանձնահատկությունն այն էր, որ դեռևս պատերազմի ժամանակ թշնամուց ազատագրված տարածքներում արդեն սկսվել էին վերականգնման աշխատանքները: Պլանով նախատեսվում էր նախ վերականգնել այն շրջանների տնտեսությունը, որոնք գրավվել էին գերմանական զորքերի կողմից: Նախատեսվում էր 1940 թ. համեմատ արդյունաբերության բնագավառում արտադրանքն ավելացնել 48 %-ով, գյուղատնտեսության բնագավառում՝ 27 %-ով, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 36 %-ով, իսկ ազգային եկամուտը՝ 38 %-ով: 1945 թ. հունիսին արդեն քաղաքացիական արտադրանքի արտադրության էր վերափոխվել 500 ձեռնարկություն⁵:

Տնտեսության վերականգնումն իրականացվում էր առաջին հերթին երկրի հարավային շրջաններում սև մետալուրգիայի և վառելիքա-էներգետիկ բնագավառներում, որոնց նկատմամբ ուշադրությունն ավելի մեծ էր:

Վերափոխումների անբաժանելի մասն էր կազմում նաև բանակի թվի կրճատումը: 1945 թ. սեպտեմբերին իրականացվեց առաջին զորացումը: Խաղաղ աշխատանքի վերադարձան 3,3 մլն. մարդ, իսկ արդեն 1948 թ. այդ գործընթացն ավարտվեց: Երկրի տնտեսությունն ունեցավ 8,5 մլն. աշխատող: Բանակում մնացել էր 2,8 մլն. զինծառայող, այն դեպքում, երբ պատերազմի ավարտին ԽՍՀՄ զինված ուժերում հաշվվում էր 11,3 մլն. մարդ⁶:

⁵ Տե՛ս *Новейшая история России 1914-2008, М., 2008, էջ 321*:

⁶ Տե՛ս *В. А. Шестаков, Новейшая история России, М., 2007, էջ 301-303, 321-322; Новейшая история России 1914-2008, М., 2008, էջ 301*:

Սկսելով տնտեսության վերականգնումը՝ երկրի ղեկավարությունն այն իրականացնում էր նույն պլանային սկզբունքներով, որոնք բնորոշ էին 1-ին և 2-րդ հնգամյակներին: Խորհրդային ժողովուրդը մեծ նվիրումով ու խանդավառությամբ ձեռնամուխ եղավ հնգամյակի կենսագործմանը: Երկիրը, պատկերավոր ասած, վեր էր ածվել շինարարական հրապարակի: Առաջին հերթին վերականգնվում էին ավերված էլեկտրակայանները, ծանր ինդուստրիայի գործարանները, հանքահորերը և բազմաթիվ այլ ձեռնարկություններ:

Առավել դժվարություններ առաջացան գյուղատնտեսության ոլորտում: Միայն երաշտի պատճառով 1946 թվականին 1940 թ. համեմատ հավաքվեց հացահատիկային կուլտուրաների 1/3-ը, որը համապատասխանաբար կազմում էր 39,6 մլն. և 95,5 մլն. տոննա: Իսկ այդ հանգամանքն ունեցավ այն հետևանքը, որ երկրում սկսված սովի, հիվանդությունների պատճառով մահացավ 1 մլն. մարդ⁷:

Կառավարությունը, օգտագործելով երաշտի գործոնը, հարկադրաբար կոլտնտեսություններից հավաքում էր բերքի 50 %-ը, որն ավելի շատ էր, քան պատերազմի տարիներին: Մակայն այդ քաղաքականությունն ունեցավ այն հետևանքը, որ արդեն գյուղը մատնվեց զանգվածային սովի: Նման պայմաններում անգամ ԽՍՀՄ-ը, ելնելով քաղաքական նկատառումներից, օգնություն էր ցույց տալիս Բուլղարիային, Ռումինիային, Լեհաստանին, Չեխոսլովակիային, որոնք անցում էին կատարում դեպի սոցիալիստական կարգեր: Ընդ որում դա կատարվում էր պետության պարենային ֆոնդի անչափ համեստ բաժնից:

Հետաքրքիր է ասել, որ այդ նույն ժամանակ երկրի ներքին կարիքների համար ԽՍՀՄ-ը Չինաստանից գնեց 1 մլն. տոննա հացահատիկ և այլ գյուղատնտեսական մթերքներ: Երկրում շարունակվում էր պահպանվել հացի բաշխման քարտային համակարգը: Փաստորեն, գյուղը հայտնվել էր շատ անմխիթար վիճակում, ինչը ստիպում էր գյուղացիներին տեղափոխվել քաղաք՝ արդյունաբերական կենտրոններ:

1950 թ. ԽՍՀՄ-ում սկսվեց կոլտնտեսությունների խոշորացման գործընթացը, որը նպատակ ուներ նպաստելու արտադրության միջոցների, հողօգտագործման և աշխատանքային ռեսուրսների կենտրոնացմանը:

⁷ См. у В. А. Шестаков, *Новейшая история России, М., 2007, էջ 303-304.*

Միայն մեկ տարվա ընթացքում կոլտնտեսությունների թիվը 225 հազ.-ից կրճատվեց մինչև 125 հազ.-ի, իսկ արդեն 1952 թ.⁸ մինչև 94 հազ.-ի:

Չորրորդ հնգամյակի վերջում՝ 1950 թ., հողօգտագործման գլխավոր բնագավառները հիմնականում վերականգնվեցին, գյուղատնտեսության արտադրանքի ամբողջ ծավալը 1950 թ. կազմում էր 1940 թ. 97 %-ը: Բայց գերազանցել նախապատերազմյան մակարդակը ամբողջությամբ չհաջողվեց⁸:

Մինչդեռ այլ էր վիճակն արդյունաբերության ոլորտում: Չնայած խորհրդային տնտեսությունը մի շարք չափանիշներով ժառանգել էր ռազմական տնտեսության ժամանակներին բնորոշ գծերը, բայց, այնուամենայնիվ, այստեղ առաջընթացը նկատելի էր:

Ընդհանուր առմամբ հետպատերազմյան առաջին հնգամյակը (1946-1950 թթ.) հատկապես արդյունաբերության բնագավառում կատարվեց: Դեռ ավելին, 1952 թ. նոր հնգամյա պլանի մշակման համար ստեղծված հանձնաժողովը՝ Վ. Մոլոտովի, Լ. Կազանովիչի, Ա. Միկոյանի, Մ. Սաբուրովի և Ի. Բենեդիկտովի մասնակցությամբ, Ի. Ստալինին ներկայացրին երկրի տնտեսության զարգացման 5-րդ հնգամյա պլանի (1951-1955 թթ.) դիրեկտիվները⁹, որն էլ մշակակում էր, որ երկիրը մուտք էր գործել տնտեսության զարգացման նոր ժամանակաշրջան:

Խորհրդային Միությունը, նրա բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, հաղթահարելով պատերազմի պատճառած վնասները, ձեռնամուխ եղան լուծելու այնպիսի խնդիրներ, որոնք կոչված էին դիմակայելու կապիտալիզմի հետ այժմ արդեն նոր մրցակցությանը և նոր մարտահրավերներին:

2. ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՐԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ «ՄԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Միության և նրա դաշնակիցների հաղթանակը Ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ համաշխարհային մշակակություն ունեցող իրադարձություն էր: Միլիոնավոր մարդիկ հավատում էին, որ ահավոր պատերազմից հետո իրենց սպասում է խաղաղ և հանգիստ կյանքով՝ ապրելու ժամանակաշրջան: Սակայն հետագայում թե՛ երկրում, թե՛ միջազգային հարաբերություններում նոր իրողություններ

⁸ Տե՛ս *Новейшая история России 1914-2008, М., 2008, էջ 328:*

⁹ Տե՛ս *Новейшая история Отечества XX век, Т. 2, М., 1999, էջ 240-241:*

դրսևորվեցին, որոնք իրենց հետքը և կնիքը դրեցին հետպատերազմյան ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքի բոլոր ոլորտների վրա: Դեռ ավելին, պատերազմի ավարտի պահին արդեն մեծանում էր անվստահությունը դաշնակից երկրների միջև, որն առավել մեծ ուժով և ընդգծված ձևով դրսևորվում էր ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև: Իրականում խոսքը վերաբերում էր հետպատերազմյան շրջանում աշխարհում ուժերի նոր հարաբերակցության, ուժի ցուցադրության, ազդեցության նոր ոլորտների ձևավորման մասին: Փաստորեն երկու համակարգերի՝ կապիտալիզմի և սոցիալիզմի միջև մղվող պայքարը, հակամարտությունները, որոնց արմատները գալիս էին դեռևս 1917 թ., սակայն հետին պլան էին մղվել երկրորդ աշխարհամարտի ժամանակ, այժմ արդեն՝ պատերազմից հետո, դրսևորվեցին նոր ուժով:

Դեռևս 1945 թ. հուլիսի 16-ին՝ Պոտսդամի կոնֆերանսի նախօրյակին, հույժ գաղտնի պայմաններում ԱՄՆ-ը պայթեցրեց աշխարհում առաջին ատոմային ռումբը, որը հավասար էր 20 հազար տոննա սովորական պայթուցիկի հզորության¹⁰, որն էլ ավելի ուշ՝ օգոստոսի 6-ին և 9-ին, օգտագործվեց ճապոնական երկու քաղաքների՝ Հիրոսիմայի և Նագասակիի ռմբակոծման ժամանակ: Դրա նպատակն էր ուժեղացնել ամերիկյան դիվանագիտության դիրքերը հետպատերազմյան աշխարհի ձևավորման գործում:

Բնական է, որ Խորհրդային Միությունն ամեն ինչ պետք է աներ այդ առավելությունը վերացնելու համար, մանավանդ, որ դեռևս պատերազմի տարիներին Ստալինի ցուցումով այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքներ էին տարվում: Բավական է ասել, որ ԱՄՆ-ի ատոմային զենքի մենաշնորհը երկար կյանք չունեցավ, և 1949 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ-ում ևս կատարվեց ատոմային ռումբի փորձարկում: Փոխադարձ անվստահությունը երկու համակարգերի միջև հանգեցրեց միջազգային հարաբերություններում մի նոր իրողության՝ ռազմական մրցակցության, որն էլ նշանակում էր, որ այժմ էլ մարդկությունը մուտք էր գործում «սառը պատերազմի» ժամանակաշրջան:

Պատմագիտության մեջ իշխում է այն տեսակետը, որ «սառը պատերազմի» սկիզբը կապված է 1946 թ. մարտի 5-ին Անգլիայի նախկին վարչապետ Ուինստոն Չերչիլի՝ ամերիկյան Ֆուլտոն քաղաքում ԱՄՆ-ի

¹⁰ St 'u B. A. Шестаков, *Новейшая история России*, М., 2007, էջ 287-288; *Новейшая история России 1914-2008*, М., 2008, էջ 329-330:

նախագահ Հարրի Տրումենի ներկայությամբ արտասանած ճառի հետ, որտեղ նա կոչ էր անում անգլախոս աշխարհին միավորվել և ռուսներին ուժ ցուցադրել: Նրա ճառը հավանության արժանացավ ԱՄՆ-ի նախագահի կողմից, որն էլ, դեռևս պատերազմը չավարտված, ԱՄՆ-ի կոնգրեսին հղած իր ուղերձում հիմնավորում էր այն գաղափարը, որ հաղթանակը Նրկլորդ աշխարհամարտում ամերիկյան ժողովրդին դրել է աշխարհը կառավարելու անհրաժեշտության առաջ: Իսկ արդեն 1947 թ. մարտի 12-ին կոնգրեսում հանդես եկավ ճառով, որը պատմության մեջ մտավ «Տրումենի դոկտրինա» անունով: Նրա մեջ ևս առաջ էր քաշվում այն գաղափարը, որ ԱՄՆ-ն այսուհետ ևս օգնություն ցույց կտա այն երկրներին, որոնք պատրաստ են դիմակայելու ԽՍՀՄ-ին ու նրա սպառնալիքներին: Եվ հենց այդ ժամանակից էլ Արևմուտքն անհանգստացած, որ Արևելյան Եվրոպան ընկնում է խորհրդային ազդեցության տակ և խորհրդայնանում է, սկսեց պայքար ծավալել ԽՍՀՄ-ի և կոմունիզմի դեմ: Այդ պայքարի գլխավոր ու հիմնական ձևն էլ դարձավ ԱՄՆ-ի պետքարտուղար Մարշալի պլանը, որը նախատեսում էր տնտեսական, ֆինանսական օգնություն ցույց տալ այն երկրներին, որոնց տնտեսությունը տուժել էր և ավերվել պատերազմի տարիներին:

1947 թ. հունիսի 5-ին ԱՄՆ-ը հրապարակեց հատկապես ֆաշիստական ագրեսիայից տուժած երկրներին օգնություն ցույց տալու ծրագիրը: Ծրագիրը պաշտոնական նպատակ էր հայտարարում Եվրոպայի սոցիալ-տնտեսական իրադրության կայունացումը, բայց իրականում այն հետապնդում էր Արևելյան Եվրոպայում ԽՍՀՄ-ի ազդեցության թուլացման և Արևմտյան Գերմանիան իր դաշինքի մեջ ներգրավելու նպատակ: Դժվար չէ տեսնել, որ ԱՄՆ-ն այդ քայլերով ոչ միայն ցանկանում էր կանխել կոմունիզմի վտանգը, այլև, օգտվելով ուժերի նոր հարաբերակցությունից, ցանկանում էր աշխարհում ունենալ նոր դերակատարություն: Իսկ այն հարցին, թե ինչպիսի արձագանք գտավ ԽՍՀՄ-ում Չերչիլի հանրահայտ Ֆուլտոնյան ելույթը, պետք է պատասխանել, որ 1946 թ. մարտի 13-ին Ստալինը «Պրավդա» թերթին տված հարցազրույցում այդ կապակցությամբ հայտարարեց, որ Չերչիլն այժմ արդեն կանգնած է պատերազմ հրահրողների դիրքերում, և որ նա այս հարցում միայնակ չէ և ունի բարեկամներ ոչ միայն Անգլիայում, այլև ԱՄՆ-ում¹¹:

Նման հարցադրումն ուներ, անշուշտ, որոշակի հիմքեր: Այդ տեսակետից տեղին է վկայակոչել անգլիացի հայտնի պատմաբան Ջոն

¹¹ *St 'u Новейшая история России 1914-2008. М., 2008, էջ 330:*

Գրինվիլի տեսակետը հետպատերազմյան աշխարհի վերաբերյալ: Նա իր համրահայտ «История XX века. Люди, события, факты» (М., 1999) աշխատության մեջ այն միտքն է առաջ քաշում, որ հակասությունը երկու համակարգերի միջև օբյեկտիվ իրողություն էր: Միաժամանակ, գնահատելով Տրումենի դոկտրինան և Մարշալի պլանը, նա այն տեսակետն է զարգացնում, որ դրանց օգնությամբ Արևմուտքը փորձում էր վիճարկել Խորհրդային Միության գերիշխանությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում: Ելնելով դրանից՝ հեղինակն իրավացիորեն հարց է բարձրացնում այն մասին, որ ԽՍՀՄ-ը ևս իրավունք ուներ ապահովելու իր անվտանգությունը, մանավանդ, որ հաղթանակը ձեռք էր բերվել հսկայական մարդկային և նյութական կորուստների գնով՝ ուստի նա պարտավոր էր վնասագերծել իրեն կապիտալիստական Արևմուտքի հնարավոր հարձակումներից¹²:

Գնահատելով արևմտյան և խորհրդային, հետխորհրդային պատմագիտության տարբեր մոտեցումները «սառը պատերազմի» նկատմամբ՝ անհրաժեշտ է ընդգծել, որ կողմերից յուրաքանչյուրը հարցերի քննարկմանը մոտենում էր ելնելով իր պետության շահերից ու դիրքերից:

Սակայն ճշմարտությունը նաև այն է, որ դաշնակից երկրները՝ հատկապես Անգլիան, Ֆրանսիան ու ԱՄՆ-ը խախտեցին Պոտսդամի կոնֆերանսի (1945 թ. հուլիսի 17-օգոստոսի 2) որոշումները. նախ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան 1946 թ. միացրին իրենց ազդեցության գոտիները՝ ստեղծելով մեկ միասնական գոտի՝ քիզոնա, որին էլ 1948 թ. միացավ Ֆրանսիական ազդեցության գոտին, արդյունքում ձևավորվեց տրիզոնա, և առաջացան երկու գերմանական պետություններ՝ Ֆեդերատիվ Գերմանիան և Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը: Այդ քայլով պառակտումը նախկին դաշնակիցների միջև էլ ավելի խորացավ: Արդյունքում 1949 թ. ապրիլին Վաշինգտոնում ձևավորվեց Հյուսիսատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ-ն, որի մեջ ԱՄՆ-ի հետ միասին միավորվեց 11 պետություն: Ի պատասխան ԱՄՆ-ի և Արևմուտքի այդ քայլին՝ ԽՍՀՄ-ը սոցիալիստական երկրների հետ 1949 թ. ստեղծեց նախ Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը (ՏՓԽ), ապա՝ 1955 թ. Վարշավայի պայմանագիրը՝ որպես սոցիալիստական ռազմական մարմին: Դրանից հետո ավելի անգլիզում դարձավ պայքարը երկու հակադիր համակարգերի՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև: Դեռ ավելին, այդ հակա-

¹² Տե՛ս, *Дж. Гринвилл, История XX века. Люди, события, факты, М., 1999, էջ 377:*

մարտությունները, ռազմական մրցավազքը, միմյանց նկատմամբ փոխադարձ անվստահությունը երբեմն վեր էր ածվում իրական՝ «տաք» պատերազմի:

Խոսքը հատկապես վերաբերում է 1950-1953 թթ. Կորեական պատերազմին, որի մեջ ներքաշվեցին նաև ԽՍՀՄ-ը և Չինաստանը, ինչպես նաև ՄԱԿ-ի դրոշի ներքո հանդես եկող ևս 15 երկրներ՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Պատերազմը կրում էր ձգձգված բնույթ և նույնիսկ սպառնում էր վերածվել համաշխարհային: Սակայն, 1951 թ. հուլիսի 9-ին սկսված խաղաղ բանակցությունները կրակը դադարեցնելու մասին շարունակվեցին և, ի վերջո, ավարտին հասցվեցին Ստալինի մահից հետո՝ 1953 թ. հուլիսի 27-ին՝ պահպանելով ստատուս քվոն, այսինքն՝ դեռևս 1948 թ. ձևավորված և 38-րդ հորիզոնականով բաժանված Հյուսիսային և Հարավային Կորեաները:

Դիշտ է՝ պատերազմն ի վերջո ավարտվեց՝ պատճառելով մարդկային և նյութական կորուստներ, բայց կորեական հարցը չլուծվեց, միացյալ կորեական պետություն չստեղծվեց:

Եվ անկախ պատերազմի ավարտից՝ «սառը պատերազմի» քաղաքականությունը երկու համակարգերի միջև շարունակվեց, որն իր հերթին խթանում էր ռազմական մրցավազքի ուժեղացմանը ողջ աշխարհում, որքան էլ որ Խորհրդային Միությունը, հատկապես 1950-ական թթ. կեսերից, սկսեց քարոզել կապիտալիզմի և սոցիալիզմի միջև խաղաղ համագործակցություն վարելու գաղափարը:

3. ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅՄԱՐԸ ԵՎ ՎԱՐՉԱՀՐԱՍՏԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Պատերազմի ավարտից հետո միլիոնավոր մարդիկ հույսեր էին կապում, որ երկրում կմեղմանան քաղաքական նկատառումներով մարդկանց հետապնդումները և կգնահատվեն այն գոհաբերությունները, որոնք կատարվել էին հանուն հաղթանակի: Սակայն, ցավոք, հետպալեռազմյան շրջանում էլ ավելի ամրապնդվեց ստալինյան վարչակարգը, և բռնությունները շարունակվեցին նոր ուժով: Իշխանական վերնախավում պայքար էր ծավալվում երկրի խնդիրների լուծման գործում ավելի մեծ դերակատարում ունենալու համար: Տեղի էին ունենում քաղաքական դեմքերի, ուժերի նոր վերադասավորումներ: Քայլեր էին կա-

տարվում վարչական ապարատի վերակառուցման, Ստալինի դերակատարության, նրա միանձնյա իշխանության ամրապնդման ուղղությամբ: Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ երկրում հաստատված «երկաթյա վարագույրը» բնակչության գերակշիռ մասի մեջ ստեղծել էր միանման մտածելու և հարմարվելու մթնոլորտ: Փաստորեն ստալինյան կառավարման համակարգը հասարակության մեծ մասի կողմից ընդունվում էր որպես տրված իրողություն, և մարդիկ շարունակում էին հավատալ նրա անսխալ և իմաստուն կառավարմանը՝ նրան վստահելով երկրի կառավարումը: Նման պայմաններում երկրում չկար և չէր կարող լինել իշխանություններին ընդդիմադիր որևէ ուժ:

Հաղթանակից հետո Ստալինը արդեն չունեւր ոչ միայն քաղաքական հակառակորդներ, այլ նաև ընդդիմադիր ուժեր: Բայց անգամ մեծագույն պայմաններում նա նույնիսկ իրեն հավատարիմ ուժերի, կադրերի չըջանում, այն է՝ իշխանական վերնախավում, ըստ իր նախասիրությունների, հաճախ նաև կամայականորեն, նորանոր վերադասավորումներ էր կատարում: Ստալինը նաև խորապես համոզված և հավատացած էր, որ խորհրդային կառավարման համակարգն ամուր է և կատարյալ: Նման մտածելակերպն իշխում էր ոչ միայն նրա մերձակա շրջապատում, այլ նաև գրեթե ողջ երկրում: Այդ հանգամանքին նպաստում էր նաև երկրում վաղուց հաստատված միակուսակցական համակարգը: Կարևոր էր նաև գաղափարական քարոզչությունը, որը մարդկանց թույլ չէր տալիս ունենալ այլընտրանքային մտածողություն: Եվ չնայած պատերազմի ավարտից անմիջապես հետո երկրի կառավարման կառույցներում և կադրային հարցերում որոշ փոփոխություններ կատարվեցին, այնուամենայնիվ, կառավարման համակարգը և աշխատանքի մեթոդները մնացին նույնը:

Ելույթ ունենալով 1946 թ. մարտին հրավիրված ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումում՝ Ստալինն առաջ քաշեց այն հարցը, որ քաղաքացիական պատերազմի ժամանակներից մնացած Ժողովրդական կոմիսարների ինստիտուտն այլևս չի համապատասխանում նոր պայմաններին, ուստի պետք է ենթարկել փոփոխությունների: Կենտկոմի պլենումից հետո հրավիրված ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն առանց քննարկելու ընդունեց նախորդ կառավարության հրաժարականը և հաստատեց նոր կառավարության կազմը, որն այսուհետ պետք է կոչվեր ոչ թե Ժողկոմխորհ, այլ Մինիստրների խորհուրդ: Այդ մարմնի նախագահ դարձավ

Ի. Ստալինը, նրա տեղակալներն էին Վ. Մ. Մոլոտովը, Լ. Պ. Բերիան, Ա. Ա. Անդրեևը, Ա. Ի. Միկոյանը, Ա. Ն. Կոսիգինը և ուրիշներ:

Նույն 1946 թ. մարտի վերջերին տեղի ունեցավ կառավարության ղեկավարի տեղակալների պարտականությունների բաշխում: Լ. Պ. Բերիային ատոմային մախագծի ղեկավարի պարտականությունների հետ միասին հանձնարարված էր ղեկավարել ներքին գործերի նախարարության, պետամվտանգության և պետական վերահսկողության աշխատանքները: Նման հսկայական պարտականությունների կատարումը և իրավասությունների ստանձնումը նրան, ըստ էության, դարձնում էր պետության երկրորդ ղեմքը՝ իրավունք տալով պաշտոնապես վերահսկել երկրի իշխանության ամբողջ ապարատը, լուծել ոչ միայն շարքային քաղաքացիների ճակատագրերը, այլև նրանց ճակատագրերը, ովքեր իր հետ միասին գտնվում էին մեկ հիերարխիական, ծառայական պաշտոնակարգության սանդղակում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ 1946 թ. մարտյան պլենումը, միաժամանակ հաստատեց Կենտկոմի քարտուղարության կազմը՝ բաղկացած 5 հոգուց՝ Ի. Ստալինի գլխավորությամբ և Գ. Մ. Մալենկովի, Ա. Ա. Ժդանովի, Ա. Ա. Կուզնեցովի և Գ. Մ. Պոպովի (Մոսկվայի կազմակերպության ղեկավար) մասնակցությամբ: Ա. Ա. Ժդանովը գլխավորում էր Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժինը, որի մեջ մտնում էին այնպիսի կարևոր բնագավառներ, ինչպիսիք են մամուլը, հրատարակչությունը, ուղիւն, կինոն, հեռագրական գործակալությունը, արվեստը, բանավոր պրոպագանդան, ագիտացիան, որը հզոր միջոց էր և լծակ մարդկանց գիտակցության, մտածողության, աշխարհայացքի վրա ազդելու և դրանց ցանկալի ուղղություն տալու գործում:

Ի. Ստալինը կյանքի վերջին տարիներին զգալի չափով նպաստել է Ն. Ս. Խրուշչովի ծառայական աճին: 1949 թ. Ն. Ս. Խրուշչովը դարձավ Մոսկվայի մարզկոմի առաջին քարտուղար և Կենտկոմի քարտուղար: 1952 թ. հոկտեմբերին կուսակցության 19-րդ համագումարում հիմնական զեկուցողները Ն. Ս. Խրուշչովը և Գ. Մ. Մալենկովն էին: Հետաքրքիր է ասել, որ համագումարում Ստալինը բավարարվեց 7 րոպեանոց ելույթով: Համագումարն ընդունեց որոշում ՀամԿ(բ)Կ-ն վերանվանելու ԽՄԿԿ-ի՝ պատճառաբանելով, որ կուսակցության երկակի անվանումը՝ «բոլշևիկյան» և «կոմունիստական», առաջացել է պայմանականորեն՝ մենշևիկների դեմ պայքարում, և քանի որ այդ հարցն արդեն լուծված է (նկատի ունի մենշևիկների վերացումը – Հ. Ա.), ուստի կուսակցության կրկնակի անվանումը կորցրել է իր իմաստը: Միաժամա-

մակ 19-րդ համագումարն ընդունեց որոշում, որ Կենտկոմի Քաղբյուրոյի փոխարեն անհրաժեշտ է ստեղծել Կենտկոմի մախազահություն: Նախագահությունը կուսակցության մոր ղեկավար մարմինն էր, որը կազմված էր 36 անդամներից և անդամության թեկնածուներից:

Կուսակցության բյուրոկրատական ապարատի ձևավորման մասին է խոսում այն փաստը, որ Ստալինի մախաձեռնությամբ Կենտկոմի մախազահության կազմից առանձնացվեցին 7 հոգի (որն ի դեպ չէր մախատեսվում ո՛չ կուսակցության կանոնադրությամբ և ո՛չ էլ որևէ այլ կուսակցական փաստաթղթով), որից էլ ստեղծվեց Կենտկոմի մախազահության բյուրո: Դրա մեջ, բացի Ստալինից, մտան մահ Լ. Պ. Բերիան, Ն. Ա. Բուլգանինը, Կ. Ե. Վորոշիլովը, Լ. Մ. Կազանովիչը, Մ. Ջ. Մաբուրովը և Ն. Ս. Խրուշչովը: Նման քայլերով Ստալինը ցանկանում էր թուլացնել իր համախոհների դիրքերը՝ կատարելով անընդհատ փոփոխություններ, կադրերի տեղաշարժեր, դրանց զուգահեռ մահ ձերբակալություններ, որոնք նպատակ ունեին կանխելու և թուլացնելու իշխանության համար անթաքույց պայքարող ուժերին: Այդ նպատակով հաճախ արհեստականորեն հնարվում, ինչպես ասվում է, «թխվում» էին ինքնաբացահայտման, զաղտնագերծման միջոցով տարբեր կարգի վնասարարական գործեր, որոնցից մեկը հայտնի է «Լենինգրադյան գործ» անունով:

1949-1952 թթ. Լենինգրադում և մարզում աշխատանքից ազատվեցին ավելի քան 2000 պատասխանատու աշխատողներ:

Օգտագործելով Ստալինի չափից ավելի կասկածամտությունը՝ Մալենկովի մախաձեռնությամբ հնարվեց «Լենինգրադյան գործը», որով կուսակցական ղեկավարությունը փորձում էր ցույց տալ, որ Լենինգրադում գոյություն ունի ղեկավար կադրերի կազմակերպված մի խումբ, որը զաղտնի գործունեություն է ծավալում երկրի ղեկավարության նկատմամբ: Դրա արդյունքում 1950 թ. հոկտեմբերի 1-ին «Լենինգրադյան գործի» զոհը դարձան և զնդակահարվեցին Ա. Ա. Կուզնեցովը, Մ. Ի. Ռոդիոնովը, Ն. Ա. Վոզնեսենսկին և ուրիշներ: Առավել սարսափելին այն էր, որ այդ առիթով ձերբակալությունները և զնդակահարությունները շարունակվեցին 1951-1952 թթ.: Ընդհանուր առմամբ «Լենինգրադյան գործով» զնդակահարվեցին 26 հոգի, իսկ 10 հոգի մահացան հարցաքննությունների ժամանակ, ճամբարներում կամ էլ ինքնասպան եղան: Իսկ հարյուրավոր մարդիկ, թվով մոտ 300 հոգի՝ ղեկավար կադրերից, դատապարտվածների ընտանիքների անդամներից և ուրիշներ, ազատագրվեցին ընդհուպ մինչև 25 տարի:

«Լենինգրադյան գործը» կրկին առիթ դարձավ, որ նոր ուժով շարունակվեն ձեռքակալությունները և նորից ստեղծվեն արհեստական գործեր՝ մարդկանց սարսափի մեջ պահելու համար: 1951-1952 թթ. Ստալինի դրդումով և սադրանքով Վրաստանում մերկացվեց, այսպես կոչված, «մեզրեկական ազգայնական կազմակերպությունը», որը ղեկավարում էր Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Մ. Բարամիան, ով իբր իր առջև նպատակ էր դրել վերացնել խորհրդային իշխանությունը Վրաստանում: Բնական է, որ դրան հետևեցին նոր ձեռքակալություններ, նոր հետապնդումներ և այլն: Իսկ արդեն 1952-1953 թթ. ձեռքակալությունների ենթարկվեցին մի շարք անվանի բժիշկներ, ովքեր համարվում էին երկրի առողջապահության «ծաղիկը»: Դրանց շարքում էին պրոֆեսորներ Վ. Ն. Վինոգրադովը, Մ. Ս. Վովսկին, Բ. Բ. Կոզանը և ուրիշներ: Ստալինը նույնիսկ թույլ տվեց, որ նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրվի: Ստեղծվեց այսպես կոչված «բժիշկների գործը», որում նշվում էր, որ բժիշկները ցանկանում էին առաջին հերթին խորհրդային առանձին գործիչների, հատկապես՝ ռազմական բնագավառի, առողջությունը քայքայել, նրանց շարքից հանել և դրանով վտանգել երկրի պաշտպանությունը:

Դեռ ավելին, «բժիշկ-վնասարարներին» մեղադրում էին նաև նրանում, որ նրանք հանդիսանում են օտարերկրյա հետախուզության վարձկաններ և այլն:

1953 թ. փետրվարին «բժիշկների գործով» ձեռքակալվածների թիվը հասնում էր 37-ի: Սակայն իրականությունը նաև այն էր, որ «բժիշկների գործը» աստիճանաբար սկսեց կրել հակահրեական, հակասեմիտական բնույթ:

Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահությունը դեռևս 1948 թ. հունիսի 2-ի գաղտնի հրամանագրով նախատեսում էր երկրի հեռավոր շրջաններ արտաքսել հսկայական թվով աշխատավորների, հատկապես գյուղացիների, ովքեր իբր խուսափում էին աշխատանքից և վարում էին խորհրդային կարգերին ոչ վայել, անհարիր կյանք: Կուսակցության Կենտկոմի գաղտնի նամակում, որն ուղղված էր տեղական բոլոր կուսակցական կոմիտեներին, ասվում էր այն մասին, որ իբր երկրի կոլտնտեսականների մի զգալի մասը՝ 14,8 % կամ ավելի քան 4 մլն. մարդ, չեն կատարել իրենց աշխատանքային մինիմում նորմերը՝ աշխատօրը, իսկ 300 հազար կոլտնտեսականներ էլ ընդհանրա-

պես չեն աշխատել կոլտնտեսություններում¹³։ Իսկ ընդհանուր առմամբ 1948-1953 թթ. ընթացքում Սիբիր, Կարելիա, Հեռավոր Արևելք արտաքսվեցին ավելի քան 33 հազար մարդ, որին հետևեց նաև նրանց ընտանիքի անդամների՝ թվով 13 հազար մարդու աքսորը։ Դիմելով նման քայլերի՝ Ստալինը հետապնդում էր նաև մեկ այլ նպատակ. պատժելով այդ մարդկանց՝ նախագգուշացնել մյուսներին։

Ստալինի աշխատատեղում կարևոր տեղ էր գրավում նաև գաղափարական աշխատանքը, մարդկանց դաստիարակումը կուսակցության նկատմամբ նվիրվածությամբ։ Նրա թելադրանքով ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնցում քննադատվում էին Արևմուտքի բարքերը, նրանց առջև խոնարհվելը, արժեքներին տուրք տալը, կոսմոպոլիտիզմով՝ աշխարհաքաղաքացիությամբ տառապելը և այլն։

1946-1948 թթ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմը մի շարք որոշումներ ընդունեց գրականության, արվեստի, թատրոնի, երաժշտության և այլնի մասին (մասնավորապես Մոսկվայում հրատարակվող «Նոր աշխարհ» («Новый мир»), Լենինգրադում հրատարակվող «Ձվեգդա», «Լենինգրադ» ամսագրերի, դրամատիկական թատրոնների խաղացանկերի, «Մեծ կյանք» կինոնկարի, Վ. Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին), որոնցում քննադատության էին ենթարկվում խորհրդային մի շարք ստեղծագործողներ, մշակույթի գործիչներ՝ Աննա Ախմատովան, Մ. Զոդչենկոն, Վ. Մուրադելին, Ա. Դոլժենկոն և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները որակվում էին որպես անսկզբունք, գաղափարագուրկ և այլն։ Նման գնահատականը նշանակում էր, որ գաղափարախոսության և հոգևոր կյանքի, մշակույթի ոլորտում շարունակում էր իշխել կուսակցական վերնախավի աշխատանքը։

Քաղաքական, գաղափարական կյանքի մյուս առանձնահատկությունն այն էր, որ մի շարք հարցերի վերաբերյալ՝ բնագիտություն, փիլիսոփայություն, լեզվաբանություն, քաղաքատնտեսություն և այլն, անցկացվեցին քաղաքական բանավեճեր, որոնց նպատակը վերջին հաշվով խորհրդային գիտության մեծարումը և գովաբանումն էր։ Միաժամանակ այդ բանավեճերը հիմք հանդիսացան, որ Ստալինը գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ ասի իր հեղինակավոր և որոշիչ խոսքը։ Այդ հարցում գավեշտականն այն էր, որ նույնիսկ որոշ ճանաչված գիտնականներ, ակադեմիկոսներ սկսեցին մեծարել երկրի առաջնորդին իր

¹³ См. у В. А. Шестаков, *Новейшая история России, М., Владимир, 2008, էջ 307*։

հանճարեղ մտքերի համար, սոցիալիզմի առավելությունները կապիտալիզմի նկատմամբ համոզիչ կերպով ցույց տալու և համոզելու համար:

Դժվար չէ տեսնել, որ Ստալինն այդ ամենը կատարում էր՝ ապացուցելու բոլորին, որ երկրի կառավարման գործում իր վարած կուրսը, քաղաքականությունն անսխալական է: Եվ վերջապես, այդ ամենը նշանակում էր, որ Ստալինի պաշտամունքը, հատկապես հետպատերազմյան շրջանում, հասել էր իր գագաթնակետին: Երկրի գրեթե բոլոր ուժերը, առավել ևս գիտության, արվեստի, մշակույթի, գրականության ոլորտի աշխատողները, ստեղծագործողները կարծես թե իրար հետ մրցակցում էին Ստալինին մեծարելու, գովերգելու և գովաբանելու դափնին իրենց ձեռքում պահելու համար:

Մինչդեռ իրականությունն այն էր, որ երկրում ստեղծված լարված, վախի մթնոլորտը ի վերջո քիչ թե շատ հաղթահարվեց 1953 թ. մարտի 5-ին՝ Ստալինի մահից հետո, երբ երկիրը կանգնած էր ուղեբաժան, պատկերավոր ասած, ճանապարհների խաչմերուկում, անորոշության և երկրնտրանքի առջև: Շատ բան կախված էր նրանից, թե երկրի կառավարման դեկը, որ քաղաքական ուժի և ում ձեռքին կարող էր հայտնվել:

Գ Լ ՈՒ Խ 2

ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1953-1964 ԹԹ.)

1. ՊԱՅՔԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱԽԱՎՈՒՄ

Ստալինի մահից հետո Կրեմլում իշխանության համար մի նոր պայքար ծավալվեց: Ամբողջ խնդիրն այն էր, որ 1917 թ. սկսած, խորհրդային համակարգը չուներ երկրի ղեկավարի, առաջին դեմքի սահմանադրական փոփոխման մեխանիզմ: Ուստի հաճախ երկրի քաղաքական կուրսը փոխելու համար վերնախավը դիմում էր անդրկուլիսյան խարդավանքների և դավադրությունների: Միայն հետպատերազմյան տարիներին տեղի ունեցան ոչ պակաս, քան հինգ մասն դավադրություններ և մույնքան էլ՝ 1953-1964 թթ., որոնք հայտնի են մասնորպես խրուշչովյան կառավարման տարիներ: Բայց մինչ Ն. Ս. Խրուշչովի կողմից փաստական իշխանության հասնելը, Ի. Ստալինի մահվան պահին, 1953 թ. մարտի 4-ին, Գ. Մ. Մալենկովը և Լ. Պ. Բերիան սկսեցին կատարել որոշ պաշտոնների բաժանում: Եվ արդեն մարտի 6-ին կուսակցության 19-րդ համագումարի կողմից ընտրված Կենտկոմի նախագահությունը 36 անդամներից ու թեկնածուներից կրճատվեց մինչև 14-ի: Այդ քայլով իշխանությունից մեկուսացվում էին 1952 թ. առաջ քաշվածները: Գ. Մ. Մալենկովը ստացավ կառավարության ղեկավարի՝ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը՝ միաժամանակ ղեկավարելով մասն կուսակցության Կենտկոմի քարտուղարությունը: Լ. Պ. Բերիան նորից շարունակում էր ղեկավարել Ներքին գործերի և Պետական անվտանգության նախարարությունները: Վ. Մ. Մոլոտովը նորից վերադարձավ արտաքին գործերի նախարարություն՝ գլխավորելով այն: Հետաքրքիր է, որ միակ մարդը, որ այդ պահին ոչ մի պետական պաշտոն չստացավ, Խրուշչովն

էր: Նա կուսակցության Կենտկոմի քարտուղարությունում երկրորդն էր՝ Մալենկովից հետո: Ի դեպ Մալենկովը կանգնած էր երկրնորանքի առաջ՝ կամ ղեկավարել կառավարությունը, կամ՝ Կենտկոմի քարտուղարությունը: Ի վերջո մա գերադասեց ընտրությունը թողնել կառավարությանը, իսկ Կենտկոմի քարտուղարությունը՝ Խրուշչովին:

Առաջնորդի մահից հետո երկրի նոր ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց նախորդ տարիների չարաշահումներից ազատվելու համար:

1953 թ. մարտի 27-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից հայտարարվեց համաներսիւմ առաջին հերթին այն ազատագրկվածների համար, ովքեր դատապարտվել էին 5 տարի ժամկետով, և հատկապես այն անձանց համար, ովքեր չարաշահել էին իրենց պաշտոնական դիրքը, կատարել տնտեսական և այլ կարգի խախտումներ, հանցանքներ և այլն:

Ընդհանուր առմամբ նախատեսվում էր ազատագրկման տեղերից ազատել 1.203.421 մարդու, ինչպես նաև դադարեցնել 400.120 մարդու հետաքննությունը: Բայց ի վերջո 1953 թ. օգոստոսի 10-ի «Համաներման մասին» որոշումով ազատվեցին ավելի քան 1 մլն. բանտարկյալներ¹⁴: Սակայն այդ համաներումը չէր տարածվում քաղբանտարկյալների վրա՝ տրոցկիստներ, էսեռներ, ազգայնականներ: Իրականում բանտերից, աքսորից ազատվեցին հիմնականում հանցագործ տարրեր, ովքեր երկրի մի շարք քաղաքներում, հատկապես Մոսկվայում, ստեղծեցին քրեածին մթնոլորտ:

Բոլոր դեպքերում ստալինյան հետապնդումների հետևանքով անազատության մեջ գտնվողների մեծ մասը շարունակում էր մնալ բանտերում և աքսորում: Նրանց համաներման հարցը կապված էր արդեն կուսակցության 20-րդ համագումարի հետ:

Իսկ մինչ այդ կատաղի պայքար էր գնում Ն. Խրուշչովի և Լ. Բերիալի միջև: Լ. Պ. Բերիան Ստալինի մահից հետո քայլեր էր ձեռնարկում հանրության առջև որպես լիբերալ, բարեփոխիչ հանդես գալու համար: Նա կուսակցության և Կենտկոմի Նախագահության քննարկմանը ներկայացրեց երկրում ձևավորված հարկադրական աշխատանքի համակարգը (ГУЛАГ) վերացնելու առաջարկը՝ ելնելով նրանից, որ այն տնտեսապես անարդյունավետ է և անհեռանկարային:

Ընդհանրապես Բերիալի յուրաքանչյուր նախաձեռնություն, սկսած մարդկանց նկատմամբ հարկադրանքի, ֆիզիկական բռնություններ կի-

¹⁴ См. в Новейшая история России 1914-2008, М., 2008, էջ 347:

րառելու արգելումից մինչև ԽՍՀՄ քաղաքացիների իրավունքների վերականգնումը և այլն, նրա շրջապատի կողմից դիտվում էր որպես իշխանությունը զավթելու փորձ: Այդ ամենը կանխելու համար էլ նրա նկատմամբ որոշակի քայլեր ձեռնարկվեցին: Իսկ այդ հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ Բերիան Ստալինից հետո ավելի շատ մեղսակցություն ուներ տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց անտեղի մեղադրելու, կյանքից զրկելու և տարբեր կարգի պատիժներ կիրառելու գործում: Նրան քաղաքական ասպարեզից հեռացնելու, իր արածների համար պատասխան տալու գործում ավելի մեծ դերակատարություն ունի Ն. Ս. Խրուշչովը, որի ակտիվ նախաձեռնությամբ ու մասնակցությամբ էլ տեղի ունեցան Բերիայի ձերբակալությունը և դրան հաջորդած իրադարձությունները: Եվ հենց Բերիայի վտանգից պաշտպանվելու համար էլ որոշ ժամանակով տեղի ունեցավ Ն. Խրուշչովի, Գ. Մալենկովի և մեծ հեղինակություն վայելող բարձրաստիճան գինվորականներ մարշալ Գ. Կ. Ժուկովի, գեներալ Կ. Ս. Մոսկալենկոյի և մյուսների մերժեցումը:

1953 թ. հունիսի կեսերին Բերիան Կրեմլյան դեկավարության կողմից ուղարկվեց Արևելյան Բեռլին, որտեղ այն ժամանակ սկսվել էին հակակառավարական ելույթներ: Եվ հենց հաջորդ օրը՝ հունիսի 26-ին, երբ Բերիան վերադառնում էր Բեռլինից, դավադիրների մի խմբի նախաձեռնությամբ էլ հրավիրվեց Կենտկոմի նախագահության արտահերթ նիստ, որտեղ էլ համապատասխան հրամանից հետո էլ Ժուկովը և Մոսկալենկոն ձերբակալեցին նրան: Ըստ էության, ինչպես գրում է պատմաբան Վ. Ա. Շեստակովը, դա դավադրություն էր Քաղբյուրոյի անդամների մեծամասնության մասնակցությամբ՝ ուղղված իրենց անդամներից մեկի դեմ¹⁵:

Հետաքրքիր է, որ ԽՄԿԿ Կենտկոմին ուղղված բանտում գրած իր մամակում Բերիան խոստանում էր 2-3 տարում ուղղվել՝ իրեն համարելով Լենինի և Ստալինի կուսակցության մվիրյալ զավակը: Նա նաև ադերսում էր Մալենկովին և մյուսներին խառնվել այդ գործին և իրենց անմեղ, հիմ ընկերոջը չկործանել: Հասկանալի է, որ Բերիայի մամակադերսը որևէ ներգործություն կամ ազդեցություն չունեցավ, և 1953 թ. դեկտեմբերի 23-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի հատուկ դատական նիստի որոշմամբ նա գնդակահարվեց՝ զրկվելով գինվորական կոչումներից և պարգևներից¹⁶:

¹⁵ *Տե՛ս Բ. Ա. Шестаков, Новейшая история России, М., Владимир, 2008, էջ 322:*

¹⁶ *Տե՛ս Новейшая история России 1914-2008, М., 2008, էջ 349:*

Նույն ձևով վարվեցին նաև Բերիայի նախորդների՝ Յագոդայի և Եժովի հետ, ովքեր նույնպես մեղադրվում էին բազմաթիվ անմեղ մարդկանց ձեռքակալելու, մահապատիժների ենթարկելու և այլ անօրինակամոթյունների մեջ:

Այդ ամենին հակառակ նոր ղեկավարության կազմում գնալով ուժեղանում էին Խրուշչովի դիրքերը, որն էլ ԽՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումում ընտրվեց կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար:

Բարձր էր նաև Գ. Մ. Մալենկովի հեղինակությունը, որը Ստալինի ամենաերիտասարդ և ամենակիրթ «ժառանգորդներից» էր: Նա օտարերկրյա դիտորդների կողմից եղած լիդերների շարքում գնահատվում էր որպես առավել արևմտամետ կողմնորոշում ունեցող մտածող և գործիչ:

Մալենկովն ավտորիտար իշխանության հակառակորդ էր: Մակայն խնդիրն այն էր, որ նա դեմ էր անցյալի սխալները հրապարակավ քննարկելուն՝ գտնելով, որ գլխավորն այն է, որ այլևս չի կարելի կրկնել նախկին սխալները:

1953 թ. օգոստոսին հրավիրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Գ. Մ. Մալենկովը շարադրեց իր նոր մոտեցումները երկրի տնտեսական քաղաքականության հարցում, որը ենթադրում էր ավելի մեծ ուշադրություն դարձնել սպառողական ապրանքների արտադրությանը, աշխատավորների կենսամակարդակի բարձրացմանը և այլն: Իսկ դա նշանակում էր, որ երկրի ուժերը, միջոցներն ավելի շատ պետք է ուղղվեին թեթև արդյունաբերության զարգացմանը՝ դրա փոխարեն կրճատելով ծանր արդյունաբերության բաժինը:

Որքան էլ, որ նման առաջարկն արտաքնապես հրապուրիչ էր թվում, բայց այն հնարավոր չէր իրականացնել, քանզի վաղուց արդեն հաստատված հնգամյա պլանով (1951-1955 թթ.) առաջնությունը տրվում էր ծանր արդյունաբերությանը:

Եվ քանի որ Բերիային վերացնելուց հետո Մալենկովն արդեն նախկին դերակատարությունը և հեղինակությունը չուներ, ուստի արդեն նախաձեռնությունն անցավ Ն. Ս. Խրուշչովի և նրա կողմնակիցների ձեռքը: 1955 թ. հունվարին տեղի ունեցավ ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը, որը մյուս հարցերի հետ միասին քննարկեց նաև Խրուշչովի գեկուցումը Մալենկովի մասին: Զեկուցման մեջ քննադատության էին ենթարկվում Մալենկովի ոչ ճիշտ վարքը, նրա հարաբերությունները Լ. Բերիայի և Քաղբյուրոյի մյուս անդամների հետ: Հատկապես ընդգծվում էին նրա քաղաքական անկայունությունը, անձնական, գործնական հարցերում

թերությունները: Խրուչովն իր ելույթում հատկապես կանգ առավ Մալենկովի՝ որպես կառավարության մախազահի գործունեության այնպիսի գծերի վրա, որոնք կապված էին Բերայի հետ մրա մեկուսանալուն, Քաղբյուրոն տրոհելուն և նույնիսկ երկրի ղեկավարության թիկունքում մրա հետ կառավարության նոր կազմ ձևավորելուն և այլ խնդիրների: Ելնելով այդ ամենից՝ Խրուչովը Կենտկոմի մախազահության անունից առաջարկեց Մալենկովին ազատել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի մախազահի պարտականություններից, որն էլ ընդունվեց միաձայն: Մալայն հարցի առանձնահատկությունն այն էր, որ Մալենկովին ամբողջովին չմեկուսացրին երկրի քաղաքական կյանքից: Նրան մշանակեցին էլետրաէներգետիկայի մախարար և կառավարության մախազահի տեղակալ: Մալենկովը մա ԽՍՀԿ Կենտկոմի մախազահության անդամ էր, իսկ երկրի կառավարությունը ղեկավարում էր Ն. Ա. Բուլգանինը:

Այսպիսով՝ Ն. Ս. Խրուչովը և մրա կողմնակիցներն իշխանության համար պայքարում կարողացան հաղթող դուրս գալ և երկրի պետական, քաղաքական ղեկը վերցնել իրենց ձեռքը: Այժմ արդեն անհրաժեշտ էին մոր քայլեր, մոր մոտեցումներ երկրի հետագա զարգացման, անցյալի բեռից ազատվելու և մոր վերափոխումներ կատարելու ուղղությամբ: Այդ հարցերի բարձրացումն էլ կապված է կուսակցության 20-րդ համագումարի և պատմությանը հայտնի «Խրուչովյան ձնհալի» հետ:

2. ԽՍՀԿ 20-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԽՐՈՒՇՉՈՎՅԱՆ «ՉՆՀԱԼԸ»

Ստալինյան անօրինականությունների բացահայտումը, Լ. Պ. Բերայի գործի դատապարտումը էլ ավելի բարձրացրին Ն. Ս. Խրուչովի հեղինակությունը երկրի կուսակցության առաջ, որի շնորհիվ մա կարող էր ավելի ազատ և անկաշկանդ գործել:

1955 թ. դեկտեմբերի 31-ին կուսակցության Կենտկոմի մախազահությունում տեղի ունեցավ բանավեճ 1930-ական թվականների ստալինյան բռնաճնշումների ենթարկվածների մասին: Խնդիր էր դրվում առաջին հերթին բացահայտել կուսակցության 14-րդ համագումարի կողմից ընտրված Կենտկոմի անդամների ճակատագիրը: Այդ նպատակով ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ կուսակցության Կենտկոմի քարտուղար Պ. Ն. Պոսպելովի մախազահությամբ, ուսումնասիրելու 1930-1940-

ական թվականների սկզբներին բռնաճնշումների ենթարկվածների բու-
լոր գործերը: Հանձնաժողովի առաջին իսկ քայլերը ցույց տվեցին, որ
Ստալինը անձամբ էր ղեկավարում զանգվածային բռնաճնշումները:
Դեռ ավելին, պարզվեց, որ Միութենական հանրապետություններին,
քաղաքներին, մարզերին կենտրոնից իջեցվում էին ձերբակալություն-
ների վերաբերյալ լիմիտներ, որոնք էլ հաստատվում էին անձամբ Ստա-
լինի կողմից: Նման փաստերի բացահայտումը անհրաժեշտություն էր
դարձնում այդ հարցը քննարկել կուսակցության 20-րդ համագումարում:
Այդ իմաստով, առանց չափազանցության, 20-րդ համագումարը Ն. Ս.
Խրուշչովի համար դարձավ նրա աստեղային ժամը, որով էլ երկրում
սկսվեց մի նոր՝ «ձնհալի» ժամանակաշրջան, երբ հրապարակավ կարե-
լի էր խոսել ստալինյան կառավարման տարիներին թույլ տված չարա-
շահումների, անօրինականությունների և սխալների մասին:

20-րդ համագումարն աշխատեց 1956 թ. փետրվարի 14-ից 25-ը:
Ն. Ս. Խրուշչովը համագումարի պատգամավորների և աշխարհի 55
երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներ-
կայացուցիչների առաջ հանդես եկավ կուսակցության Կենտկոմի հաշ-
վետվությամբ: Նա համագումարի մասնակիցներին ներկայացրեց այն
արձատական փոփոխությունները, որոնք տեղի էին ունենում Ստալինի
մահից հետո երկրի հասարակական-քաղաքական կյանքում, նրա ներ-
քին և արտաքին քաղաքականության բնագավառներում: Ներկայաց-
նելով երկրի տնտեսական ռազմավարությունը՝ Խրուշչովը առաջնային
նշանակություն էր տալիս գյուղատնտեսությանը, բնակարանային շի-
նարարությանը, առանձնացնելով այն ուղղությունները, որոնք նախա-
տեսում էին երկրի զարգացումը հերթական (վեցերորդ) հնգամյա պլա-
նով: Անդրադառնալով երկրի քաղաքական խնդիրներին՝ Խրուշչովը
սահմանափակվեց միայն հիշատակելով Լ. Բերիային՝ նրան անվանե-
լով «իմպերիալիզմի գործակալ», որը սողոսկելով հասել էր երկրի ղեկա-
վար դիրքերի: Միաժամանակ Ն. Խրուշչովը, զեկուցման մեջ դուրս
չգալով նախկին տարիների կառավարմանը բնորոշ աշխատանքից,
կրկին անդրադարձավ տրոցկիստների, բուխարինականների գնահա-
տականներին և ոճական նրանց որպես «ժողովրդի ռիսերիմ թշնամիներ-
ի» հոսանք:

Համագումարում ելույթ ունեցողների շարքում հատկապես առանձ-
նանում էր Ա. Միկոյանի ելույթը, որը քննադատեց Ի. Ստալինի կողմից
խմբագրված «ՀամԿ(բ)Կ պատմություն. Համառոտ դասընթաց» պաշ-
տոնական դասագիրքը, նշելով, որ նրանում կեղծվել են Անդրկովկասի և

Բաքվի կուսակցական կազմակերպությունների գործունեությունը: Նա միաժամանակ հայտարարեց, որ ստալինյան բռնաճնշումներին զոհ դարձած և «Ժողովրդի թշնամի» հայտարարված Վ. Ա. Անտոնով-Օվսենկոն և Ս. Վ. Կոսիորը ամենևին այդպիսին չեն եղել: Դրանով Ա. Միկոյանը արդարացրեց նրանց: Իսկ Մալենկովը և Կազանովիչը, որոնք ժամանակին անչափ մոտ են եղել և համագործակցել Բերիայի հետ, իրենց ելույթում դատապարտեցին, մերկացրին նրա գործունեությունը՝ անվանելով նրան «ֆաշիստական, ահաբեկչական խմբավորման» ղեկավար:

Սակայն կուսակցության 20-րդ համագումարի ամենակարևոր իրադարձությունը կուսակցության Կենտկոմի 1-ին քարտուղար Ն. Ս. Խրուշչովի «Անհամտի պաշտամունքը՝ նրա հետևանքները» զեկուցումն էր, որը նա կարդաց փետրվարի 25-ին համագումարի փակ նիստում, որն էլ հայտնի է որպես «գաղտնի զեկուցում»: Ի դեպ այդ զեկուցումը առաջին անգամ հրապարակվել և լայն հասարակության սեփականությունն է դարձել 1989 թ.:

Ն. Ս. Խրուշչովի զեկուցման հիմքում ընկած էին Պ. Ն. Պոսպելովի գլխավորած հանձնաժողովի նյութերը: Ընդ որում, հետաքրքրական է, որ Խրուշչովի ելույթը չի սղագրվել և քննարկվել:

1956 թ մարտի 5-ին կուսակցական բարձրագույն ղեկավարությունն ընդունեց որոշում Խրուշչովի խմբագրած ելույթը ներկայացնել երկրի բոլոր կոմունիստներին և կոմերիտականներին, ինչպես նաև անկուսակցական ակտիվին, բանվորներին, ծառայողներին, կոլտնտեսականներին: Նման որոշումը նախադեպը չունեցող երևույթ էր, որը նպատակ ուներ երկրի բնակչությանը մերձեցնել և հաղորդակից դարձնել բարձր քաղաքականությանը:

Ն. Ս. Խրուշչովի զեկուցումը հազեցված էր այնպիսի մանրամասներով, որոնք լսարանի համար անսպասելի էին: Ստալինն ունկնդիրներին ներկայացվում էր ոչ թե «բոլոր ժողովուրդների հայր», ինչպես ընդունված էր տասնամյակներ շարունակ, այլ որպես բռնակալ, մարդասպան: 1930-1950-ական թվականների սկզբներին երկրում տեղի ունեցած բոլոր հանցագործությունները բացարձակապես վերագրվում էին Ստալինին, նրա անձնական բնավորությանը, բայց ոչ կուսակցական ղեկավարությանը:

Սակայն անկախ այն հանգամանքից, որ նման գնահատականը միակողմանի էր և լիովին չէր բացահայտում անհատի պաշտամունքի ողջ էությունը, նրա սկզբունքներն ու արմատները, այնուամենայնիվ,

այն դարձավ շրջադարձային երկրի հասարակական կյանքի, քաղաքական մթնոլորտի ձևավորման բնագավառում: Ծշմարտություն է նաև այն, որ Խրուշչովը շրջանցում էր երկրի կուսակցական, ստալինյան ղեկավարության պատասխանատվության հարցը՝ սահմանափակելով այդ ամենը Ստալին-անհատով: Նման մոտեցումը բացատրվում է նրանով, որ Խրուշչովը խուսափում էր ասել ողջ ճշմարտությունը, քանզի ինքը ևս, ինչպես նաև նրա հետ շատ ղեկավարներ, մասնակիցը և ժամանակակիցն էին անհատի պաշտամունքի հետևանքով երկրում կատարված բռնություններին: Ասել ճշմարտությունը՝ նշանակում էր զրկվել իշխանությունից և պատասխան տալ երկրում կատարված անօրինականությունների համար:

Բայց այն, ինչ ասված էր թե՛ կուսակցության համագումարում և թե՛ մույն՝ 1956 թ. հունիսի 30-ին Կենտկոմի պլենումում, որը քննարկել է «Անհատի պաշտամունքի հետևանքները հաղթահարելու մասին» հարցը, ունկնդիրների վրա թողեց շատ ավելի ծանր տպավորություն: Խրուշչովը Ստալինին մեղադրեց նաև երկրի տնտեսության, հատկապես գյուղատնտեսության ետ մնալու, Հայրենական պատերազմի առաջին շրջանում պարտություններ կրելու, ազգային քաղաքականության բնագավառում կոպիտ սխալներ, բացթողումներ թույլ տալու և բազմաթիվ այլ արատների, անօրինականությունների մեջ:

Ի. Ստալինին մեղադրելով ամեն ինչում՝ Խրուշչովը դրանով ձգտում էր արդարացնել կուսակցությանը, սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարները, փորձել ցույց տալ, որ Ստալինը հեռացել էր մարքս-լենինյան գաղափարներից, լենինյան աշխատառճից, լենինյան քաղաքականության սկզբունքներից:

Դեռ է պատճառը, որ Խրուշչովը չխորացավ երևույթի պատճառների մեջ, ստալինյան կառավարման համակարգի էության, բնույթի մեջ: Սահմանափակվելով ստալինիզմը սոսկ անհատի պաշտամունք ներկայացնելով՝ Ն. Խրուշչովը կուսակցության 20-րդ համագումարում «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները» զեկուցման մեջ նշում է, որ պետք է բացառվի նման երևույթը, որը տեղ է գտել Ստալինի գործունեության տարիներին, որը լիովին անվստահություն էր դրսևորում կոլեկտիվ ղեկավարության նկատմամբ և բոլորի նկատմամբ թույլատրում էր կոպիտ բռնություն և գործում էր ոչ թե մարդկանց համոզելու, բացատրելու մեթոդով, այլ իր հարցապնդումները, համոզումները պարտադրում էր մարդկանց՝ պահանջելով անվերապահորեն ենթարկվել իր կարծիքին, իր կամքին: Իսկ ով կփորձեր հակադրվել կամ կփորձեր

ապացուցել իր տեսակետները, իր ճշմարտությունը, մա ոչ միայն հեռացվում էր կուսակցական ղեկավար պաշտոնից, այլ մաս ենթարկվում էր բարոյական և ֆիզիկական ոչնչացման: Բավական է ասել, որ Ստալինն էր, որ շրջանառության մեջ դրեց «ժողովրդի թշնամի» հասկացությունը, որն էլ ոչ թե պահանջում էր ապացուցելու, վիճարկելու իր ճշմարտությունը, այլ իրավունք էր տալիս, որ ով համաձայն չի Ստալինի հետ, ով կասկածում էր մրա մտադրությունների անկեղծությանը, ենթարկվում էր դաժան հետապնդումների, ռեպրեսիաների՝ շրջանցելով օրինականությունը:

Հասկանալի է, որ «ժողովրդի թշնամի» հասկացությունը բացառում էր որևէ գաղափարական պայքար, կամ էլ այս կամ այն հարցում սեփական տեսակետը արտահայտելու, պաշտպանելու հնարավորություն: Ն. Խրուշչովը համագումարում հատկապես թվարկեց այն պետական, կուսակցական, ռազմական գործիչներին, ովքեր դարձան ստալինյան բռնաճնշումների զոհ: Դրանց շարքում էին Մ. Ն. Տուխաչևսկին, Ի. Է. Յակիրը, Վ. Կ. Բլյուխերը, Ռ. Ի. Էյլենն, Յա. Է. Ռոդժուտակը, Պ. Պ. Պոստիշևը, Ս. Վ. Կոսիորը, Վ. Յա. Զուբարը, Ն. Ս. Վոզնեսենսկին և ուրիշներ:

Դժվար չէ տեսնել, որ նման աշխատառճը հիմք էր տալիս կուսակցական կառավարման համակարգի ավելի ստորին օղակներում աշխատող պաշտոնյաներին առանց դատի, ապացույցների հազարավոր անմեղ մարդկանց մեղադրել որպես «ժողովրդի թշնամի» և հաշվեհարդար տեսնել իրենց համար անցանկալի մարդկանց նկատմամբ:

Այսպիսով՝ Ն. Խրուշչովը, դատապարտելով ստալինիզմը, չէր դատապարտում համակարգը: Նա, փաստորեն, ընդհուպ մոտեցավ ստալինիզմին՝ որպես համակարգի քննադատություն, բայց ոչ լրիվ այդ արատները վերագրելով համակարգին: Նա Ստալինի սխալը տեսնում էր լենինյան քաղաքականությունը, աշխատանքում լենինյան մեթոդները խեղաթյուրելու մեջ՝ գտնելով, որ առավել ևս, երբ արդեն երկրում սոցիալիզմը հիմնականում կառուցված էր, հարկ չկար նման դաժան պատժամիջոցների դիմելու:

Երկրի, կուսակցության առաջ բարձրացնելով նման հարցեր՝ Ն. Խրուշչովը դրանով մոտեցավ մաս այն հարցին, թե ինչպես պետք է վերաբերվել կուսակցության ներսում և ընդհանրապես այլախոհների նկատմամբ, որը ինքնին արդեն կարևոր քայլ էր և առաջընթաց հետստալինյան ժամանակաշրջանում մոր մտածողության ձևավորման գործում:

Սակայն խնդրի հակասությունը կայանում էր նրանում, որ Ն. Խրուշչովն ավելի շատ հարցը, նրա քննարկումը հանգեցնում էր նրան, որ ովքեր այլ հայացքներ ունեին, նրանց նկատմամբ պետք է լինել մեղմ, համբերատար և լոյալ: Միաժամանակ Ն. Խրուշչովը գտնում էր, որ մարդիկ պետք է ենթարկվեն մեծամասնության կարծիքին և քննադատության ազդեցության տակ փոխեն իրենց հայացքները: Իսկ դա նշանակում էր, որ Ն. Խրուշչովը չէր կարող իրեն թույլ տալ մտածելու, որ մարդկանց փոքրամասնությունը կարող է ազատորեն իր կարծիքը հայտնել, որը կարող էր նույնիսկ ավելի ճիշտ լինել, քան մեծամասնության կարծիքը, ինչպես որ ընդունված էր:

Այսինքն՝ խոսել այլընտրանքային մտածողության՝ պլուրալիզմի (բազմազանության) մասին, երևի թե ժամանակավրեպ էր: Ն. Խրուշչովը, լինելով իր ժամանակի ծնունդը, այդպես էլ չկարողացավ ազատվել ստալինյան սխեմաների, կառավարման այդ ժամանակվա մեթոդներից, քանի որ իր հիշողություններում հետագայում գրում է, որ իրենք հեղափոխության ծնունդ էին և դաստիարակվել էին Ստալինի օրինակով, ուստի չկարողացան հոգեբանորեն վերափոխվել այնպես, որ կարողանային փնտրել, գտնել ինչ-որ արմատապես այլ որոշում և կուսակցությունը վերադարձնել կուսակցական դեմոկրատիայի (ժողովրդավարության) լենինյան ռելսերի վրա:

Ամբողջ ցավն այդ հարցում այն էր, որ Ժողովրդավարության փորձը, սովորույթները բավական թույլ էին, ձևախեղված, և այդ հարցում ևս դասակարգային մոտեցումներից այն կողմ թե՛ Ն. Խրուշչովը և թե՛ նրա մերձավոր շրջապատը չէր գնում:

Ճիշտ է, կուսակցության 22-րդ համագումարը (1961 թ.) կրկին դատապարտեց ստալինիզմը և որոշում ընդունեց Ի. Ստալինի դին Վ. Ի. Լենինի դամբարանից հանել, Ստալինգրադն էլ վերանվանել Վոլգոգրադ, երկրով մեկ նրա հուշարձանները, նկարները ևս հանել և այլն, այնուամենայնիվ, կուսակցական ղեկավարության պատասխանատվության հարցը կրկին շրջանցվեց՝ բավարարվելով միայն նրանով, որ բոնությունների մեջ միայն Ստալինին չէին մեղադրում, այլ նաև Ստալինի մեղ շրջապատին՝ անվանելով այն «հասարակության խմբավորում»:

Դեպքերի նման զարգացումը և ընթացքը խոսում է այն մասին, որ Ն. Խրուշչովը չէր կարող լինել հետևողական, վճռական բարձրացրած հարցերի լուծման գործում: Դեռ ավելին, ինքը ևս, իրեն զգալով դափնիների վրա և ունենալով փառասիրական որոշակի գծեր, թուլություն, 1958-ից Մ. Ա. Սուլովի և Լ. Ի. Բրեժնևի առաջարկով համատեղում էր

կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը կառավարության մախագահի պաշտոնի հետ՝ գործնականում դառնալով քննադատության համար անհասանելի:

Ն. Խրուշչովի կողմից անհատի պաշտամունքի դատապարտումն ինչ-որ չափով նպաստեց մի նոր անհատի պաշտամունքի ձևավորմանը, որը տեղի ունեցավ 1957 թ. 20-րդ համագումարից հետո, երբ ջախջախվեց Մոլոտովի, Մալենկովի և Կազանովիչի «հակակուսակցական խումբը»: Տարվելով փառասիրությամբ՝ Ն. Խրուշչովը ևս սկսեց հեռանալ կուսակցության 20-րդ համագումարի ընդունած դեկլարման կոլեգիալ սկզբունքներից և փորձեց ձևավորել արդեն մի նոր «անհատի պաշտամունք»: Եվ որքան էլ որ Ն. Խրուշչովը երազում էր փոխել խորհրդային քաղաքական համակարգի դիմագիծը և ոչ ողջ համակարգն ամբողջությամբ, այնուամենայնիվ, երկրում մի նոր մթնոլորտ էր ստեղծվում: Ծիշտ է, մա չգնաց զանգվածային բռնությունների, բայց և ամենևին մտադիր չէր ո՛չ իշխանությունը կիսել մյուսների հետ, ո՛չ էլ կուսակցության և պետության գործառույթները (ֆունկցիաները) բաժանել և ո՛չ առավել ևս անհատի սոցիալական, տնտեսական, քաղաքական իրավունքները պաշտպանել և երկրում հաստատել իրական Ժողովրդավարություն:

3. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՎ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետպատերազմյան ժամանակաշրջանում խրուշչովյան նոր դեկլարության կարևոր խնդիրներից մեկը տնտեսական վերափոխումներն էին, որոնք սկզբնական շրջանում կապված էին Գ. Մ. Մալենկովի անվան հետ: Նրա մախաձեռնությամբ և առաջարկով էլ Ժողովրդական տնտեսության ոլորտում շեշտադրումներն ավելի շատ սկսեցին տեղափոխվել ծանր արդյունաբերությունից դեպի թեթև արդյունաբերություն, բնակարանային շինարարություն և որ կարևոր է՝ գյուղատնտեսություն: Իսկ իրականությունն այն էր, որ գյուղատնտեսությունը երկրի տնտեսության մյուս ճյուղերի համեմատ ետ էր մնում: Անդրադառնալով այդ հարցին՝ Ն. Խրուշչովը նշում էր, որ 1948-1953 թվականների ընթացքում հացահատիկային կուլտուրաների բնագավառում որևէ աճ չի գրանցվել: Իսկ գյուղատնտեսության այնպիսի բնագավառ, ինչպիսին մսի արտադ-

րությունն էր, նույնիսկ ավելի ցածր էր նախապատերազմյան ժամանակաշրջանի հետ համեմատած:

1953 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ Կենտկոմի պլենումում Ն. Խրուշչովն ի լուր ամենքի հանգամանորեն վերլուծեց և ներկայացրեց երկրի գյուղատնտեսության վիճակը, որին հետևեց գյուղատնտեսական մթերքների, հատկապես մսի, կաթի, բրդի և այլ ապրանքների պետական գնումների բարձրացումը: Այդ քայլով սկսվեց իրականացվել գյուղի աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացման սկզբունքը: Վերացվեցին կոլտնտեսությունների՝ պետությամբ ունեցած նախկին պարտքերը, իջեցվեցին գյուղացիների տնամերձների, օժանդակ տնտեսությունների հարկերը, փոքրացվեցին, կրճատվեցին պետությամբ տրվող պարտադիր հարկերի տոկոսները և այլն: Կարևոր տեղաշարժեր կատարվեցին գյուղատնտեսության ոլորտը համապատասխան կադրերով, մասնագետներով ապահովելու ուղղությամբ: Մտցվեցին պլանավորման նոր սկզբունքներ, որոնք նախկինում կաշկանդում, արգելակում էին կոլտնտեսականների նախաձեռնությունները:

1954 թ. հունվարին Ն. Խրուշչովը զեկուցագիր ներկայացրեց կուսակցության Կենտկոմի նախագահություն, որում վերլուծվում և ներկայացվում էին երկրի գյուղատնտեսության վիճակը և զարգացման հեռանկարները: Զեկուցագրում Ն. Խրուշչովը ցույց էր տալիս տնտեսության այդ ճյուղի անմխիթար վիճակը, գյուղում ստեղծված խոր ճգնաժամը՝ նշելով, որ երկրում 1953 թ. ավելի քիչ հաց էր հավաքվել, քան 1940 թ.: Ստեղծված վիճակը անխուսափելի էր դարձնում ձեռնարկել կոնկրետ քայլեր վիճակը քիչ թե շատ բարելավելու համար: Ն. Խրուշչովը հատկապես կարևոր էր համարում մշակել 13 մլն. հեկտար խամ ու խոպան հող, ինչպես նաև խնդիր էր դնում ավելացնել գյուղատնտեսական կուլտուրաների, հատկապես եգիպտացորենի չափաբաժինը: Այդ ամենը նախատեսվում էր իրականացնել Միբիրում, Հարավային Ուրալում, Ղազախստանում: Այդ նպատակով կատարվեց Ղազախստանի կուսակցական ղեկավարության փոփոխություն: Ղազախստանի կուսակցական ղեկավարներ նշանակվեցին Պ. Կ. Պոնոմարյովը և Լ. Ի. Բրեժնևը: Իսկ արդեն Կենտկոմի՝ 1954 թ. փետրվար-մարտյան պլենումում խոպան հողերի յուրացումը համարվեց որպես գյուղատնտեսության զարգացման գլխավոր ուղղություն: Նման՝ իր մասշտաբներով նախադեպը չունեցող խնդիրների լուծումը պահանջում էր կատարել մեծ

ներդրումներ, որոնք դժվար էր հայթայթել, քանի որ ո՛չ կուսակցության՝ 1953 թ. սեպտեմբերյան պլենումում, ո՛չ էլ որևէ այլ կառավարական որոշմամբ մնան խնդիրներ չէին նախատեսված: Բայց անկախ այդ ամենից միայն 1954-1961 թթ. ընթացքում խամ ու խոպան հողերի յուրացման համար ներդրվեցին երկրի ողջ գյուղատնտեսության համար նախատեսված պետական ներդրումների 20 %-ը: Անցումը խամ ու խոպան հողերի յուրացմանը նշանակում էր ետ կանգնել գյուղատնտեսության զարգացման ինտենսիվ ուղուց և անցում կատարել դեպի լայնակի՝ էքստենսիվ ուղի, դեպի կրկին կառավարման վարչարարական մեթոդների մարմնավորում, ուժեղացում: Այդ ամենի հետևանքով նախատեսված 13 մլն. հեկտարի փոխարեն յուրացվեց 36 մլն. հեկտար, որը հնարավորություն տվեց հացահատիկի արտադրությունն ավելացնել երկու անգամ: Ի դեպ, այդ ամենի շնորհիվ առաջին անգամ տնտեսության այդ ճյուղը դարձավ շահութաբեր:

1956 թ. երկիրն ընդհանուր առմամբ արտադրեց 12 մլն. տոննա հացահատիկ, որի 40 %-ը բաժին էր ընկնում մոր յուրացված հողերին: Խոպանի յուրացումը դարձավ երկրի ազգային քաղաքականության բնագավառում փոփոխություններ կատարելու ուղղությամբ կարևոր սկիզբ:

Սակայն դրականի հետ միասին մրա կողքին առաջացան մասն դժվարություններ, չնախատեսված խնդիրներ: Ասեմք այնպիսի խնդիր, ինչպիսին հացահատիկը հաց արտադրող շրջաններից սպառման կետեր հասցնելն էր, որը կապված էր ճանապարհների, համապատասխան տեխնիկայի, հացի պարենավորման, ամրացման, տեղափոխման և բազմաթիվ այլ դժվարությունների հետ, որոնք նախօրոք հաշվի չէին առնվել:

Մյուս խնդիրն այն էր, որ յուրացնելով մոր հողատարածություններ՝ մույնպես անտեսվել էր այն հանգամանքը, որ այդ հողատարածքները համարվում էին համարձակության, ռիսկի գոտիներ, որտեղ հաճախ տեղի էին ունենում ավազի, փոշու մրրկասյուներ՝ պատճառելով մեծ վնասներ ու կորուստներ:

Դժվարություններից էր մաս այն, որ երկրի աշխատավորությունը, հատկապես երիտասարդությունը, արձագանքելով մոր հողերի յուրացման երկրի ղեկավարության կոչերին, դրսևորելով էնտուզիազմ՝ հայրենասիրական մղումներով ու կոմերիտական ուղեգրերով հայտնվելով խամ ու խոպան հողային տարածքներում, բախվեց կենցաղային դժվար

բությունների, անհարմարությունների և այլ կարգի չլուծված բարդությունների հետ՝ սկսած բնակարանային պայմանների սակավությունից, պակասից, մինչև մյուս ոչ պակաս անհրաժեշտ հարմարությունների բացակայությունը:

Խնդիրներից էր մաս այն, որ խամ ու խոպան հողերի յուրացմանը զուգընթաց սկսվեց գյուղատնտեսական կուլտուրայի՝ եգիպտացորենին հատկացվող հողատարածությունների ընդլայնման մի նոր գործընթաց: Հաճախ առանց հաշվի առնելու այդ կուլտուրայի արտադրման փորձը, բնակլիմայական պայմանները և այլն՝ վարչարարական մեթոդներով ու բռնությամբ կոլտնտեսություններին պարտադրում էին արտադրել մաս եգիպտացորեն, որը հաճախ տնտեսապես արդյունավետ չէր և չէր փոխհատուցում այն ծախսերը, որոնք հատկացվում էին այդ կուլտուրայի արտադրման և զարգացման համար:

Բայց բոլոր դեպքերում խամ ու խոպան հողերի յուրացումը զգալի չափով մեղմեց երկրի հացահատիկային կուլտուրաների հիմնախնդիրը, նրա պակասը:

Սակայն ճշմարտություն է մաս այն, որ խոպան հողերի յուրացումը իրականացվում էր հապճեպ, զրոհային մեթոդներով, առանց նախօրոք լուրջ գիտական հաշվարկների: Խնդիրն այն էր, որ երկրի ղեկավարությունը, Ն. Խրուշչովը անսահմանորեն հավատում էին կոլտնտեսային կարգերի առավելություններին՝ հակառակ անհատական տնտեսությունների ունեցած հնարավորությունների:

Ելնելով այդ ամենից՝ 1950-ական թվականներից երկրում սկսվեց կոլտնտեսությունների խոշորացման գործընթաց: 1957-1966 թթ. ամեն տարի վերացվում էին մոտ 10 հազար փոքր կոլտնտեսություններ՝ դրանք միավորելով խոշոր տնտեսությունների մեջ: 1963 թ. երկրում այդ խոշորացման հետևանքով կային 39 հազար կոլտնտեսություններ, նախկին 1955 թ. 91 հազարի փոխարեն: Հետաքրքիրն այն էր, որ երկրի ղեկավարությունը հազարավոր կոլտնտեսություններ հայտարարում էր ոչ հեռանկարային: Նույն ձևով, առանց համապատասխան հաշվարկների, շատ կոլտնտեսություններ ուղղակի մեխանիկորեն վերափոխվում, դարձվում էին պետական տնտեսաձևին համապատասխան տնտեսություններ կամ սովխոզներ:

Գյուղատնտեսության բնագավառում իրականացված մյուս փոփոխությունն այն էր, որ 1958 թ. սկսեցին վերացվել կոլեկտիվացման ժամանակներից ձևավորված մեքենա-տրակտորային կայանները (ՄՏԿ) և կոլտնտեսություններին առաջարկվեց մեկ տարվա ընթացքում պարտա-

դիր կերպով ՄՏԿ-ներից գնել համապատասխան տեխնիկա, որը իր հերթին նոր ֆինանսական դժվարություններ ստեղծեց գյուղացիության համար, քանզի կոլտնտեսությունները նախ չունեին համապատասխան միջոցներ այդ տեխնիկան գնելու համար և հետո, որ նույնպես շատ կարևոր էր, չունեին համապատասխան կադրեր այդ տեխնիկան սպասարկելու, շահագործելու համար: Այստեղ ևս զգացնել էր տալիս խրուշչովյան աշխատանքը՝ տնտեսագիտորեն չհաշվարկված քաղաքականությունը իր բացասական հետևանքներով:

Առավել անհեռանկարային էր Խրուշչովի կողմից 1957 թ. առաջ քաշված կարճ ժամանակում (կաթի արտադրության գծով մեկ տարի) գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ մեկ շնչին ընկնող չափաքանակով հասնել և անցնել ԱՄՆ-ին: Հասկանալի է, որ այդ ծրագիրը ևս դատապարտված էր ձախողման:

1960-ական թթ. սկզբներին բացահայտ էր, որ խրուշչովյան ագրարային քաղաքականությունը անիրականանալի էր: Գյուղում սկսված նյութական շահագրգռվածության մթնոլորտը, գործընթացը կրկին սկսեց չաշխատել և բախվեց դժվարությունների հետ: Դրանում ոչ պակաս չափով դեր խաղաց գյուղական բնակչության անհատական տնտեսությունների անօրինական վերացումը, արգելումը՝ հիմնավորելով այն հանգամանքով, թե իբր նման դեպքում գյուղացին շեղվում է հասարակական աշխատանքից և շատ ժամանակ հատկացնում անհատական տնտեսությանը:

Բնական է, որ նման քաղաքականության արդյունքը եղավ այն, որ տեղի ունեցավ գյուղական բնակչության ապագյուղացիացում, գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերի նվազում: Եվ որպեսզի երկիրը խուսափեր վերահաս սովից, Ն. Խրուշչովը 1963 թվականին, երկրի պատմության մեջ առաջին անգամ, ստիպված սկսեց հաց գնել Արևմուտքից: Շատ քաղաքներում նույնիսկ առանձին ապրանքների, մթերքների բաշխման համար մտցվեց քարտային համակարգ: Փաստորեն, գյուղատնտեսության բնագավառում անցկացված վերափոխումները վերջնականապես ձախողվեցին, և երկիրը կանգնեցվեց փակուղու առջև:

Խրուշչովյան վերափոխումների շարքում ոչ պակաս չափով կարևոր տեղ էր զբաղում արդյունաբերության ոլորտը: Այդ բնագավառում նորությունն այն էր, որ վերացվեցին ճյուղային նախարարությունները և դրանց փոխարեն ստեղծվեցին Ժողովրդական տնտեսության խոր-

հուղեր (Ժողտնտխորհ), որոնք դիտվում են որպես Ն. Խրուշչովի իրականացրած ամենամեծ ռեֆորմներից մեկը:

Հարցի էությունն այն էր, որ կուսակցության 20-րդ համագումարից հետո երկիրը գտնվում էր վերելքի շրջանում, և մարդկանց մեծ մասի գիտակցության մեջ իշխում էր այն գաղափարը, որ Արևմուտքի հետ տնտեսական մրցակցությունում հաղթանակը մոտ է, ինչպես ասում են՝ սարերի ետևում չէ: Մինչդեռ իրականում երկրի տնտեսական վիճակը անմխիթար էր: Ժողովրդական տնտեսության մեջ գնալով աճում էին անհամամասնությունը, անտնտեսվարությունը և ժողովրդական ունեցվածքը վատնելու, շոայելու քաղաքականությունը: Կառավարել երկրի տնտեսությունը մոր պայմաններում կրկին Կենտրոնից, այն է՝ Մոսկվայից, այլևս արդյունավետ չէր և հակասում էր ժամանակի ոգուն: Ելնելով դրանից՝ Ն. Խրուշչովը ճյուղային նախարարությունների վերացումը դիտում էր որպես կարևոր պայման՝ անցնելու տերիտորիալ-տարածքային կառավարման սկզբունքներին՝ դրա մեջ տեսնելով հնարավորություն մեծացնելու Միութենական հանրապետությունների իրավունքները: Այդ քայլով Ն. Խրուշչովը նաև ցանկանում էր քիչ թե շատ կազմաքանդել բյուրոկրատական ապարատը, տնտեսության, արդյունաբերության կառավարումը ապակենտրոնացնել՝ դրանով սահմանափակելով Կենտրոնի մենաշնորհային իշխանությունը:

Արդյունաբերության և շինարարության կառավարման բնագավառում կատարված վերակառուցումների պատճառով միութենական նախարարությունները վերացվեցին և դրանց փոխարեն ստեղծվեցին ավելի քան 100 ժողտնտխորհներ: Այդ փոփոխությունների հետևանքով պետական տնտեսական կառավարման ապարատը մեկ երրորդով կրճատվեց և 1960 թ. կազմում էր 1,2 մլն. մարդ¹⁷:

Անցումը երկրի տնտեսության կառավարման մոր մեթոդներին և սկզբունքներին նպաստեց ավելի արդյունավետ օգտագործելու երկրի տարածաշրջանային ներուժը: Ժողտնտխորհները ստացան մեծ իրավունքներ աշխատանքի՝ ինքնուրույն կերպով կազմակերպման, կառավարման և այլ բնագավառներում: Մակայն ռեֆորմը այդ բնագավառում ևս վերջին հաշվով չփոխեց ժողովրդական տնտեսության կառավարման և պլանավորման սկզբունքները, այլ միայն այն փոխարինեց ճյուղային տարածքային կառավարման: Փաստորեն, խրուշչովյան ռեֆորմները չշոշափեցին տնտեսական կառավարման հիմքերը, հնարավո-

¹⁷ *Տե՛ս В. А. Шестаков. Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 335:*

րություն չտվեցին, որ աշխատավորը դրսևորի նախաձեռնություն և նյութական շահագրգռվածություն: Եվ ինչպես նախկինում, երկրի տնտեսությունը գերազանցապես շարունակում էր զարգանալ էքստենսիվ՝ լայնակի զարգացման ուղիով, որի պատճառով էլ նրա արդյունավետությունը և աշխատանքի արտադրողականությունը համեմատած զարգացած, առաջատար երկրների հետ, բավական ցածր էր: Ստեղծված մման վիճակը տվեց իր պտուղները, քանզի տեսանելի էին կառավարման նոր համակարգի թերությունները, որոնք հանգում էին նրան, որ տեղերում, Միութենական համրապետություններում այժմ էլ սկսեցին գերիշխել սուբյեկտիվ մոտեցումներ, միջոցների, կապիտալի անարդյունավետ, շռայլ վատմման բազմաթիվ օրինակներ: Իսկ այդ ամենը նշանակում էր, որ խրուշչովյան վերափոխումները կրում էին լոկալ, տեղային, սահմանափակ բնույթ՝ ինչ-որ չափով ուղղված լինելով կենտրոնական բյուրոկրատական կառավարման, պլանավորման դեմ, և ոչ թե ավելի արմատական քայլերով կոտրելու տասնամյակներ շարունակ կարծրացած կառավարման՝ իր դարն ապրած աշխատաձևը և գնալու ավելի լիբերալ-ազատական կառավարման համակարգի:

Ինչ խոսք, խրուշչովյան վերափոխումները չէին սահմանափակվում վերոհիշյալ բնագավառներով, դրանք ավելի լայն ընդգրկում ունեին և ներառում էին այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ սոցիալականը, կրթությունը, գիտությունը, առողջապահությունը և այլն, որոնք նույնպես, ցավոք, կրում էին ոչ հետևողական բնույթ, ուստի, վերջին հաշվով, չէին կարող նշանակալի չափով ազդել և նպաստել երկրի ընդհանուր զարգացմանը:

4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՐՈՒՇՉՈՎՅԱՆ ԸՐՁԱՆՈՒՄ

Խորհրդային Միության քաղաքականությունը 1950-ական թվականների սկզբներին՝ խրուշչովյան շրջանում, իրականացվում էր միջազգային բավական լարված, Արևմուտքի երկրների հետ կոշտ հակամարտության պայմաններում: Ն. Ս. Խրուշչովը սկզբնական շրջանում արտաքին քաղաքականության խնդիրներում շարունակում էր ղեկավարվել ստալինյան ժամանակներում ձևավորված անփոփոխ, շարքոն ստերեոտիպերով, սկզբունքներով: Գալով իշխանության՝ Ն. Ս. Խրուշչովը

գործնականում չվերանայեց ստալինյան ժամանակաշրջանի արտաքին քաղաքականության և ոչ մի խոշոր քայլ:

Խորհրդային գորքերի դուրսհանումը Ավստրիայից և Կորեական պատերազմի ավարտը կարելի է համարել բացառություն, չնայած այդ հարցերը հասունացել էին դեռևս Ստալինի ժամանակներից:

Իսկ 1950-ական թվականների սկզբներին ԱՄՆ-ում դեռևս գործում էր այն օրենքը, ըստ որի այն երկրները, որոնք ԱՄՆ-ից ստանում էին օգնություն, պարտավոր էին դադարեցնել սոցիալիստական երկրների հետ ամեն տեսակի առևտրական հարաբերությունները: Դեռ ավելին, Արևմուտքի երկրները ԱՄՆ-ի գլխավորությամբ շարունակում էին ստեղծել ռազմաքաղաքական դաշինքներ, որոնց մեջ մտնում էին Մեծ Բրիտանիան, Մերձավոր Արևելքի (ՄԵՆՏՕ), Հարավարևելյան Ասիայի (ՄԵԱՏՕ) երկրները, որոնք կոչված էին զսպելու սոցիալիստական ճամբարի երկրների ազդեցությունը աշխարհում, ինչպես նաև զսպելու գաղութային երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Հասկանալի է, որ դրան ի պատասխան Խորհրդային Միությունը նույնպես ստեղծեց համապատասխան ռազմական ուժեր՝ ուղղված Արևմուտքի՝ կապիտալի աշխարհի դեմ: Հատկապես կարևոր էր 1950-ական թվականների սկզբներին ԽՍՀՄ-ի գլխավորությամբ ստեղծված Վարշավայի երկրների ռազմական դաշինքը, որի մեջ մտնում էին Եվրոպայում ձևավորված սոցիալիստական ճամբարի երկրները՝ Լեհաստանը, Ռումինիան, Բուլղարիան, Ալբանիան, Հունգարիան, ԳԴՀ-ն և Չեխոսլովակիան: Այդ դաշինքն իր հերթին խնդիր էր դնում պաշտպանել խաղաղությունը Եվրոպայում և աշխարհում՝ կարևոր համարելով երկրների միջև առաջացած հակասությունները լուծել միմյանց հետ խորհրդակցելով, խաղաղ ճանապարհով: Արտաքին քաղաքական գործողությունների կոորդինացման համար ստեղծվեց քաղաքական խորհրդատվական կոմիտե: Նման ռազմաքաղաքական դաշինքների ստեղծումը ուներ այն հետևանքը, որ գնալով լարվում էին միջազգային հարաբերությունները, որոնց թուլացման, լուծման համար պահանջվում էին նոր մոտեցումներ, ավելի նոր և ճկուն դիվանագիտական քայլեր, որոնք ուղղված էին լուծելու միջազգային բարդ խնդիրները: Իսկ դա նշանակում էր, որ անհրաժեշտություն էր առաջանում միջազգային հարաբերություններում հրաժարվել նախկին կոշտ, հակամարտ, անհանդուրժող մոտեցումներից և հարցադրումներից:

Երկրի ղեկավարությունը, հատկապես Ն. Խրուշչովը, Ա. Միկոյանը սկսեցին առաջ քաշել այն գաղափարը, որ տարբեր ռազմական դաշինքների հակամարտությունն այլևս անխուսափելի չէ: Իսկ դա նշանակում էր, որ աստիճանաբար հմարավոր էր համարվում երկու հակամարտ համակարգերի գոյակցությունը, որը պաշտոնական ճանաչում ստացավ հատկապես կուսակցության 20-րդ համագումարից հետո: Այդ նոր մտածողության և քաղաքականության արդյունքը եղավ այն, որ Ն. Խրուշչովը սկսեց ակտիվ այցելություններ կատարել տարբեր երկրներ՝ նպաստելով միջազգային հարաբերություններում նոր մթնոլորտի ստեղծմանը:

1955 թ. մայիս-հունիս ամիսներին խորհրդային պատվիրակությունը Ն. Խրուշչովի ղեկավարությամբ, Ն. Բուլգանինի, Ա. Միկոյանի և մյուսների մասնակցությամբ եղան Հարավսլավիայում, որի ղեկավարության հետ վարեցին բավական լարված բանակցություններ՝ երկու երկրների միջև հարաբերությունների նորմալացման ուղղությամբ: Բանակցությունների արդյունքում 1955 թ. հունիսի 2-ին երկու կողմերը ընդունեցին համատեղ հայտարարություն այն մասին, որ այս կամ այն երկրի ներքին կյանքին վերաբերող հարցերը բացառապես հանդիսանում են տվյալ պետության, տվյալ երկրի կառավարության մենաշնորհը¹⁸:

Ն. Ա. Խրուշչովի արտաքին քաղաքականության ամենամեծ քայլերից մեկը խոշոր կապիտալիստական երկրների հետ հարաբերությունների ակտիվացումը և քիչ թե շատ նորմալացումն էր: 1954-1955 թթ. դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին Ավստրիայի, Ֆեդերատիվ Գերմանիայի հետ: 1956 թ. ԽՍՀՄ-ի և Ճապոնիայի միջև ստորագրվեց պատերազմական վիճակի դադարեցման մասին համաձայնություն և նույնպես վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները¹⁹:

1955 թ. ԽՍՀՄ-ը պայմանագիր կնքեց ԳԴՀ-ի հետ՝ հնարավորություն տալով Արևելյան Գերմանիային ազատորեն որոշելու երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը:

¹⁸ *St'u Новейшая история России 1914-2008 М., 2008, էջ 367, А. Ю. Дворниченко, Ю. В. Тот, М. В. Ходаков. История России М., 2008, էջ 409:*

¹⁹ *St'u А. С. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Силькина, История России, М., 2006, էջ 435:*

1956 թ. ապրիլին Ն. Խրուշչովը նույնպիսի առաքելությամբ մեկնեց Մեծ Բրիտանիա՝ նպատակ ունենալով խախտել այն մեկուսացումը, որ կար երկու երկրների միջև, սակայն անգլիական ուղևորությունը այնքան էլ արդյունավետ չէր: Բայց բոլոր դեպքերում ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության ջանքերը արձագանք գտան հատկապես Ֆրանսիայում, որի պրեզիդենտի՝ Շառլ դե Գոլի հրավերով 1960 թ. մարտին Ն. Խրուշչովը մեկնեց Ֆրանսիա, որի արդյունքում երկու երկրների միջև հարաբերությունները զգալի չափով բարելավվեցին: Ընդհանուր առմամբ 1950-ական թվականների վերջերին ԽՍՀՄ-ը միայն առևտրական պայմանագրեր ուներ աշխարհի ավելի քան 70 երկրների հետ:

Խորհրդային Միությունը իր արտաքին քաղաքականության մեջ ոչ պակաս չափով կարևոր տեղ էր տալիս նաև «երրորդ աշխարհի» կամ էլ զարգացող երկրների հետ հարաբերությունների զարգացմանը: Հատկապես կարևորվում էին այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Հնդկաստանը, Ինդոնեզիան, Բիրման, Աֆղանստանը, Եգիպտոսը և բազմաթիվ այլ երկրներ: Բավական է ասել, որ Խրուշչովի կառավարման տարիներին ԽՍՀՄ-ի ֆինանսական և տեխնիկական օգնության շնորհիվ աշխարհի տարբեր երկրներում կառուցվեցին 6000 ձեռնարկություններ²⁰:

Սակայն 1950-ական թվականների երկրորդ կեսին ԽՍՀՄ-ի ակտիվ արտաքին քաղաքականության կողքին առաջացան նաև բազմաթիվ հակասություններ, հակամարտություններ: Ամենից առաջ դա դրսևորվում էր նրանում, որ ԽՍՀՄ-ը աստիճանաբար հետ էր կանգնում իր այն սկզբունքներից, որոնք վերաբերում էին պետությունների իրավահավասար փոխհարաբերություններին, սոցիալիզմի զարգացման ուղիների ընտրությանը և այլն: Դեռ ավելին, ԽՍՀՄ-ը կրկին փորձում էր հատկապես Արևելյան Եվրոպայի սոցերկրների նկատմամբ իրականացնել դիկտատի, թելադրանքի, ռազմական միջամտության քաղաքականություն: Այսպես օրինակ, 1956 թ. հոկտեմբերին խորհրդային զորքերը մասնակցեցին Հունգարիայում հակասոցիալիստական ելույթների ճնշմանը: Ցուցարարները պահանջում էին խորհրդային զորքերի դուրսհանումը Հունգարիայից: Բուդապեշտում ծավալված ապստամբությունը ճնշվեց Վարշավայի պայմանագրի զինված ուժերի կողմից: Իսկ իրականությունն այն էր, որ Հունգարիայում որոշակի ուժեր խնդիր էին դնում երկ-

²⁰ *Տե՛ս Ա. Շ. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Силькина, История России, М., 2006, էջ 435:*

րի ղեկավարության առջև վերադառնալ նախապատերազմյան ժամանակներին, դուրս գալ Վարշավայի պայմանագրից և մտնել ՆԱՏՕ-ի մեջ: Ի վերջո այդ ամենի արդյունքում 1956 թ. նոյեմբերին Բուդապեշտում սկսված ռազմական գործողությունների ընթացքում զոհվեցին 2,5 հազար ապստամբներ և խորհրդային զորքերի 720 զինվորականներ²¹:

Նույնպիսի ձևով բարդացան հարաբերությունները Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ: ՉԺՀ ղեկավարությունը մերժեց նրա տերիտորիայում ռազմական կայաններ տեղադրելու վերաբերյալ խորհրդային Միության առաջարկը: Ի պատասխան այդ քայլի՝ ԽՍՀՄ-ը մերժեց Չինաստանի հետ միջուկային ֆիզիկայի բնագավառում համագործակցելու պայմանավորվածությունը:

Հակամարտություններ առաջացան նաև ԱՄՆ-ի հետ: 1960 թ. մայիսի 1-ին ԽՍՀՄ զինված ուժերը վայր գցեցին ամերիկյան հետախուզական «N-2» ինքնաթիռը, որն էլ ձախողեց մինչ այդ նախատեսված երկու երկրների ղեկավարների՝ Ն. Խրուշչովի և Դ. Էյզենհաուերի հանդիպումը: Շատ ավելի բարդ էին խորհրդա-ամերիկյան հարաբերությունները 1960-ական թվականների սկզբներին, կապված այսպես կոչված կուբայական կամ ավելի ճիշտ «կարիբյան ճգնաժամի» հետ, երբ ԽՍՀՄ-ը Կուբայում տեղադրեց միջուկային մարտագլխիկներով հրթիռներ, որն էլ սպառնալիք էր ԱՄՆ-ի համար: Կարիբյան ճգնաժամը հաջողվեց լուծել, երբ ԽՍՀՄ-ի ղեկավար Ն. Խրուշչովը և ԱՄՆ-ի նախագահ Ջոն Քենեդին բանակցությունների արդյունքում եկան փոխադարձ համաձայնության: ԽՍՀՄ-ը համաձայնվեց հանել իր հրթիռները Կուբայից, իսկ Վաշինգտոնը իր հերթին խոստացավ քայլեր չձեռնարկել Կուբայի անվտանգության նկատմամբ, չներխուժել կղզի և նույնը խոստանալ նաև իր դաշնակիցների անունից, ինչպես նաև հանել իր հրթիռները Թուրքիայից: Բանակցությունները երկու կողմերի՝ ԱՄՆ-ի և Կուբայի հետ, որոնք ընթանում էին անչափ լարված, պայթուցանավտանգ մթնոլորտում, խորհրդային Միության կողմից վարում էր Ա. Միկոյանը: Եվ իրոք, 1962 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քենեդին հայտարարեց Կուբայի շրջափակման դադարեցման մասին, որով, փաստորեն, լուծվեց Կարիբյան ճգնաժամը և աշխարհը փրկվեց միջուկային պատերազմից:

²¹ St'e u A. Ю. Дворниченко, Ю. В. Тот, М. В. Ходяков. История России. М., 2008, էջ 411:

Ընդհանուր առմամբ ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության բնագավառում Խրուշչովի ձեռնարկած քայլերը վերջին հաշվով նպատակ ունեին փնտրելու, գտնելու միջպետական հարաբերությունների նոր ձևեր: Հատկապես նորությունն այն էր, որ պետությունների ղեկավարների հանդիպումները դարձան արտաքին քաղաքականության արդյունավետ ձևերից մեկը: Բավական է ասել, որ Խրուշչովը իր կառավարման տարիներին ավելի քան 40 անգամ եղավ արտասահմանում՝ մի քանի անգամ Լեհաստանում, ԳԴՀ-ում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Հարավսլավիայում, Չինաստանում, երկու անգամ՝ ԱՄՆ-ում: Նա եղել է Ավստրիայում, Ֆրանսիայում, Հնդկաստանում: Ն. Խրուշչովը, լինելով արտասահմանում, վարել է բանակցություններ, տվել հարցազրույցներ՝ նպատակ ունենալով ԽՍՀՄ-ի նկատմամբ ստեղծել ու ձևավորել նոր պատկերացում և ԽՍՀՄ-ը աշխարհին ներկայացնել որպես խաղաղասեր երկիր²²:

1963 թ. Մոսկվայում ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Անգլիան համաձայնության եկան արգելելու միջուկային զենքի փորձարկումը օդում, տիեզերքում և ջրի տակ: Կարճ ժամանակում Մոսկովյան պայմանագրին միացան ավելի քան 100 երկրներ: Այդ քայլերը ընդհանուր առմամբ նպաստեցին միջազգային հարաբերությունների մեղմացմանը, սակայն դրանք երկարատև կյանք չունեցան: Ն. Խրուշչովի մախաձեռնած ռեֆորմները ցանկալի արդյունքներ չէին՝ տալիս: Կարիբյան ճգնաժամը զգալի չափով խաթարեց Խորհրդային Միության միջազգային հեղինակությունը: Չինաստանի հետ հակասությունները հանգեցրին կոմունիստական շարժման պառակտմանը, տարածայնությունների խորացմանը: Դա փաստորեն պայքար էր սոցիալիզմի ճամբարում լիզերության, ազդեցության համար: Խորհրդա-չինական հակասությունները այնքան սրվեցին, որ 1963 թ. սեպտեմբերի 27-ին Չինաստանը տերիտորիալ պահանջներ ներկայացրեց ԽՍՀՄ-ին, որն ի վերջո այնքան սրվեց, որ հետագայում՝ 1960-ական թվականների վերջերին՝ 1969 թ., հանգեցրեց երկու երկրների միջև ռազմական բախման:

1964 թ. ավարտվեց Ն. Խրուշչովի իրականացրած ռեֆորմների քաղաքականությունը: Ընդհանուր առմամբ հետպատերազմյան զրեթե երկու տասնամյակ տևած (1946-1964 թթ.) Խորհրդային Միության արտա-

²² *St'u Новейшая история России, 1914-2008. М., 2008, էջ 373:*

քին քաղաքականությունը, որի ավելի քան մեկ տասնամյակը կապված է Ն. Խրուշչովի անվան հետ, լի էր հակասություններով և ոչ միանշանակությամբ: Այդ ժամանակաշրջանի գլխավոր արդյունքն այն էր, որ ԽՍՀՄ-ին, այնուամենայնիվ, հաջողվեց ինչ-որ չափով փոխել «սառը պատերազմի» ընթացքը՝ համոզիչ դարձնելով, որ ցանկության և կամքի դրսևորման դեպքում առավել ևս երկու գերիզոր տերությունները՝ ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը, կարող են միմյանց հետ զալ համաձայնության և հաղթահարել ճգնաժամը: Կարևոր փոփոխություն էր նաև այն, որ Խորհրդային երկիրը Արևմուտքի կողմից արդեն այլ ձևով էր ընկալվում, քան Ստալինի ժամանակաշրջանում: Բայց բոլոր դեպքերում Խրուշչովին չհաջողվեց և չէր էլ կարող հաջողվել, փոխել, նորացնել երկրի քաղաքական և սոցիալական կառուցվածքը. այն կատարվեց մասնակիորեն, քանզի այդ ուղղությամբ իրականացված քայլերը չտվեցին ցանկալի արդյունքներ: Երկրում և առավել ևս իշխանական վերնախավում առաջացած դժգոհություններն ի վերջո հանգեցրին նրան, որ 1964 թ. հոկտեմբերին Ն. Ս. Խրուշչովը ազատվեց իր բոլոր պաշտոններից՝ ուղարկվելով կենսաթոշակի:

Հատկապես կարևոր էր 1955 թ. հուլիսին Ժնևում չորս խոշոր տերությունների ղեկավարների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա) հանդիպումը: Այդ հանդիպման ամենակարևոր արդյունքներից մեկն այն էր, որ վերացվեց ԽՍՀՄ-ի մեկուսացման Արևմուտքի քաղաքականությունը: Ժնևի կոնֆերանսի արդյունքներից էր նաև այն, որ նման կարգի հանդիպումները և փոխայցելությունները դարձան միջազգային հարաբերությունների կարևոր մասերից մեկը:

1955 թ. սեպտեմբերին Ֆեդերատիվ Գերմանիայի կանցլեր Կ. Ադեն-հաուերը ժամանեց ԽՍՀՄ: Ֆեդերատիվ Գերմանիայի հետ նոր հարաբերությունների շնորհիվ ԽՍՀՄ-ը ավելի քան 3 մլն. ռազմագերիների, որոնց մի մասը՝ 1,1 մլն., մահացել էին բանտերում, ճամբարներում, ազատ արձակեց և թույլ տվեց վերադառնալ Հայրենիք:

Գ Լ ՈՒ Խ 3

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1965-1984 ԹԹ.

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՆՈՐ ԿՈՒՐՍԸ

1964 թ. հոկտեմբերին Ն. Ս. Խրուշչովին պետական, քաղաքական կյանքից հեռացնելը ունեցավ այն հետևանքը, որ ավարտվեց երկրի հասարակական-քաղաքական կյանքի ազատականացման՝ լիբերալացման գործընթացը: Իշխանության եկան նոր մարդիկ: ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար (1966 թ. Գլխավոր քարտուղար) ընտրվեց Լ. Ի. Բրեժնևը, որը երկար տարիներ կուսակցական տարբեր ղեկավար պաշտոններ էր զբաղեցրել և Ն. Ս. Խրուշչովին աշխատանքից ազատելու հարցում առաջին նախաձեռնողներից մեկն էր: Նա ամեն ինչ անում էր երկիրը կայունացնելու ուղղությամբ: Եվ քանի որ նոր ղեկավարները Ն. Խրուշչովին մեղադրում էին նաև վոլյունտարիզմի, սուբյեկտիվիզմի և այլ բացթողումների, սեփական անձի շուրջը մի նոր անհատի պաշտամունքի մթնոլորտ ստեղծելու և այլնի մեջ, ուստի ընդունվեց որոշում, որ երկրի կարևոր, բարձրագույն պաշտոնները՝ ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի և կառավարության նախագահի պաշտոնը, մեկ անձի մեջ չպետք է միավորել, որի համար էլ երկրի վարչապետի պաշտոնը տրվեց նոր մարդու՝ Ա. Ն. Կոսիգինին, որը երկար տարիներ գլխավորել էր երկրի Պետպլանը, տեքստիլ և թեթև արդյունաբերության նախարարությունները: Փաստորեն, նախկին միանձնյա ղեկավարությանը փոխարինելու եկավ կոլեգիալ ղեկավարությունը՝ հանձնիս Լ. Ի. Բրեժնևի, Ա. Ն. Կոսիգինի և կուսակցական, պետական այլ ղեկավարների: Սակայն ճշմարտությունն այն է, որ շուտով նկատելի դարձավ, որ երկրի ղեկավարությունն աստիճանաբար նահանջում էր կոլեգիալ ղեկավարման սկզբունքներից և կրկին անցնում էր միանձնյա ղեկավարության ոչ արդարացված մեթոդներին:

Ընդ որում այդ քաղաքականության, նոր աշխատանքի առաջին գո-
հերից մեկը դարձավ Ա. Ի. Միկոյանը, որին 1965 թ. ղեկտեմբերին ազա-
տեցին Միության Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնից: Նման
կարգի փոփոխություններ կատարվեցին նաև երկրի կառավարման այլ
օղակներում: Փաստորեն, երկրի նոր ղեկավարության շրջանում պայ-
քար էր գնում, թե ինչպիսի ուղիով երկիրը պետք է շարունակեր զարգա-
նալ: Այդ պայքարն ի վերջո ավարտվեց նրանով, որ ավարտվեց նաև
խրուշչովյան «ձնհալի» շրջանը, և երկիրը թե՛ զաղափարախոսության և
թե՛ քաղաքականության բնագավառում թևակոխեց չափավոր պահպա-
նողականության ժամանակաշրջան: Երկրի նոր ղեկավարությունը
1960-ական թվականների վերջերին առաջ քաշեց մի նոր գաղափար,
որն էլ հայտնի է որպես «զարգացած սոցիալիզմի» հայեցակարգ: Կու-
սակցական, պետական բոլոր փաստաթղթերում «զարգացած սոցիա-
լիզմը» ներկայացվում էր որպես անհրաժեշտ փուլ, որի ընթացքում մա-
խատեսվում էր հասնել հասարակական կյանքի բոլոր ոլորտների միա-
վորմանը և ի վերջո կոմունիստական հասարակարգի կառուցմանը, կու-
սակցության նոր ծրագրի իրականացմանը, որն ընդունվել էր կուսակ-
ցության 22-րդ համագումարում (1961 թ): Իսկ որպեսզի այդ խնդիրը
իրականացվեր, կարևորություն էր տրվում «զարգացած սոցիալիզմի»
ժամանակաշրջանի խնդիրների լուծմանը, հասարակության մեջ գոյու-
թյուն ունեցող բազմաթիվ թերությունների հաղթահարմանը:

Մինչդեռ իրականում երկրի հասարակական-քաղաքական կյանքում
1960-1970-ական թվականներին տեղի էին ունենում բավականին բարդ,
հակասություններով լի գործընթացներ: Լ. Ի. Բրեժնևը սկսեց իրակա-
նացնել մի քաղաքականություն, որը նպատակ ուներ Ն. Ս. Խրուշչովի
ժամանակ սկսած վերափոխումները սահմանափակել, կրճատել: Հատ-
կապես նախանջ նկատվեց խրուշչովյան Ստալինի ղեկավարության
թերությունների բացահայտման քաղաքականությունից: Մամուլում,
փաստորեն, դադարեցվեցին Ստալինի անձի պաշտամունքի վերաբեր-
յալ քննադատական հոդվածների հրատարակումը:

Դեռ ավելին, 1970-ական թվականների սկզբներին Լ. Ի. Բրեժնևը
հայտարարություն արեց այն մասին, որ Միութենական հանրապետու-
թյունները տնտեսական և մշակութային զարգացման տեսակետից
իրար հավասարվել են, և որ ավելի կարևոր է, ԽՍՀՄ-ում ազգային հար-
ցը լուծվել է անվերապահորեն ու վերջնականապես, որի շնորհիվ էլ
պայմաններ են ստեղծվել երկրում նոր ընդհանրության՝ խորհրդային
ժողովրդի, խորհրդային ազգի ձևավորման համար: Մինչդեռ իրականու-

թյունն այն էր, որ թե՛ այս ժամանակ և թե՛ հետագայում խորհրդային Միութենական հանրապետությունների միջև հավասարություն չէր հաստատվել: Ընդհակառակը, Միութենական հանրապետությունների ղեկավարները Կենտրոնից պահանջում էին այնպիսի հարցերի լուծում, ինչպիսիք էին ազգային լեզվով դպրոցական ցանցի ընդլայնումը, ազգային ավանդույթների հարգումը, պատմական հուշարձանների պահպանումը և այլն: Ցավոք, երկրի ղեկավարությունը ազգային ինքնագիտակցության ակտիվացումը դիտում էր որպես տեղական մացիոնալիզմի դրսևորում և ամեն կերպ փորձում էր ճնշել մնան քայլերը, նախաձեռնությունները:

ԽՍՀՄ-ում հասարակական-քաղաքական կյանքում կատարվող փոփոխություններն ունեին մեկ նպատակ՝ երկրում ստեղծել կայուն վիճակ:

Լ. Ի. Բրեժնևը դրա լուծումը տեսնում էր իրեն հավատարիմ մարդկանց կուսակցական, պետական բարձր պաշտոններում նշանակելու մեջ՝ առանց հաշվի առնելու դրան նախորդած պատմական փորձը: Դա է պատճառը, որ նորից երկրի բարձրագույն երկու պաշտոնները՝ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի, միավորվեցին մեկ անձի մեջ: 1977 թ. ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը դարձավ նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ: Նրա ղեկավարման առաջին տասնամյակի ընթացքում Կենտկոմի Քաղբյուրոյի նախկին 17 անդամներից 7-ն էին մնացել նրա կազմում: Ընդ որում, Քաղբյուրոյի նոր անդամները Լ. Ի. Բրեժնևի համախոհներն էին, որոնց նա առաջ էր քաշել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս Դնեպրոպետրովսկում, Մոլդովիայում, Ղազախստանում աշխատած տարիներին նրանք արդեն իր կողմնակիցներն ու իր կադրերն էին, որոնց ժողովուրդն անվանում էր «Դնեպրոպետրովսկյան խումբ»:

Այդ նոր կադրերի շարքում իրենց պահպանողական, կոնսերվատիվ հայացքներով և աշխատառճով հատկապես աչքի էին ընկնում Լ. Ի. Բրեժնևը, ինչպես նաև՝ Մ. Ա. Սուլովը, Ա. Ն. Շելեպինը և ուրիշներ: Եվ որքան էլ որ ժամանակին քննադատվում էր Ն. Խրուշչովի փառասիրությունը, Լ. Բրեժնևը ևս տուրք էր տալիս այդ թուլությանը և ամեն ինչ անում էր իր շուրջը ևս ստեղծելու մեծարման մթնոլորտ: 1966 թ. նա արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, 1975 թ.՝ Բանակի գեներալի կոչման, 1976 թ.՝ Խորհրդային Միության մարշալի և նորից հերոսի կոչման, իսկ արդեն 1978 թ.՝ եռակի հերոսի կոչման և վերջա-

պես 1981 թ. քառակի հերոսի կոչման: Լ. Ի. Բրեժնևը նաև պարգևատրվել է Հաղթանակի շքանշանով, 8 ամգամ Լենինի շքանշանով և այլն: Ամրապնդելով իր դիրքերը՝ Լ. Ի. Բրեժնևը Քաղբյուրոյում ստեղծել էր միաստվածության մթնոլորտ, երկրում տեղի ունեցող արատավոր երևույթները անտեսելու, առաջնորդին մեծարելու, քծնելու մթնոլորտ:

Անշուշտ, երկրում տեղի էին ունենում նաև որոշ գործընթացներ, որոնք նպաստակ ունեին նպաստելու տեղական մարմինների աշխատանքների ակտիվացմանը: 1960-1970-ական թվականների սահմանագծում զգալի չափով ընդլայնվեցին գործադիր իշխանության մարմինների՝ տեղական սովետների (խորհուրդների) դերը, որոնք կոորդինացնում, վերահսկում էին ձեռնարկությունների, հիմնարկների, կոլտնտեսությունների, կրթական, գիտական, առողջապահական, սոցիալական և բազմաթիվ այլ օղակների, մարմինների գործունեությունը: Իրողություն էր նաև այն, որ որոշակի աշխուժություն էր նկատվում հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ: Ջգալի չափով խրախուսվում էին նաև աշխատավորական տարբեր կոլեկտիվների մախաձեռնությունները, մշտական գործող խորհրդակցությունները և այլն: Նման միջոցառումները տպավորություն էին ստեղծում, որ աշխատավորները մասնակցում էին երկրի, արտադրության, տնտեսության կառավարմանը, խնդիրների լուծմանը: Իրականում տեղական խորհուրդների կազմը, նրանում բանվորների, կոլտնտեսականների, մտավորականների թվի հարաբերակցությունը որոշում էին կուսակցական վերադաս մարմինները: Իսկ դա նշանակում էր, որ երկրի, հասարակության առջև ծառացած բոլոր խնդիրները լուծում, որոշում, ղեկավարում և ուղղություն էր տալիս խորհրդային հասարակության կառավարող ուժը՝ Կոմունիստական կուսակցությունը, որի շարքերում 1980-ական թվականների սկզբներին հաշվվում էր ավելի քան 19 մլն. մարդ²³:

Երկրում գնալով ավելանում էր վարչական ապարատի կազմը: Երկու տասնամյակի ընթացքում Համամիութենական մախարարությունների թիվը 29-ից հասավ 160-ի, և 1985 թ. նրանցում աշխատում էին մոտ 18 մլն. չինովնիկներ, տարբեր աստիճանի պաշտոնյաներ²⁴:

²³ *St'u Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 384-385; А. С. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Сивохина. История России. М., 2006, էջ 438-440:*

²⁴ *St'u А. С. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Сивохина. История России. М., 2006, էջ 440:*

Նման ահռելի թիվ, դեկավար կազմ ունեցող երկրի բարձրագույն իշխանությունները կարծեք թե չէին տեսնում երկրում հասունացող դժվարությունները, ստվերոտ կողմերն ու արատները: Դեռ ավելին, 1977 թ. հոկտեմբերի 7-ին ընդունվեց նոր Սահմանադրություն, որում հռչակվեց այն գաղափարը, որ ԽՍՀՄ-ում կառուցվել է զարգացած սոցիալիզմ, և երկրում ձևավորվել է մարդկանց նոր պատմական ընդհանրություն՝ խորհրդային ժողովուրդը: Սահմանադրությունում վավերացվում էր նաև այն գաղափարը, որ երկիրը անցում է կատարել պրոլետարիատի դիկտատուրայից դեպի բանվորների, գյուղացիների և մտավորականության համաժողովրդական պետության, որի գլխավոր հոգսը համարվում էր հոգատարություն յուրաքանչյուրի բարեկեցության նկատմամբ և յուրաքանչյուրի հոգատարությունը բոլորի նկատմամբ:

Սահմանադրությունում կարևոր տեղ էր տրվում սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացմանը, հասարակության և պետական իշխանության գործերին ժողովրդական լայն զանգվածների մասնակցությանը, հրապարակայնության ընդլայմանը, հասարակական կարծիքի հաշվի առնմանը և այլն:

Սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ անկախ նման կարգի հարցադրումներից, քաղաքական ազատությունների մասին հայտարարություններից և այլն, երկրի հասարակական կյանքում ավելի շատ նկատելի էին լճացման երևույթները և մարդկանց քաղաքական իրավունքների մասին հայտարարությունները անիրական էին և չէին կենսագործվում: Դա էր պատճառը, որ անգամ նման պայմաններում երկրում հասունանում և լայն տարածում էին ստանում այլախոհական շարժումը, մարդու իրավունքների համար պայքարը: Նման իրավիճակը հանգեցրեց նրան, որ իշխանությունների և այլախոհների, ընդդիմադիր ուժերի հակասությունները գնալով խորանում էին, հատկապես այն ժամանակ, երբ խորհրդային զորքերը 1968 թ. մտան Չեխոսլովակիա: Եվ քանի որ այլախոհական հայացքներ ունեցող ուժերը չէին կարող ազատ գործել, հրատարակել իրենց հայացքները, ուստի լայն տարածում գտավ գաղտնի հրատարակվող, այսպես կոչված, «սամիզդատները», որոնցում տարբեր հեղինակների կողմից ճշմարտացի դիրքերից գնահատական էր տրվում երկրի իրական վիճակին: Դրան հակառակ՝ Լ. Բրեժնևը և նրա շրջապատը, համախոհները ամեն ինչ արեցին նրա հեղինակությունը արհեստածին կերպով բարձրացնելու, նրան մեծարելու ուղղությամբ:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ 1960-1970-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1950-ական թվականների վերջերին և 1960-ական թվականների սկզբներին երկրում իրականացված տնտեսական ռեֆորմները ցանկալի արդյունքներ չտվեցին: Արտադրության աճի տեմպերը աստիճանաբար անկում էին ապրում, որը կապված էր կապիտալ ներդրումների ցածր փոխհատուցման հետ: 1962-1964 թթ. խրուշչովյան տնտեսական քաղաքականությունը երկիրը կանգնեցրեց տնտեսական ճգնաժամի առջև: Անհրաժեշտ էին տնտեսական նոր վերափոխումներ, որոնք վաղուց հասունացել էին, սակայն ընթացք չէին ստանում: Իշխանության եկած նոր ուժերը, հատկապես տեխնոկրատիայի ներկայացուցիչները, համախմբվեցին Ա. Ն. Կոսիգինի շուրջը և սկսեցին իրականացնել նոր տնտեսական ռեֆորմներ: Առաջին հերթին անհրաժեշտ էր քայլեր ձեռնարկել տնտեսության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Նախքան ռեֆորմների իրականացումը՝ երկրի նոր ղեկավարությունը կրկին վերադարձավ տնտեսության կառավարման ճյուղային սկզբունքներին՝ վերացնելով խրուշչովյան ժողտնտիսորհները և վերականգնելով կենտրոնացված ճյուղային նախարարությունները: Ստեղծվեցին երկրի տնտեսության կառավարման, պլանավորման այնպիսի նոր մարմիններ, ինչպիսիք են՝ ԽՍՀՄ Պետպլանը, Պետմատը (պետական մատակարարումների կոմիտեն), Պետական գնումների կոմիտեն և այլն:

1965 թ. ռեֆորմները սկսվեցին գյուղատնտեսությունից, որը խորհրդային տնտեսության ամենաճգնաժամային բնագավառներից մեկն էր: 1965 թ. ԽՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումը քննարկեց այդ հարցը, որի նախաձեռնողը Լ. Ի. Բրեժնևն էր: Ձեկուցելով այդ հարցի մասին՝ նա խնդիր դրեց ավելացնել այդ բնագավառին հատկացվող կապիտալ ներդրումները՝ միաժամանակ խթանելով աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Իսկ դա նշանակում էր, որ երկրի ղեկավարությունը քայլեր էր կատարում գյուղատնտեսության ինտենսիֆիկացման ուղղությամբ: Պլենումը խնդիր էր դնում, որպեսզի երկրի գյուղատնտեսությունը ստանա լրացուցիչ մեքենաներ, էլեկտրաէներգիա, հանքային պարարտանյութեր և այլն: Ընդհանուր առմամբ 1966-1980-ական թթ. գյուղատնտեսությանը հատկացված կապիտալ ներդրումները կազմել են 383 մլրդ. ռուբլի, որը գերազանցում էր նախկինում ագրարա-

յին բաժնին (սեկտորին) հատկացվող միջոցներն ավելի քան երեք անգամ²⁵:

Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ երկրի ղեկավարությունը որոշեց դուրս գրել պետական այն բոլոր պարտքերը, որոնք ունեին կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները (սովխոզները): Դեռ ավելին, որոշվեց բարձրացնել կոլտնտեսություններից գնվող մթեքների գները, իսկ պլանը կատարելուց զատ՝ լրացուցիչ արտադրանքի համար սահմանվեցին 50 % հավելավճարներ, որոնք զգալի չափով կարող էին նպաստել այդ ոլորտի աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացմանը:

Նորություն էր նաև այն, որ պետությունը կոլտնտեսականների համար սահմանեց երաշխավորված աշխատավարձ: Իսկ ընդհանուր առմամբ 1965-1977 թթ. ընթացքում պետության կողմից գյուղատնտեսական մթերքների գները բարձրացվեցին 1,5 անգամ՝ առանց փոխելու մանրածախ գները: Իջեցվեցին նաև կոլտնտեսությունների եկամտահարկերը, որն արդեն գանձվում էր մաքուր եկամուտներից:

1969 թ. կոլտնտեսությունների մախորդ երկրորդ համագումարից 35 տարի անց, հրավիրվեց 3-րդ համագումարը, որն ընդունեց մոր տիպային կանոնադրություն և վերացրեց կոլտնտեսականների վարձատրման հին աշխօրերով վճարման ձևը և սահմանեց ամենամսյա երաշխավորված վարձատրություն, ընդ որում դրամական մասը գերազանցում էր բնամթերքով վճարման ձևից: Կանոնադրությունում ամրագրվեց նաև կոլտնտեսականներին կենսաթոշակներ սահմանելու, արձակուրդ տալու կարգը և այլն²⁶:

Նման վերափոխումների հետևանքով 1970-ական թթ. գյուղական բնակչության կենսամակարդակը զգալի չափով բարելավվեց, չնայած դեռևս զգալի էր գյուղի և քաղաքի միջև տարբերությունը: Դա էր պատճառը, որ տարեկան գյուղից քաղաք էր տեղափոխվում 700 հազ. մարդ: Եվ արդեն 1970-ական թթ. կեսերին գյուղում կատարվող տնտեսական վերափոխումները ավելի շատ կրում էին դոտացիոն, լրավճարային և էքստենսիվ բնույթ²⁷:

Գյուղատնտեսության վերափոխումների հետ զուգընթաց վերափոխումներ էին կատարվում նաև արդյունաբերության բնագավառում, որի

²⁵ *Տե՛ս Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 395:*

²⁶ *Նույն տեղում, էջ 395-396:*

²⁷ *Տե՛ս А. Ю. Дворниченко, Ю. В. Тот, М. В. Ходяков, История России. М., 2008, էջ 355:*

սկիզբը դրվեց ԽՄԿԿ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումում: Արդյունաբերության բնագավառում իրականացվող ռեֆորմները գլխավորապես վերաբերում էին երեք ոլորտների. պլանային ցուցանիշների և հաշվետվությունների փոփոխություն, ձեռնարկությունների ինքնուրույնության ընդլայնում և բանվորների նյութական շահագրգռվածության բարձրացում: Ձեռնարկությունների պլանային ցուցանիշները 30-ից իջան մինչև 9-ի: Համախառն, ծավալային արտադրանքի ցուցանիշին, որով որոշվում էր արտադրանքի արդյունավետությունը, ավելացվեց նաև իրացված արտադրանքի արժեքը: Իսկ դա նշանակում էր, որ ձեռնարկությունները այժմ արդեն շահագրգռված էին ոչ միայն արտադրանքի համար, այլ նաև արտադրանքը իրացնելու համար: Նորություն էր նաև այն, որ ձեռնարկությունները ստացան հարաբերական իմաստով ինքնուրույնություն արտադրանքի ներքին պլանավորման հարցում: Մյուս նորությունն այն էր, որ արտադրության ավելացումը շահագրգռելու նպատակով ձեռնարկությունների շահույթը թողնվում էր ձեռնարկությանը ինքնուրույն տնօրինելու, որն էլ հնարավորություն էր տալիս ձեռնարկություններին ստեղծելու խթանման ֆոնդեր, որոնք օգտագործվում էին ձեռնարկության ընդլայնման և այլ կարիքների համար:

1966 թ. արդյունաբերական ձեռնարկությունները սկսեցին անցնել աշխատանքի նոր պայմանների, և 1970 թ. վերջում 49 հազար ձեռնարկություններից 41 հազարը արդեն անցել էր աշխատանքի նոր մեթոդների, իսկ 1972 թ. նման մեթոդներով աշխատում էր ձեռնարկությունների 90 % -ը²⁸:

Հարկ է նաև ընդգծել, որ երկրում իրականացվող ռեֆորմները հեշտությամբ չէին ճանապարհ հարթում: Խնդիրն այն էր, որ անկախ տնտեսության մեջ կատարվող նման բարեփոխումներից, շատ նախարարություններ, գերատեսչություններ շարունակում էին աշխատել հին մեթոդներով՝ ուռճացնելով իրենց ապարատը: Դեռ ավելին, ամենաբարձր դիրքերում գտնվող առանձին պաշտոնյաներ մույնիսկ դեմ էին ռեֆորմների իրականացմանը՝ գտնելով, որ երկիրը դեռ պատրաստ չի նման բարեփոխումների: Դրանց շարքում նման դիրքորոշումով աչքի էր ընկնում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ, ԽՄԿԿ Կենտկոմի

²⁸ *Տե՛ս Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 397; В. А. Шестаков. Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 370:*

Քաղբյուրոյի անդամ Ն. Վ. Պոտոռոնին՝ գտնելով, որ երկրում ռեֆորմների համար պայմանները դեռևս չէին հասունացել²⁹:

Բայց, այնուամենայնիվ, արդյունաբերության բնագավառում կատարված անգամ մասնակի ռեֆորմները տվեցին իրենց արդյունքները: Բավական է ասել, որ 8-րդ հնգամյակի ընթացքում (1965-1970 թթ.) ձեռք բերված հաջողությունները լավագույնն էին հետպատերազմյան բոլոր տարիների համեմատ: Նույնիսկ պաշտոնական, թեկուզ և չափազանցված թվերի պայմաններում, համախառն արդյունքը ավելացել էր 43 %-ով, ազգային եկամուտը՝ 45 %-ով, իսկ արդյունաբերության արտադրանքը՝ 50 %-ով:

Սակայն, ցավոք, ռեֆորմների նախաձեռնող Ա. Ն. Կոսիգինին այդպես էլ չհաջողվեց իր մտադրությունները հասցնել ավարտին: Չնայած Ա. Ն. Կոսիգինը մինչև 1980 թ. հոկտեմբերը շարունակում էր մնալ Խորհրդային Միության Մինիստրների խորհրդի նախագահ, միևնույն է մա չէր որոշում երկրի տնտեսական զարգացման ուղղությունը: Քաղբյուրոյում ավելի շատ մեծամասնություն էին կազմում պահպանողական մտածողության տեր մարդիկ, ովքեր էլ աստիճանաբար ետ կանգնեցին ռեֆորմներից, մանավանդ որ դրանք չէին շոշափում քաղաքական վերափոխումների բնագավառները:

1970-ական թվականներին հատկապես արդյունաբերության բնագավառում ավելի շատ ուշադրություն էին դարձնում տերիտորիալ-արտադրական համալիրների ստեղծմանը: 1974 թ. ԽՄԿԿ Կենտկոմը ընդունեց որոշում «Բայկալ-Ամուրյան երկաթուղու մայրուղու շինարարության» մասին (ԲԱՄ), որն ուներ 3200 կմ երկարություն և 1974-1984 թթ. իրար էր միացնում Արևելյան Սիբիրը և Հեռավոր Արևելքը:

Բավական բարձր տեմպերով էր զարգանում երկրի էներգետիկայի բնագավառը: Այդ տարիներին էր, որ շարք մտան ատոմային էլեկտրակայանների նոր հզորություններ՝ Չեռնոբիլի, Կուրսկի, Բելոյարսկի, Հայաստանի և այլ ատոմակայաններ: Չնայած ճշմարտությունը մաս այն է, որ երբեմն հաշվի չէին առնվում տեղանքի սեյսմիկ առանձնահատկությունները: Դա հատկապես վերաբերվում էր Երևանի, Գրիմի ատոմակայաններին և այլն:

Այդ ընթացքում ձևավորվում է մաս միասնական էներգետիկ համակարգ, որը միավորում էր բազմաթիվ հիդրոէլեկտրակայաններ: Էներգետիկայի և վառելիքահումքային ոլորտների զարգացումը ավելի շատ ընթանում էր էքստենսիվ՝ լայնակի զարգացման ուղիով: Վառելիքահում-

²⁹ *Տե՛ս Новейшая история России. М., Владимир, էջ 370:*

քային (նավթ, գազ) արտադրանքի արտահանման բաժինը 1960-1985 թվականներին 16,2 %-ից հասավ 54,4 %-ի: Սակայն բոլոր դեպքերում, անկախ այդ քայլերից, վերափոխումները և դրանց արդյունքները բավական դանդաղ էին տեղի ունենում: Դա հատկապես վերաբերում էր գյուղատնտեսությանը, մանավանդ, որ 1969, 1972, 1974, 1975, 1979, 1980 և մի շարք այլ տարիներ եղել են անբերրի: Նման պայմաններում երկրի ղեկավարությունը ստիպված էր այլ երկրներից իրականացնել հացահատիկի ներկրումներ: Միայն 1979-1984 թթ. երկրի տարեկան ներմուծել էր 40 մլն. տոննա պարենամթերք³⁰:

Բնական է, որ այդ բոլորը չէր կարող չանդրադառնալ մարդկանց սոցիալական վիճակի վրա, որոնց ռեալ եկամուտների աճը գնալով կրճատվում էր և արդեն 1970-ական թվականների վերջերին դադարեցվեցին: Հատկապես քիչ ջանքեր էին գործադրվում մարդկանց բնակարանային պայմանների բարելավման, սննդամթերքով մատակարարման, տրանսպորտի կազմակերպման, բժշկական սպասարկման, կրթության և այլ ոլորտներում:

Ոչ պաշտոնական տվյալներով մարդկանց ռեալ աշխատավարձը 1970-ական թվականներից մինչև 1985 թ. իջել էր 20 %-ով³¹:

Ընդհանուր առմամբ երկրի տնտեսական աճի տեմպերը գնալով կրճատվում, նվազում էին: Դա շատ ավելի լավ երևում է, երբ մենք այդ ցուցանիշները վերլուծում ենք երկար կտրվածքով: Բավական է ասել, որ արդյունաբերական արտադրանքի միջին տարեկան աճը, ըստ պաշտոնական տվյալների, 1951-1955 թթ. կազմել է 13,1 %, 1956-1960 թթ. 10,3 %, 1961-1965 թթ. 8,6 %, 1966-1970 թթ. 8,5%, 1971-1975 թթ. 7,4 %, 1976-1980 թթ.՝ 4,4 %:

Եվ որքան էլ որ երկրի կուսակցական-պետական ղեկավարությունը փորձում էր դրանք բացատրել օբյեկտիվ գործոններով, անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակով, աշխատունակ բնակչության տեսակարար կշռի, վառելիքաէներգետիկ պաշարների կրճատումով և արդյունահանման, տեղափոխման թանկացումով, սարքավորումների բարդական մաշվածքով, ռազմական ծախսերի ավելացումով և այլն, որոնք իրոք բացասաբար են անդրադարձել տնտեսության վրա, այնուամենայնիվ գլխավոր պատճառը աշխատանքի կազմակերպման սոցիալիստական բնույթի, ձևի մեջ էր, որը արդյունավետ ձևով չէր օգտագործում երկրի հարուստ հումքային ռեսուրսները, պաշարները, մարդկանց ինտելեկտուալ ներուժը: Այդ իմաստով էլ երկրի ղեկավարության հայտա-

³⁰ *St'u Новейшая история России. 1914-2008. М., 2008.*, էջ 401:

³¹ *St'u Новейшая история Отечества XX века. В. двух томах. Т. 2, էջ 327:*

րարությունները ռեֆորմների, ծրագրերի ընդունման մասին, մնում էին սոսկ ղեկավարտիվ փաստաթղթեր, որոնցից կյանքը չէր փոխվում:

Անհրաժեշտ էին ավելի արմատական վերափոխումներ, որոնք կապված էին 1980-ական թվականների երկրորդ կեսի հետ:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՋԲՆԵՐԻՆ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1960-1980-ական թվականների սկզբներին բրեժնևյան ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց վերանայելու մաս երկրի արտաքին քաղաքականության շատ հարցեր:

1966 թ. մարտին կուսակցության 23-րդ համագումարում խրուշչովյան խաղաղ գոյակցության քաղաքականությունը ենթարկվեց քննադատության՝ համարվելով որպես նահանջ մարքսիզմ-լենինիզմից և պացիֆիզմի դրսևորում: Իսկ դա նշանակում էր, որ երկրի նոր ղեկավարությունը որդեգրում էր ավելի կոշտ արտաքին քաղաքականություն՝ նպատակ ունենալով Արևմուտքի հետ հաստատել ռազմական հավասարակշռություն: Միաժամանակ Խորհրդային Միությունը քայլեր էր ձեռնարկում միջազգային հարաբերություններում ակտիվացնելու և ամրապնդելու իր դերակատարությունը: Դա առաջին հերթին վերաբերում էր սոցիալիստական ճամբարի երկրներում Խորհրդային Միության խախտված դիրքերի վերականգնմանը: Խնդիրն այն էր, որ գաղափարական որոշակի և սուր տարածայնություններ կային Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, լատվաժություն «ազատության կղզի» Կուբայի, Վիետնամական Ժողովրդական Հանրապետության և այլ երկրների հետ, որոնք կարող էին ի վերջո հանգեցնել կոմունիստական շարժման և սոցիալիստական ճամբարի պառակտմանը: Սոցիալիստական ճամբարի պառակտումը ավելի խորացվեց, երբ Խորհրդային Միության և Վարշավայի պայմանագրի մի շարք երկրների գործերը 1968 թ. ամռանը մտան Պրագա՝ կանխելու երկրում ծավալվող «հակասոցիալիստական հեղաշրջումը»:

1965 թվականից Խորհրդային Միությունը Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությանը ցույց էր տալիս ոչ միայն դիվանագիտական, այլ մաս ֆինանսական ու ռազմական օգնություն: Այդ հանգամանքն էլ ավելի սրեց խորհրդա-ամերիկյան հարաբերությունները:

Խորհրդային Միության ղեկավարության այն հաշվարկը, որ օգնությունը Վիետնամին կնպաստի խորհրդա-չինական հարաբերություններ-

րի ավելի բարգավաճմանը, չարդարացվեցին, որն էլ ի վերջո 1960-ական թթ. ավարտին (1969 թ.) հանգեցրեց երկու երկրների միջև ռազմական բախման, որին զոհ գնացին տասնյակ մարդիկ³²:

Միջազգային հարաբերությունների լարվածության թուլացման նպատակով 1969 թ. Խորհրդային Միության նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան քննարկեց և հավանության արժանացրեց միջուկային զենքի տարածման մասին պայմանագրի առաջարկը: Պայմանագիրը արգելում էր միջուկային զենքի տարածումը այն երկրներում, որոնք չէին տիրապետում այդ զենքին կամ էլ չէին մտնում ռազմական դաշինքների մեջ: Պայմանագիրը նախատեսում էր, որ այն չպետք է դուրս գար հինգ տերությունների՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի շրջանակներից, որոնք տրիապետում էին այդ զենքին: Այդ պայմանագրին հենց սկզբից միացավ Ֆեդերատիվ Գերմանիան, որը հրաժարվեց սեփական միջուկային զենք ունենալուց: ԳՖՀ-ի այդ քաղաքականությունը կապված էր սոցիալ-դեմոկրատ Վիլլի Բրանդտի գլխավորած կառավարության մոտեցումների հետ: ԳՖՀ կանցլեր Վիլլի Բրանդտը, գնահատելով հետպատերազմյան ժամանակաշրջանում Գերմանիայի վարած արտաքին քաղաքականությունը, այն դիտում էր որպես շրջադարձ, որը հասկանալի է միանգամից վստահություն և փոխըմբռնում չէր կարող գտնել Խորհրդային Միության կողմից:

Հետագայում, անդրադառնալով այդ հարցերին, Վիլլի Բրանդտը իր մեմուարներում գրում է, որ ռուսների կողմից գերմանացիների նկատմամբ դեռևս պահպանվում էին իրական վտանգի զգացումներ, որոնք, ըստ Վ. Բրանդտի, Լ. Բրեժնևի կողմից մեկնաբանվում էր որպես ժողովրդական անկեղծ զգացում, քանզի անցումը դեպի լավը այդքան էլ հեշտ գործ չէր, որովհետև երկու երկրների և ժողովուրդների միջև գոյություն ուներ բավական դժվար անցյալ³³:

Սակայն իրողություն է նաև այն, որ 1960-1970-ական թվականներին միջազգային հարաբերություններում տեղի էին ունենում որոշակի դրական տեղաշարժեր, հատկապես զարգացած կապիտալիստական երկրների հետ: 1966 թ. Ֆրանսիայի նախագահ Շառլ դե Գոլը այցելեց Խորհրդային Միություն, որի արդյունքում ստորագրվեց խորհրդա-ֆրան-

³² Տե՛ս *В. А. Шестаков. Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 374:*

³³ Տե՛ս *Джозеппе Боффа. От СССР к России. М., 1996, էջ 32:*

սիական հռչակագիր: Կողմերը համաձայնության եկան տիեզերական տարածության խաղաղ յուրացման, տնտեսական կապերի զարգացման և այլ հարցերի շուրջ:

ԽՄԿԿ 24-րդ համագումարը (1971 թ.) հանդես եկավ նոր խաղաղության ծրագրով: Հիրաժարվելով ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթանակի համար պայքարից՝ Խորհրդային Միությունը հանդես եկավ միջազգային լարվածության թուլացման նոր առաջարկներով: 1970-ական թվականները ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի համար դարձան միջուկային զենքի հարձակման կանխման և արգելման համար բանակցությունների տարիներ:

Այդ իմաստով արևմտյան պատմագիտությունը ևս դրական է գնահատում ԽՍՀՄ-ի այն քայլերը, որոնք ուղղված էին միջուկային զենքի կրճատման, ատոմային պատերազմի կանխարգելման հարցերին՝ շատ լավ հասկանալով դրանց կործանարար նշանակությունը ինչպես երկու կողմերի, այնպես էլ ողջ մարդկության համար: Կարևոր իրադարձություն էր ստրատեգիական զենքի կրճատման մասին պայմանագիրը, որը դիտվում էր որպես միջազգային լարվածության լիցքաթափման քաղաքականություն: Դա հնարավոր դարձավ, երբ 1972 թ. մայիսին ԱՄՆ-ի նախագահ Ռ. Նիքսոնը պաշտոնական այցով ժամանեց Մոսկվա, որի արդյունքում ստորագրվեց երկու պայմանագիր՝ հարձակողական տիպի զենքի կրճատման մասին (OCB-1) և հակահրթիռային պաշտպանության միջոցառումների մասին (ՀՈՕ):

Հետագա տարիներին ևս խորհրդա-ամերիկյան հարաբերությունները էլ ավելի բարելավվեցին՝ կրելով կառուցողական բնույթ:

1973 թ. Լ. Ի. Բրեժնևը պաշտոնական այցով մեկնեց ԱՄՆ, որտեղ կողմերը կրկին համաձայնության եկան միջուկային պատերազմի կանխման շուրջ: Այդ այցի ժամանակ կողմերը կնքեցին շուրջ 20 պայմանագիր, որոնք վերաբերում էին տարբեր բնագավառների, այդ թվում նաև «Մոյուզ-Ապոլոն» ծրագրին (իրականացվեց 1975 թ.): Իսկ արդեն 1974 թ. Դրիմում երկու երկրների ղեկավարների հանդիպումը կարևոր էր նրանով, որ կողմերը համաձայնության եկան սահմանափակել ատոմային զենքի ստորգետնյա փորձարկումները: Ընդ որում այդ հանդիպումը ունեցավ իր շարունակությունը այն իմաստով, որ նույն՝ 1974 թ. նոյեմբերին Վլադիվաստոկում տեղի ունեցավ Լ. Բրեժնևի հանդիպումը ԱՄՆ-ի արդեն նոր նախագահ Ջորջ Ֆորդի հետ, որտեղ պայմանավորվածություն ձեռք բերվեց համաձայնության գալու արդեն «OCB-2»

ծրագրի շուրջ, սակայն խորհրդային գործերի մուտքը Աֆղանստան և շարունակվող պատերազմը (1979-1989 թթ.) հանգեցրին այդ ծրագրի հաստատման ձախողմանը և ռազմական լարվածության ուժեղացմանը:

Բայց բոլոր դեպքերում միջազգային համարության պահանջը պետությունների միջև համագործակցության զարգացումը և լարվածության թուլացումն էր, որի բարձրակետը այդ տարիներին հանդիսացավ 1975 թ. Հելսինկյում հրավիրված եվրոպական 33 երկրների և ԱՄՆ-ի ու Կանադայի ղեկավարների խորհրդակցությունը, որն ընդունեց «Երկրների միջև համագործակցության և փոխհարաբերությունների մասին հռչակագիր»³⁴:

Հելսինկյան հռչակագիր-եզրափակիչ ակտում սահմանվեցին մասնակից պետությունների միջև հարաբերությունները կարգավորող սկզբունքները, որոնք գլխավորապես հանգում էին ինքնիշխանության իրավունքներին, ուժի սպառնալիքի կիրառման վերացմանը, պետությունների տարածքային ամբողջականության ընդունմանը, վիճելի հարցերի քաղաքական ճանապարհով կարգավորմանը, մարդու իրավունքների հարգմանը, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքների ճանաչմանը:

Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներին հետևելը դարձավ միջպետական և միջազգային հարաբերությունների կարևոր սկզբունքներից մեկը, որի պատճառով էլ մասնակից երկրները ճանաչեցին Երկրորդ աշխարհամարտից հետո եվրոպական երկրների միջև ձևավորված սահմանները՝ որպես անխախտելի իրողություն և կայունության կարևոր պայման: Ի դեպ, եվրոպական երկրները այդ ընդհանրությանը եկան Երկրորդ աշխարհամարտի ավարտից միայն 30 տարի անց:

Սակայն, ցավոք, աշխարհում սկսված զինաթափման գործընթացը կարճ կյանք ունեցավ: Խորհրդային Միության կողմից միջուկային սպառազինության բնագավառում հավասարակշռության հասնելը դեկավարության շրջանում ստեղծվեց այն կարծիքն ու մտայնությունը, որ կարելի է այդ հանգամանքը օգտագործել և առավելության հասնել կապիտալի աշխարհի նկատմամբ՝ ցանկանալով նրան թուլացնել:

Եվ իրոք, 1970-ական թվականների վերջերին աշխարհում լարվածությունը կրկին գնալով մեծանում էր: Միայն այն փաստը, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում 104 պետություններ դատապարտեցին խոր-

³⁴ Sk' u A. C. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Силькина. История России. М., 2006, էջ 449, ԵԱՀԿ Հելսինկի 1975. *Եզրափակիչ ակտ*, Երևան, 2007, էջ 8-13:

հըրդային գորքերի մուտքը Աֆղանստան, խոսում է այն մասին, որ աշխարհի պետությունների մեծ մասը ձգտում էր երկրների միջև հաստատել խաղաղություն և համդուրժողականություն, որին հասնելը բավական դժվար էր: Եվ ինչպես ԱՄՆ-ը Վիետնամում, այնպես էլ ԽՍՀՄ-ը Աֆղանստանում բախվեցին լուրջ բարդությունների և խոչընդոտների հետ:

Իսկ այդ բարդությունները կայանում էին նրանում, որ ԽՍՀՄ-ը և Արևմուտքը տարբեր կերպ էին ընկալում և հասկանում միմյանց նկատմամբ ունեցած մոտեցումները: Յուրաքանչյուր կողմ ցանկանում էր գինաթափման պտուղներն օգտագործել իր շահերի համար: Խորհրդային Միությունը փորձում էր գերազանցության հասնել Արևմուտքի նկատմամբ, իսկ Արևմուտքը ամեն ինչ անում էր քանդել, վերացնել սոցիալիստական երկրների միջև ստեղծված խորհրդային ռազմական դաշինքը:

Այդ մույն տարիներին էլ ԱՄՆ-ում իշխանության եկավ ԽՍՀՄ-ի նկատմամբ կոշտ քաղաքականության կողմնակից Ռոնալդ Ռեյգանը, որը ԽՍՀՄ-ը համարում էր «չարիքի կայսրություն»: ԱՄՆ-ը սկսեց մշակել ռազմավարական պաշտպանության մախաձեռնության մոր պլան (COI), որը ստացավ, պատկերավոր ասած, «տիեզերական պատերազմ» անվանումը:

Ձգտելով մեղմել լարվածության հետագա էսկալացիան, ռազմական մրցավազքի, գործողությունների հետագա ծավալումը՝ 1982 թ. մոյեմբերին իշխանության եկած Յու. Վ. Անդրոպովը գնաց որոշ զիջումների՝ առաջարկելով կրճատել Խորհրդային Միության եվրոպական մասի հրթիռները, ինչպես նաև աֆղանական խնդրի կարգավորման համար բանակցությունների մեջ ներգրավել նաև պակիստանյան կողմին:

1983 թ. հունիսին հրավիրվեց ԽՄԿԿ Կենտկոմի հատուկ պլենում, որը համակողմանիորեն վերլուծեց զարգացած սոցիալիզմի խնդիրները, երկրի ներքին և արտաքին քաղաքականության հարցերը: Զննադատելով կայունացած, քարացած որոշակի ստերեոտիպները, որոշակի սկզբունքների անառարկելի պնդումները՝ Յու. Վ. Անդրոպովը հայտարարեց, որ իրենք չգիտեն այն հասարակարգը, որում ապրում են³⁵: Նման հարցադրումը ենթադրում էր մոռովի նայել որոշակի խնդիրների, նորացնել գաղափարական, քաղաքական շատ հարցեր, դիրքորոշումներ: Սակայն 1984 թ. փետրվարին Յու. Վ. Անդրոպովի հանկարծակի մահը

³⁵ *Տե՛ս Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 388:*

կանխեց խորհրդային հասարակության և վերափոխումների իրականացման շատ ծրագրեր:

Երկրի մոր ղեկավարությունը՝ «դնեպրոպետրովսկայան խմբի» ներկայացուցիչ Կ. ՈՒ. Չեռնենկոն, մեկ տարվա Կենտկոմի Գլխավոր քարտուղար լինելու ընթացքում քայլեր ձեռնարկեց կրկին վերադառնալու բրեժնևյան ժամանակաշրջանի մեթոդներին, որոնք չէին կարող ցանկալի արդյունքներ տալ: Կ. ՈՒ. Չեռնենկոյի կարճընթաց կառավարումը (մահացավ 1985 թ. մարտին) կանխեց բրեժնևյան մեթոդներին վերադառնալու նրա ծրագրերը: Անհրաժեշտ էին մոր մարդիկ, մոր սոստեցումներ երկրի ներքին և արտաքին քաղաքականության բոլոր բնագավառներում, հասարակության նորացման և վերափոխման անչափ կարևոր գործում:

Գ Լ ՈՒ Խ 4

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԳՈՐԲԱՇՈՎՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

1. ԳՈՐԲԱՇՈՎՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

1980-ական թթ. կեսերին խորհրդային համակարգի ճգնաժամը կրում էր բացահայտ բնույթ: 1985 թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար դարձավ Մ. Ս. Գորբաչովը: Նրա ընտրությունը կապված էր Արտաքին գործերի նախարար Ա. Ա. Գրոմիկոյի անվան և աջակցության հետ, ինչպես նաև Կենտկոմի Քաղբյուրոյի անդամների ցանկության հետ, որոնք ցանկանում էին վերջացնել այսպես կոչված «գլխավորների հուղարկավորության հնգամյակը»: Բանն այն էր, որ 1982-1985 թթ. իրար հետևից մահացան կուսակցության Կենտկոմի Գլխավոր քարտուղարներ Լ. Ի. Բրեժնևը, Յու. Անդրոպովը և Կ. Ու. Չեռնենկոն: Նրանց նոր ղեկավարությունը ձեռնամուխ եղավ արմատական վերափոխումների, որոնք ընդգրկում էին հասարակական-քաղաքական, տնտեսական, հոգևոր կյանքի բոլոր բնագավառները: Նման վերափոխումները կապված էին նաև այն մարդկանց հետ, ովքեր գորբաչովյան կառավարման տարիներին ստանձնեցին պետության կառավարման ղեկը: 1985 թ. Կենտկոմի ապրիլյան պլենումում Քաղբյուրոյի անդամներ դարձան Գորբաչովի կողմնակիցներ Ե. Կ. Լիգաչովը (ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար), Ն. Ի. Ռիժկովը (Մինիստրների Խորհրդի նախագահ), Ս. Լ. Սոկոլովը (Խորհրդային Միության պաշտպանության նախարար), Վ. Մ. Չեբրիկովը (Պետական Անվտանգության Կոմիտեի նախագահ), Է. Ա. Շևառնաձեն (Արտաքին գործերի նախարար): Ի դեպ, 1985 թ. հուլիսից Ա. Ա. Գրոմիկոն արդեն դարձել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ:

Ընդհանուր առմամբ 1985-1987 թթ. ընթացքում Մ. Ս. Գորբաչովին հաջողվեց ավարտին հասցնել Յու. Վ. Անդրոպովի ժամանակներից սկսած կադրային փոփոխությունները, այսպես կոչված «կադրերի մաքրումը»: Երեք տարիների ընթացքում ԽՄԿԿ Կենտկոմի անդամների 85 %-ը նորացվեց, որն ի դեպ ավելի շատ էր, քան ստալինյան 1934-1939 թթ. «կադրերի մաքրումը»՝ մոտ 77 %-ը³⁶:

Միաժամանակ կադրային փոփոխությունների հետ սկսվեց նաև խորհրդային հասարակության վերափոխման գործընթացը, որն առաջին հերթին ուղղված էր կոռուպցիայի և նոմենկլատուրայի (անվանակարգության) դեմ: Այդ խնդիրներում Մ. Գորբաչովին աջակցում էր Մոսկվայի Քաղկոմի քարտուղար, Վ. Վ. Գրիշինին փոխարինած Բ. Ն. Ելցինը:

Մ. Ս. Գորբաչովը և նրա հետ իշխանության եկած նոր ուժերը սկսեցին ձեռնամուխ լինել վերափոխումների այն քաղաքականությանը, որն էլ պատմության մեջ հայտնի է որպես նախազարգացման (ԽՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենում) և վերակառուցման (ԽՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունվարյան պլենում) քաղաքականություն:

Խորհրդային Միության նորացման, վերափոխումների գորբաչովյան կուրսը բխում էր նրանից, որ 1970-1980-ական թթ. աշխարհն արդեն վաղուց սկսել էր անցում կատարել գիտատեխնիկական հեղափոխության մի նոր ժամանակաշրջան, որը հայտնի է որպես «միկրոէլեկտրոնային հեղափոխության», հետինդուստրիալ, տեղեկատվական հեղափոխության նոր փուլ: Իսկ դա նշանակում էր, որ այժմ արդեն երկրի հզորությունը որոշվում էր ոչ թե նրանով, թե ով որքան տոննա պողպատ էր ձուլում կամ էլ քարածուխ արտահանում, այլ նրանով, թե ինչպիսի տեղեկատվական տեխնոլոգիաների էր տիրապետում տվյալ երկիրը: Իսկ այդ չափանիշներով Խորհրդային Միությունը տասնյակ տարիներով հետ էր մնում ոչ միայն եվրոպական զարգացած ինդուստրիալ երկրներից, այլև Հարավային Կորեայից, Թայվանից և այլն:

Բավական է ասել, որ 1985 թ. ԱՄՆ-ի համախառն ազգային եկամտի 67 %-ը արտադրվում էր սպասարկման, առևտրի, տրանսպորտի ոլորտներում և միայն 31 %-ը բաժին էր ընկնում արդյունաբերության և շինարարության ոլորտներին: Մինչդեռ այդ հարաբերակցությունը Խորհրդային Միությունում ուներ հետևյալ պատկերը՝ 38 և 45%:

³⁶ *St'e'u Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 388-389:*

Խորհրդային տնտեսությունը 1970-80-ական թթ. շարունակում էր զարգանալ էքստենսիվ-լայնակի ուղիով, որի արդյունքում տեղի էր ունենում ազգային եկամտի աճի, ազգային համախառն արտադրանքի և ֆոնդահատուցման ու կապիտալ ներդրումների արդյունավետության անկում: Այդ տարիներին ևս երկրի տնտեսության հիմքում ընկած էր ծանր արդյունաբերության հնացած, բարոյական մաշվածք ստացած ճյուղերը, որոնց ծավալային արտադրանքով Խորհրդային Միությունը շարունակում էր աշխարհում գրավել առաջին տեղը: Իսկ դա նշանակում էր, որ երկրի տնտեսությունը գուրկ էր աճի ներքին խթանման ազդակներից և դրդապատճառներից, որի նորացման համար պահանջվում էին հսկայական ծախսեր: Հումքային ճյուղերի գերաճը՝ հիպերտրոֆիան, որը հիմնականում արտադրում էր հումք, փաստորեն երկիրը վեր էր ածել Արևմուտքի համար «հումքային հավելուկի, կցորդի»:

Եվ որպեսզի երկիրը կարողանար զարգացած երկրներից ներկրել, գնել նորագույն տեխնոլոգիաներ և պարենամթերք, ստիպված էր ավելի մեծ քանակությամբ հումք մատակարարել Արևմուտքի և աշխարհի մյուս երկրներին:

1985 թ. սարքավորումներ և հաց գնելու նպատակով երկիրը տրամադրեց իր նավթի արտադրանքի 20 %-ը, գազի՝ 11 %-ը, հանքային պարարտանյութերի 31 %-ը, բամբակի 24 %-ը և այլն: Մյուս առանձնահատկությունն այն էր, որ երկրի տնտեսությունը ծայրահեղ միլիտարացված՝ ռազմականացված էր, քանզի երկրի պաշտպանությունը համարվում էր պետության առաջնային գերակա քաղաքականությունը: Երկրի ռազմական ծախսերի բաժինը կազմում էր ընդհանուր համախառն արտադրանքի 20-25 %-ը: Ռազմական տեխնիկայի արտադրությունը կազմում էր մեքենաշինության ընդհանուր արտադրանքի ավելի քան 60 %-ը: Ընդհանուր առմամբ արդյունահանող և վերամշակող արտադրության ճյուղերում ընդգրկված աշխատողների մեկ երրորդը անմիջականորեն աշխատում էր ռազմական կարիքների համար:

1970-80-ական թթ. ռազմական կարիքների համար Խորհրդային Միությունը որոշ հաշվարկներով ծախսում էր 700 մլրդ. ռուբլի: Արտասահմանյան աղբյուրների համաձայն ռազմական արդյունաբերության ոլորտում ԽՍՀՄ-ում աշխատում էին 2-3 անգամ ավելի շատ աշխատողներ, քան ԱՄՆ-ում (համապատասխանաբար 5.8 մլն. և 2.2 մլն. մարդ)³⁷:

³⁷ *Տե՛ս В. А. Шестаков, Новейшая история России, М., Владимир: 2008; էջ 380-381:*

Դժվար չէ տեսնել, որ նման վիճակը վաղ թե ուշ հանգեցնելու էր երկրի տնտեսության քայքայմանը, ճգնաժամին:

Հասարակության նորացման նոր կուրսը մշակվեց ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1985 թ. ապրիլյան պլենումում: Պլենումում խնդիր դրվեց ձեռնամուխ լինել հասարակության որակական փոփոխությունների իրականացմանը՝ գտնելով, որ առանց հասարակության համակողմանի նորացման, որի անկյունաքարային հարցը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումն էր, հնարավոր չէր երկիրը հանել ճգնաժամից:

Պլենումը նորովի գնահատելով Խորհրդային Միությունում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները՝ առաջ քաշեց խորհրդային հասարակության հետագա վերափոխումների և որակապես նոր վիճակի հասնելու անհրաժեշտությունը, որը հնարավոր էր իրականացնել արտադրության գիտատեխնիկական նորացման և աշխատանքի արտադրականության մակարդակով համաշխարհային չափանիշներին հասնելու ճանապարհով: Այդ քաղաքականությունն էլ ստացավ «արագացման» կուրս անվանումը, որը ենթադրում էր երկրի տնտեսությունը զարգացնել ինտենսիվ ուղիով՝ օգտագործելով գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները, որոնց իրականացումը թելադրված էին պատմական անհրաժեշտությամբ և կոչված, ուղղված էին հասնելու սոցիալական հասարակության որակապես նոր աստիճանի: Երկրի ղեկավարությունը համոզված էր, որ առանց գիտատեխնիկական առաջընթացի հնարավոր չէր լուծել երկրի առջև ծառացած խնդիրները, էականորեն բարձրացնել մարդկանց կենսամակարդակը և կապիտալիզմի հետ տնտեսական մրցույթում ապահովել սոցիալիզմի գերազանցությունը և հաղթանակը: Բայց որքան էլ որ Մ. Գորբաչովը և նրա հետ իշխանության եկած նոր ուժերը գիտակցում էին վերափոխումների անհրաժեշտությունը և դրանում ընդգրկում էին նաև ժամանակի լավագույն գիտական ուժերին, ճանաչված գիտնականներին՝ Ա. Գ. Ալանբեկյան, Լ. Ի. Աբալկին, Օ. Տ. Բոգոմոլով, Ե. Մ. Պրիմակով և ուրիշներ, այնուամենայնիվ, ի վերջո ամեն ինչ հանգում էր գործող պետական կառավարման մեխանիզմի կատարելագործմանը և վերադարձը դեպի սոցիալիզմի լենինյան մոդելին, հայեցակարգին, սոցիալիզմը դեմոկրատիային միացնելուն և այլն:

Մ. Ա. Գորբաչովը կարևոր էր համարում նաև «մարդկային գործոնը», աշխատանքային կարգապահության ամրապնդումը և այլն:

Վերակառուցման առաջին շրջանում ամեն ինչ հանգում էր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացմանը, և միայն երկու տարի

անց, ինչ-որ չափով ուշացումով երկրի ղեկավարությունը հանգեց այն գիտակցությանը, որ անհրաժեշտ է վերակառուցումը, վերափոխումը իրականացնել, տարածել նաև քաղաքական կյանքում, որն արդեն կարող էր ունենալ այլ հետևանքներ:

Բայց դեռ 1986 թ. փետրվարին կուսակցության 27-րդ համագումարում երկրի ղեկավարությունը շարունակում էր հաստատել այն ճշմարտությունը, որ երկրի ընտրած կուրսը ճիշտ է և ուղղված էր արագացնելու տնտեսության զարգացումը և կատարելագործելու սոցիալիստական հասարակարգը: ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը ամեն ինչ անում էր, որպեսզի հաղթանակեր սոցիալիզմի «մարդկային դեմքով» մոդելը, տնտեսաձևը:

1986 թ. Մ. Ս. Գորբաչովը հրատարակեց բավական մեծ հնչեղություն ունեցող մի աշխատություն, ընդ որում սկզբում Արևմուտքում, իսկ հետո ԽՍՀՄ-ում, որը կոչվում էր «Վերակառուցումը և նոր մտածողությունը մեր ժողովրդի և ամբողջ աշխարհի համար», որտեղ այն գիծն էր հիմնավորում, որ խորհրդային իշխանությունը փոխել իրենք չեն նախապատրաստվում և նրա սկզբունքային հիմքերից չեն նահանջում: Միաժամանակ Մ. Գորբաչովը հիմնավորում էր, որ փոփոխությունները անհրաժեշտ են, ընդ որում այնպիսի փոփոխություններ, որոնք կամրապնդեն սոցիալիզմը, նրան կդարձնեն քաղաքականապես հարուստ և շարժունակ³⁸: Եվ իրոք, սոցիալիզմի հիմնարար և ոչ մի սկզբունք կասկածի տակ չէր դրվում. ո՛չ արտադրության միջոցների նկատմամբ պետական սեփականությունը և ո՛չ էլ կոմունիստական կուսակցության ղեկավար դերը, ինչպես նաև սոցիալիզմին բնորոշ այլ արժեքներ: Իրավիճակը փոխվեց, երբ 1987 թ. Մ. Գորբաչովը հռչակեց հրապարակայնության, երկրի հասարակական-քաղաքական կյանքի դեմոկրատացման, Միութենական Հանրապետությունների իրավունքների մեծացման, այլընտրանքային ընտրությունների կիրառման, իրականացման մի նոր քաղաքականություն, որն ըստ երկրի գլխավոր քարտուղարի նպատակ ուներ վերադառնալ կամ ավելի ճիշտ վերականգնել կառավարման «լենինյան մոդելները» և էլ ավելի կատարելագործել սոցիալիստական հասարակարգը:

Երկրում սկսվեց ստալինյան ժամանակաշրջանի քննադատության մի այնպիսի ժամանակաշրջան, երբ երկրի և ժողովրդի անցած ողջ

³⁸ *Տե՛ս Новейшая История Отечества XX века. В двух томах. Т. 2. М., 1999, էջ 354:*

պատմությունը սկսվեց ներկայացվել միայն բացասական գծերով: Ստեղծվում էր փակուղային մի այնպիսի իրավիճակ, որից դուրս գալը դժվար էր, որը պահանջում էր մեծ ջանքեր, մեծ կամք, և որ կարևոր է՝ փոփոխություններին ընդառաջ գնալու պատրաստակամություն:

2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱՑՄԱՆ ՆՈՐ ԿՈՒՐՍԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Խորհրդային հասարակության վերակառուցման առաջին փուլում երկրի կուսակցական ղեկավարությունը դեռևս չէր դնում քաղաքական վերափոխումների խնդիրը և ամեն ինչ սահմանափակվում էր տնտեսական վերափոխումների շրջանակներում:

ԽՄԿԿ 27-րդ համագումարում (1986 թ. փետրվար) Մ. Ս. Գորբաչովը խնդրի դրեց երկրում իրականացնել ժողովրդական տնտեսության վերակառուցումը՝ հենվելով գիտատեխնիկական հեղափոխության մվաճումների վրա՝ գտնելով, որ անհրաժեշտ է փոխել երկրի կառավարման կառուցվածքային (ստրուկտուրային) և ինվեստիցիոն քաղաքականությունը և ուշադրության կենտրոնը քանակական ցուցանիշներից աստիճանաբար տեղափոխել որակի և արդյունավետության վրա, միջանկյալ արդյունքներից՝ վերջնական արդյունքների վրա, քանի որ տնտեսության կառավարումը մշտական կատարելագործման կարիք ունի, որի համար էլ անհրաժեշտ էին իրականացնել արմատական ռեֆորմներ:

Նաև խնդրի էր դրվում ընդլայնել ձեռնարկությունների ինքնուրույնության սահմանները և անցնել ժողովրդական տնտեսության բոլոր մակարդակներում տնտեսագիտական մեթոդների կիրառմանը, որն էլ հնարավորություն կտար հրաժարվել կառավարման վարչահրամայական մեթոդներից և, որ կարևոր է, իրականացնել նաև կառավարման համակողմանի դեմոկրատացում³⁹:

Նման հարցադրումը ենթադրում էր, որ հասարակության վերափոխումը, որի ուղղությամբ փորձերը և քայլերը կատարվել էին նաև խրուշ-

³⁹ Տե՛ս Սովետական Միության կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարի նյութերը, Երևան, 1986, էջ 35, 46, 47:

չովյան, բրեժնևյան ժամանակաշրջանում, ցանակալի արդյունքներ չէին տվել, քանի որ թերի էին և չէին շոշափել մաս քաղաքական կյանքը:

Գորբաչովյան վերակառուցման առանձնահատկությունն այն էր, որ այն խախտեց նախկին սկզբունքները, մտածելակերպն ու մոտեցումները և ողջ հասակով դրեց հասարակության դեմոկրատացման անչափ կարևոր և անհրաժեշտ խնդիրը: Դա իրականում երկրի քաղաքական կյանքում վերևից իրականացվող հեղափոխություն էր, որն ուներ իր պատմականորեն ձևավորված, սահմանված կանոնները: Հենց այդ կանոնների սովորույթի հիման վրա էլ դեռևս 1985-1988 թթ. ոչ մի քիչ թե շատ առողջ դատող քաղաքական գործիչ չէր կարող համարձակվել և առաջ քաշել մարքսիզմից, Կոմունիստական կուսակցությունից, նրա դեկավար դերից հրաժարվելու գաղափարը: Մինչդեռ Գորբաչովյան վերակառուցման թեկուզ և կարճ ժամանակաշրջանում (1985-1987 թթ.) կյանքը ցույց տվեց, որ այն հնարավոր է:

Ի տարբերություն նախորդ բոլոր դեկավարների, Մ. Ս. Գորբաչովը տնտեսական ռեֆորմները կապում էր մաս քաղաքական մոր մոտեցումների, մոր մտածողության հետ և գտնում էր, որ տնտեսությունը չպետք է անջրպետվի, մեկուսի դիտարկվի պետական, հասարակական-քաղաքական կյանքի մյուս ոլորտներից: Նա մաս գիտակցում էր, որ երկրի տնտեսական կյանքում ոչ մի փոփոխություն իրական չի դառնա, եթե այդ փոփոխությունները չընդգրկեն մաս կյանքի մյուս բնագավառները, քանի որ ճգնաժամը վերաբերում էր ոչ միայն տնտեսությանը: Այդ իմաստով Մ. Ս. Գորբաչովը կարևոր էր համարում մաս հասարակության բարոյական մորացման խնդիրը՝ կոչ անելով առաջին հերթին կոմունիստներին վերադառնալ նախնական արժեքներին, գաղափարներին՝ հավատալով, որ դա կարող է վիճակը փոխել:

Խոսելով դեմոկրատիայի մասին՝ Մ. Ս. Գորբաչովը նշում էր, որ դեմոկրատիան այն առողջ ու մաքուր օդն է, որով միայն լիարյուն կարող է ապրել սոցիալիստական հասարակական օրգանիզմը, և որ հասարակության զարգացման արագացումը աներևակայելի և անհնար է առանց սոցիալիստական դեմոկրատիայի, նրա բոլոր կողմերի ու դրսևորումների հետագա զարգացման⁴⁰:

Դժվար չէ տեսնել, որ մնաց վիթխարի խնդիրների լուծումը, մնաց վերափոխումների իրականացումը հնարավոր չէր կյանքի կոչել և երկիրը

⁴⁰ Տե՛ս Սովետական Միության կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարի կուլթերը, Երևան, 1986, էջ 76:

նորացնել առանց նոր մտածողության ու մոտեցումների: Հենց դա նկատի ունեն Մ. Ս. Գորբաչովը, երբ խնդիր էր դնում ամեն ինչի նկատմամբ ցուցաբերել նոր մոտեցում: Համոզված լինելով, որ կուսակցության մշակած նոր կուրսը ճիշտ է ըմբռնվել խորհրդային ժողովրդի կողմից, Մ. Ս. Գորբաչովը ԽՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունիսյան պլենումում վստահորեն խոսեց այն մասին, որ խորհրդային ժողովուրդը դեմոկրատացմանը կողմնակից է թե՛ քաղաքականապես և թե՛ պրակտիկորեն⁴¹:

Առաջ քաշելով դեմոկրատացման քաղաքականությունը՝ երկրի դեկավարությունը նաև համոզված էր, որ դրանով հնարավոր կլիներ նպաստել ժողովրդական զանգվածների հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացմանը, հասնել այն բանին, որ նրանք ներգրավվեն ինչպես տնտեսության կառավարման տարբեր օղակների, այնպես էլ տեղական խորհուրդների և Միութենական Գերագույն խորհրդի աշխատանքներում:

1988 թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը տեղի ունեցավ ԽՄԿԿ 19-րդ կոնֆերանսը, որը սկիզբ դրեց սահմանադրական վերափոխումների իրականացմանը: Կոնֆերանսը կարևոր համարեց ավելի ակտիվացնել ժողովրդական պատգամավորների խորհուրդների գործունեությունը:

Ի տարբերություն նախորդ ընտրությունների, այս անգամ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի արտահերթ 12-րդ նստաշրջանի պատգամավորները ընտրվեցին ինչպես մեծամասնական ընտրակարգով, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից: Ընդհանուր առմամբ ընտրվեց 2250 պատգամավոր: Այն հրավիրվեց 1988 թ. դեկտեմբերի 1-ին և ընդունեց որոշում երկրի Սահմանադրությունում կատարել փոփոխություններ, որոնք հանգում էին պետական կառավարման համակարգում Կենտրոնի և Միութենական Հանրապետությունների միջև նոր փոխհարաբերությունների հաստատմանը, վերջիններիս իրավունքների մեծացմանը: Փաստորեն, խնդիր էր դրվում երկիրը աստիճանաբար դարձնել իրավական պետություն:

Հասարակական քաղաքական կյանքում կատարվող փոփոխությունները և դեմոկրատացումը նոր որակ և այլ հետևանքներ ունեցան, երբ 1989 թ. աշնանը հրավիրված ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների արտահերթ 2-րդ համագումարում հարց բարձրացվեց Սահմանադրությունից հանել 6-րդ կետը, որը վերաբերում էր Խորհրդային Միու-

⁴¹ *St'e u Novейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 390; В. А. Шестаков. Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 397:*

թյան ղեկավար և ուղղություն տվող ուժին՝ Կոմունիստական կուսակցությանը: Դրանով վերջ էր դրվում Կոմունիստական կուսակցության միանձնյա ղեկավարությանը: Այդ փոփոխությունները հաստատվեցին Ժողովրդական պատգամավորների 3-րդ համագումարում (1990 թ. մարտ), որտեղ էլ Մ. Ս. Գորբաչովը ընտրվեց ԽՍՀՄ նախագահ, իսկ 1989 թ. մայիսից մաս ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահն էր: Մ. Ս. Գորբաչովը խորապես համոզված էր, որ վերակառուցումը կարող էր հաջող ընթանալ, եթե երկրի քաղաքական կյանքը ևս վերափոխվեր: Դեռ ավելին, նա գտնում էր, որ եթե չնախաձեռնվեին քաղաքական ռեֆորմները, ապա վերակառուցումը կտապալվեր⁴²:

Այդ գաղափարի և հարցադրման գլխավոր իմաստը կայանում էր նրանում, որ անհրաժեշտ էր երկիրը, պետությունը ապագաղափարայնացնել և կառուցել իրավական պետություն, որտեղ կհարգվի խոսքի ազատությունը, մարդու իրավունքներն ու համոզմունքները:

Նման հարցադրումները ավելի մեծ չափով նպաստեցին երկրում հասարակական, քաղաքական շարժումների ձևավորմանը, բացախոսությանը, ձախ արմատական ընդդիմությանը հրապարակավ իրենց տեսակետները արտահայտելուն և այլն:

Երկրում սկսվեց բազմակուսակցության ձևավորումը: Ընդ որում, նոր ձևավորվող կուսակցությունները իրենցից ներկայացնում էին գործող խորհրդային կարգերի դեմ ընդգծված ընդդիմություն: Գնալով մեծանում էր ԽՄԿԿ-ի նկատմամբ ընդդիմադիր դիրքորոշում ունեցող նոր կուսակցությունների և խմբավորումների ձևավորումը: Սկսվեց մի նոր գործընթաց, որն էլ հայտնի է որպես «դեմոկրատական շարժում», որն սկսեց կազմակերպական ձևեր կրել: 1990 թ. հունվարին ձևավորվեց «Դեմոկրատական Ռուսաստան» խմբավորումը, որի միջուկը միջոցառումային պատգամավորական խմբի ներկայացուցիչներն էին: «Դեմոկրատական Ռուսաստանին» զուգահեռ առաջացավ մաս «ԽՄԿԿ-ի դեմոկրատական պլատֆորմ» խումբը, որը նպատակ ուներ ԽՄԿԿ-ն վերածելու պառլամենտական տիպի կուսակցության: Կոմունիստական կուսակցության հեղինակությունը գնալով անկում էր ապրում: Բավական է ասել, որ վերակառուցման վերջին տարում՝ 1990 թ., երբ կուսակցության անդամների թիվը հասնում էր 20 մլն.-ի, կարճ ժամանակում նրա շարքերից հեռացան 5 մլն. կոմունիստներ: Մի շարք Միութենական Հանրապե-

⁴² *Տե՛ս ԶԿԶԵՄԵ ԵՈՓՓԱ. Օր СССР և России. М., 1996, էջ 175:*

տությունների կոմունիստական կուսակցություններ սկսեցին առանձնանալ ԽՄԿԿ-ից և իրենց հայտարարեցին որպես անկախ կուսակցություններ: Սեպարատիստական, անջատողական ձգտումներն ավելի ակտիվ դրսևորվեցին Մերձբալթյան Հանրապետություններում, Մոլդովիայում, Վրաստանում, Հայաստանում և այլուր: Հանրապետություններում ձևավորվում էին ժողովրդական ճակատներ, որոնք արդեն խնդիր էին դնում ճանաչել Հանրապետությունների ինքնորոշումը՝ ընդհուպ մինչև անկախությունը:

Ներկուսակցական դեմոկրատիայի բացակայությունը իր հերթին ավելի արագացրեց կոմունիստական կուսակցության պառակտումը: 1990 թ. կոմկուսի շարքերից սկսեցին դուրս գալ առավել արմատականորեն տրամադրված գործիչները, որոնց շարքում առաջիններից մեկը Բ. Ն. Ելցինը և նրա կողմնակիցներն էին՝ Ա. Գ. Սախարովը, Յու. Ն. Աֆանասևը, Գ. Ի. Պոպովը, Ա. Ա. Սոբչակը, Գ. Վ. Ստարովոյտովան և ուրիշները: Հենց նրանցից էլ դեռևս ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարում (1989 թ.) ձևավորվել էր «Պատգամավորների միջոցգիծնալ խումբը»՝ բաղկացած 150 հոգուց: Այդ համագամանքը հանգեցրեց նրան, որ Միութենական Հանրապետություններում առաջացան մնան կարգի շարժումներ:

Խորհրդային Հայաստանում մնան շարժում առաջացավ Ղարաբաղյան շարժման հետ միասին՝ 1988 թ., որն էլ կոչվեց Հայոց Համազգային Շարժում (ՀՀՇ), որը 1989 թ. նոյեմբերին հրավիրված իր հիմնադիր համագումարում, խնդիր էր դնում ստեղծելու անկախ ժողովրդավարական պետություն, ճանաչելու Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման, անկախության իրավունքը և այլն: Ի դեպ, Հայաստանում դեռևս ավելի վաղ շրջանում (1967 թ.) անլեզալ ձևով գործում էր «Ազգային միացյալ կուսակցությունը» (ԱՄԿ, հետագայում՝ ԱԻՄ – ընդ. Հ. Ա.), որը դեռևս 1974 թ. արդեն մշակել էր իր ծրագիր-կանոնադրությունը, սպկայն դեկավարության ձեռքակալության պատճառով դադարել էր գործելուց:

Նույնպիսի ձևով 1989 թ. ՌԽՖՍՀ-ում (Լենինգրադ) ստեղծվեց «Աշխատավորների միացյալ ճակատ» կազմակերպությունը, որը հանդես եկավ նախաձեռնությամբ՝ ստեղծելու Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն, որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1990 թ. հունիսին: Իսկ ընդհանուր առմամբ 1990 թ. ՌԽՖՍՀ-ում ստեղծվեցին Սոցիալ-դեմոկրատական, Դեմոկրատական, Սահմանադրական-դեմոկրատական, Հանրապետական և այլ ընդդիմադիր կուսակցություններ: Իսկ դա նշանակում էր, որ կուսակցության հռչակած հրապարակայ-

նությունը, բազմազանությունը (պլյուրալիզմ) հնարավորություն տվեցին հատկապես լրատվամիջոցներին, ճշմարտության դիրքերից ներկայացնելու հասարակության մեջ տեղ գտած, տասնամյակներով արմատացած թերություններն ու արատները: Կոմունիստական կուսակցությունը, նրա գաղափարախոսությունը կորցրեց իր նախկին գերակա, առաջնային վիճակը և հայտնվեց քննադատությունների թիրախում: Մարդիկ հնարավորություն ստացան քննադատական դիրքերից վեր հանել այն արատներն ու սխալները, որոնք կուտակվել էին խորհրդային համակարգի կառավարման տարիներին:

ԽՍՀՄ փլուզման պահին դեմոկրատական (լիբերալ-ազատական) շարժումը դարձավ ժամանակակից Ռուսաստանի բազմակուսակցական կյանքի շարժիչ ուժերից մեկը: Իրար ետևից ստեղծվեցին բազմաթիվ նոր կուսակցություններ, շարժումներ. «Выбор Россия» (Ե. Գալ-դար), «Яблоко» (Գ. Յավլինսկի), «ЛДПР» (Վ. ժիրինովսկի), «Наш дом-Россия» (Վ. Չերնոմիրոյին), «КПРФ» (Գ. Ջյուզանով), «Единая Россия» (Բ. Գրիզով), «Аграрная партия Россия» (Մ. Լապշին) և ուրիշներ, որոնք հաճախ միավորվում և երկրի զարգացման համար տարբեր ծրագրեր, հայեցակարգեր էին մշակում և այլն:

Կարճ ժամանակում երկրում առաջացած այդ նոր ուժերը, որոնք երեկ համարվում էին ԽՄԿԿ անդամներ, նույնիսկ ակտիվիստներ, դարձան հակառակորդներ, ընդդիմադիր ուժ: Այդ ամենը նշանակում էր, որ գնալով ավելի էր խորանում երկրի ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական, բարոյա-հոգեբանական ճգնաժամը, որն էլ ավելի արագացրեց Խորհրդային Միության փլուզման վաղուց արդեն սկսված գործընթացը:

3. ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒՋՈՒՄԸ ԵՎ ԱՊՀ-Ի ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Խորհրդային Միության կազմում 1980-ական թվականների վերջերին կային 15 միութենական համրապետություններ՝ ՌԽՖՍՀ-ն, Ուկրաինան, Բելոռուսիան, Մոլդավիան, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Կիրգիզիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան 270 մլն. բնակչությամբ, որոնք ներկայացնում էին 100-ից ավելի ազգեր և ազգություններ:

Գորբաչովյան վերակառուցման վերջին շրջանում՝ 1989-1990 թթ., «վերնների» հեղափոխությունից այն դարձավ միլիոնների գործը և դա-

դարեց սոսկ վերակառուցում լինելուց: Մարդիկ սկսեցին փոխել իրենց պատկերացումները վերակառուցման նպատակների, մասշտաբների, միջոցների և մեթոդների մասին: Մարդիկ վերակառուցումից արդեն այլ բաներ էին սպասում: Խոսքն արդեն ոչ թե գնում էր սոցիալիզմի կատարելագործման, նրան, ինչպես ասում են «երկրորդ շունչ» տալու մասին, այլ ամբողջ համակարգը փոխելու մասին: Այդ իմաստով 1989-1991 թթ. դարձան խորհրդային համակարգի փլուզման տարիներ: Վերակառուցման վեց տարիների ընթացքում, փաստորեն, չլուծվեցին նրա բարձրացրած շատ հարցեր: Առավել սուր ձևով դա դրսևորվեց ազգային հարցում: 1987 թ. կեսերից այդ հարցը դարձել էր ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի գրեթե ամենօրյա քննարկման առարկա, սակայն այն լուծում չէր ստանում՝ թողնելով այն պատմության ընթացքին, որքան էլ որ այդ խնդրի քննարկմանն էր մվիրված նաև կուսակցության 19-րդ կոնֆերանսը (1986 թ. հունիսի 28-հուլիսի 1): Նախկինի պես երկրի ղեկավարությունը Խորհրդային Միությունը դիտում էր որպես միասնական և անբաժանելի պետություն՝ իշխանության իր բոլոր լծակներով: Մինչդեռ երկիրն արդեն պառակտվում էր մյուս պատճառներից բացի նաև ազգամիջյան ընդհարումների, բախումների և նույնիսկ պատերազմների պատճառով: Նման իրավիճակ ստեղծվեց Հայաստանի և Ադրբեջանի միջև, երբ դեռևս 1987 թ. դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի աշխատավորությունը դիմեց երկրի ղեկավարությանը՝ վերանայելու 1921 թ. հուլիսի 5-ի Կովկասյան բյուրոյի անարդարացի որոշումը Լեռնային Ղարաբաղի մասին, որով պատմական հայկական այդ տարածքը տրվեց Ադրբեջանին մարզային ինքնավարության իրավունքով, որի հետ հայ ժողովուրդը տասնամյակներ շարունակ չէր հաշտվում:

1988 թ. փետրվարի 27-29-ին Կենտրոնական իշխանությունների թողտվությամբ Ադրբեջանական բազմազգ, «ինտերնացիոնալ» համարվող Սումգաիթ քաղաքում տեղի ունեցավ հայերի նկատմամբ կազմակերպված ջարդ, որին զոհ գնացին պաշտոնական տվյալներով 32 հոգի և 197 վիրավորներ⁴³:

Ընդհանուր առմամբ 1989-1990 թվականներին Միության ծայրամասերում առաջացան ճգնաժամի, ազգամիջյան հակասությունների, լարվածության մի շարք օջախներ, որոնք գնալով վերածվեցին անկախության համար պայքարի: Դրանցից մեկը Մերձբալթյան հանրապետություններն էին՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան, իսկ մյուսը Հարավ-

⁴³ *St'u Новейшая история Отечества xx век. В двух томах. Т. 2. М., 1999, էջ 367:*

կովկասյան տարածաշրջանն էր, գլխավորապես Վրաստանի, Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի միջև եղած հակասությունները, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեյջանի միջև առաջացած հակասությունները՝ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ:

Մերձբալթյան Հանրապետություններում ձևավորված ազգային, ժողովրդական ճակատները, որոնք վերակառուցման առաջին տարիներին հայտարարում էին, որ կողմ են այդ վերափոխումներին, վերակառուցման վերջին շրջանում վերածվեցին անկախության համար պայքարող շարժումների:

1988 թ. Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում անցկացված կենտրոնական և տեղական մարմինների ընտրություններում հաղթանակի հասան ժողովրդական ճակատի ներկայացուցիչները, որոնց գլխավոր նպատակը ինքնիշխան, անկախ պետությունների ստեղծումն էր:

Մինչդեռ դրան հակառակ՝ Մ. Ս. Գորբաչովը 1991 թ. մարտի 17-ին Խորհրդային Միությունում անցկացրեց հանրաքվե, որի մասնակիցների մեծ մասը՝ 76,4 %-ը, կողմ արտահայտվեց նորացված Խորհրդային Միության պահպանման օգտին՝ դիտելով այն որպես ինքնավար հանրապետությունների միություն (ֆեդերացիա): Այդ նպատակով 1991 թ. ապրիլ-մայիսին Մ. Ս. Գորբաչովը նախագահի մերձմոսկովյան նստավայրում՝ Նովո-Օզարյովում, ինը միութենական հանրապետությունների ներկայացուցիչների հետ բանակցություններ էր վարում նոր Միութենական պայմանագրի վերաբերյալ: Բանակցությունների բոլոր մասնակիցները պաշտպանեցին նորացված Միության ստեղծման գաղափարը և ստորագրեցին նախօրոք կազմված պայմանագրի նախագիծ և հանդես եկան հայտարարությամբ, որն էլ ժուռնալիստների կողմից անվանվեց «9+1 ձևաչափով» հայտարարություն: Նախատեսվում էր ստեղծել Սովերեն Պետությունների Միություն (ՄՊՄ-ССГ-Союз Суверенных Государств)՝ որպես խորհրդային ինքնիշխան, իրավահավասար հանրապետությունների ֆեդերացիա՝ Միություն: Նախատեսվում էր այդ պայմանագիրը ստորագրել 1991 թ. օգոստոսի 20-ին:

Նման նախագծի հրապարակումը մամուլում և նրա զանգվածային քննարկումները էլ ավելի խորացրին հասարակության պառակտումը:

Իշխանական վերնախավում ևս առաջացան Միութենական նոր նախագծի նկատմամբ տարբեր մոտեցումներ: Մ. Ս. Գորբաչովի կողմնակիցները այդ փաստաթղթի մեջ տեսնում էին հնարավորություն մեղմելու երկրում առաջացած հակամարտության մթնոլորտը, որը կարող էր կանխել երկրին սպառնացող քաղաքացիական պատերազմը: «Դեմոկ-

րատական Ռուսաստան» շարժման կողմնակիցները առաջ քաշեցին առաջարկ կնքելու պայմանագիր մեկ տարի ժամանակով, որի ընթացքում պետք է անցկացվեին Սահմանադիր ժողով հրավիրելու համար ընտրություններ, որն էլ պետք է որոշեր, թե ինչպիսի համամիութենական մարմիններ պետք է ստեղծվեին:

Դրան հակառակ՝ որոշ ուժեր՝ հասարակագետ-գիտնականներ, այդ փաստաթուղթը համարում էին որպես Կենտրոնի կապիտուլյացիան ծայրամասերում, Միութենական հանրապետություններում առաջացած ազգային-անջատողական ուժերի առաջ: Նման պայմանագրի հակառակորդները գտնում էին, որ ԽՍՀՄ-ի փլուզումը կհանգեցներ գոյություն ունեցող ժողովրդատնտեսական համալիրի կազմալուծմանը, որն ավելի կխորացներ ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Միութենական պայմանագրի կնքումից մի քանի օր առաջ ընդդիմադիր որոշ ուժերի կողմից քայլեր ձեռնարկվեցին կանխելու և վերջ դնելու ռեֆորմների քաղաքականությունը և կանգնեցնելու պետության քայքայումը:

Եվ երբ Մ. Ս. Գորբաչովը 1991 թ. Օգոստոսի 5-ից գտնվում էր Ղրիմում՝ նոր կառուցված ամառանոցում՝ Փարոսում, որտեղ հանգստանալու հետ մաս աշխատում էր, իր մոտ ժամանեցին բարձրաստիճան մի շարք գործիչներ՝ Բակլանովը, Շենինը, Բոլդինը, Վարեննիկովը և ուրիշներ, որոնք նրան առաջարկեցին երկրում մտցնել արտակարգ դրություն՝ ներկայացնելով ապագա արտակարգ դրության պետական կոմիտեի (ԴԿԿՊ) կազմը: Մ. Ս. Գորբաչովը մնան առաջարկը կտրականապես մերժեց, որն էլ մնան քայլի մախաձեռնողներին դարձրեց խոտվարներ:

Վերադառնալով Մոսկվա, օգոստոսի 19-ին նրանք հայտարարեցին, որ երկրի մախագահը անաշխատունակ է և հեռագրական գործակալության բոլոր ծրագրերով հանդես եկան հայտարարությամբ այն մասին, որ Խորհրդային Միության մախագահ Մ. Ս. Գորբաչովը առողջական որոշ խնդիրների հետ կապված այլևս ի վիճակի չի իրականացնելու մախագահական պարտականությունները, որի համար էլ երկրում մտցվում է արտակարգ իրավիճակ, իսկ մախագահի պարտականությունները անցնում են փոխմախագահ Գ. Ի. Յանակին: Արտակարգ դրության պետական կոմիտեի (ԴԿԿՊ) կազմի մեջ մտնում էին մաս Մինիստրների խորհրդի մախագահ Վ. Ս. Պավլովը, Պետական Անվտանգության Կոմիտեի մախագահ Վ. Ա. Կրյուչկովը, Պաշտպանության մախարար Դ. Տ. Յազովը, Ներքին գործերի մախարար Բ. Կ. Պու-

գոն և ուրիշներ: Արտակարգ դրության պետական կոմիտեն հայտարարեց, որ նպատակ ունի հաղթահարելու ԽՍՀՄ տնտեսական և քաղաքական ճգնաժամը, ազգամիջյան ու քաղաքացիական հակամարտություններն ու անարխիան՝ իր գլխավոր խնդիրը համարելով վերականգնել այն կարգուկանոնը, որ գոյություն ուներ ԽՍՀՄ-ում մինչև 1985 թ: Այդ նպատակով երկրի մայրաքաղաք Մոսկվա գործեր մտցվեցին և սահմանվեց պարետային ժամ: Արտակարգ իրավիճակի ընթացքում արգելվում էին հավաքներ, ցույցեր, գործադուլներ և նման կարգի այլ միջոցառումներ անցկացնելը: Սակայն հետագա դեպքերը ցույց տվեցին, որ վերադառնալ նախկին կարգերին և ռազմական մեթոդներով ճնշել ժողովրդի արդարացի ընդվզումները այլևս հնարավոր չէ:

Բավական է ասել, որ հենց կուսակցական, պետական ապարատի շատ ներկայացուցիչներ չպաշտպանեցին Արտակարգ դրության պետական կոմիտեի քայլերը: Ռուսաստանի նախագահ Բ. Ն. Ելցինը և նրա համախոհները դիմեցին ժողովրդին պաշտպանելու օրենքով ընտրված իշխանություններին, իսկ խռովարարների գործողությունները որակեցին որպես հակասահմանադրական հեղաշրջում:

1991 թ. օգոստոսի 22-ին ԴԿԿՊ-ի անդամները ձերբակալվեցին և հաջորդ օրը՝ օգոստոսի 23-ին, վերջ տրվեց նրա գոյությանը: Սակայն օգոստոսի 19-22-ի դեպքերը էլ ավելի խորացրին ճգնաժամը և մոտեցրին ԽՍՀՄ-ի վերջնական փլուզումը: 1991 թ. օգոստոսի 25-ին Ուկրաինան հայտարարեց անկախ պետության ձևավորման մասին և հրաժարվեց մասնակցել նոր Միութենական պայմանագրի ստորագրմանը: Գեկտեմբերի 1-ին Ուկրաինայում անցկացված հանրաքվեին մասնակից ընտրողների 90,3 %-ը արտահայտվեցին Ուկրաինայի անկախության օգտին: Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հանրաքվեից մի քանի օր անց դիմեց աշխարհի բոլոր խորհրդարաններին և հայտարարեց, որ 1922 թ. Խորհրդային Միության ձևավորման մասին պայմանագիրը կորցրել է իր ուժը⁴⁴:

Երկրում արտակարգ իրավիճակ հաստատելու փորձի ձախողումից հետո սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզման ավարտական փուլը: «Օգոստոսյան խռովության» ձախողումից հետո Մերձբալթյան երեք հանրապետու-

⁴⁴ St'u A. C. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Сивохина. История России. М., 2006, էջ 466; В. П. Семин. Русская история: проблемы и спорные вопросы. М., 2007, էջ 630-631; В. А. Шестаков. Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 406-407; Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 392-394:

թյունները հայտարարեցին իրենց՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին: 1991 թ. սեպտեմբերին Մ. Ս. Գորբաչովը, որին ևս հաշված օրեր էին մնում իշխանությունից զրկվելու համար, ստորագրեց հրաման, որով ճանաչում էր այդ հանրապետությունների ԽՍՀՄ-ից դուրս գալը:

1991 թ. դեկտեմբերի 8-ին սլավոնական երեք հանրապետությունները՝ ՌևիՖՍՄ-ն, ՌԽՍՄ-ն և ԲԽՍՄ-ն, հայտարարեցին ԽՍՀՄ-ի փլուզման և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ-ՇՊՏ) ստեղծման մասին: Այդ որոշումը, որը տեղի էր ունենում ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովից և խորհրդային ժողովրդից զաղտնի, պատմության մեջ մտավ որպես «Բելովեժյան համաձայնություն»: Այն տեղի ունեցավ ՌևիՖՍՄ նախագահ Բ. Ն. Ելցինի, ՌԽՍՄ նախագահ Լ. Մ. Կրավչուկի և ԲԽՍՄ Գերագույն խորհրդի նախագահ Ս. Ս. Շուշկևիչի միջև, Մինսկի մոտակա Բելովեժ քաղաքում:

1991 թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում (հետագայում այն տեղափոխվեց Աստանա – ընդ. Հ. Ա.) Բելովեժյան համաձայնությանը միացան ևս ութ հանրապետություններ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Կիրգիզիան, Մոլդավիան, Տաջիկստանը, Թուրքմենիան, Ուզբեկստանը, ընդամենը Խորհրդային Միության նախկին 11 հանրապետություններ: Մերձբալթյան հանրապետությունները և Վրաստանը (նախագահ Զ. Գամսախուրդիա) ողջունեցին ԽՍՀՄ-ի փլուզումը և հրաժարվեցին մտնել ԱՊՀ-ի մեջ: Հետագայում, 1991 թ. դեկտեմբերի վերջերին Վրաստանում տեղի ունեցած հեղաշրջումից և Է. Ա. Շևարդնաձեի իշխանության գալուց հետո Վրաստանը ևս մտավ ԱՊՀ-ի մեջ:

1991 թ. դեկտեմբերի 25-ին ԽՍՀՄ-ի վերջին նախագահ Մ. Ս. Գորբաչովը տվեց հրաժարական: Նույն օրը ժամը 19-ին Մ. Ս. Գորբաչովը, հանդես գալով հեռուստատեսությամբ, հայտարարեց, որ կապված Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ձևավորման նոր իրողության հետ, ինքը դադարեցնում է ԽՍՀՄ նախագահի պարտականությունները: Ժամը 19-ն անց 38 րոպեին Կրեմլից իջեցվեց ԽՍՀՄ կարմիր դրոշը, որը փոխարինվեց ռուսական եռագույնով: Իսկ երբ դեկտեմբերի 27-ին Մ. Ս. Գորբաչովը հայտնվեց Կրեմլում իր իրերը հավաքելու համար, նրա՝ արդեն նախկին աշխատասենյակում մստած էր Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ն. Ելցինը⁴⁵:

Մոտ 70-ամյա Խորհրդային Միությունը, երբեմնի աշխարհի հզոր և մեծ տերություններից մեկը որպես այդպիսին այլևս գոյություն չուներ:

⁴⁵ *St'e u Novейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 394:*

Գ Լ ՈՒ Խ 5

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1991-2011 թթ.)

1. ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նորանկախ ոռոսական պետությունը ձևավորվում էր ներքին և արտաքին միջազգային բավական բարդ պայմաններում: Եվ ինչպես 20-րդ դարի սկզբին, այն ծնվում էր քաոսի և անիշխանության պայմաններում:

Դեռևս մինչև Խորհրդային Միության փլուզումը, ՌԽՖՍՀ-ում մույնպես ձևավորվում էին ԽՄԿԿ-ին ընդդիմադիր ուժեր և շարժումներ, որոնց շարքում հատկապես ծանրակշիռ դեր ուներ «Ժողովրդավարական Ռուսաստան» միավորումը, որը 1990 թ. հոկտեմբերին անցկացրեց իր հիմնադիր համագումարը, որին մասնակցում էին Ռուսաստանի 73 մարզերի և տարածաշրջանների ներկայացուցիչներ, 165 հասարակական կազմակերպություններ, կուսակցություններ, ԽՍՀՄ 23 և ՌԽՖՍՀ 104 ժողովրդական պատգամավորներ: «Ժողովրդավարական Ռուսաստանը» միավորում և ներկայացնում էր 500 հազար մարդ, որի ազդեցության, հեղինակության հետ մեկտեղ մեծանում էր նաև հետաքրքրությունը լիբերալ-ազատական գաղափարների նկատմամբ:

Հետաքրքիր է ասել, որ 1990 թ. «Ժողովրդավարական Ռուսաստան» միավորման շրջանում անցկացված հարցումների արդյունքներով հարցվածների 32 %-ը գտնում էր, որ Ռուսաստանը պետք է նմանվի ԱՄՆ-ին, քանզի այն հանդիսանում է իրեն նմանվելու արժանի պետության օրինակ: Մինչդեռ հինգ տարի հետո՝ 1995 թ. անցկացված հարցումների համաձայն այդ կարծիքին էր արդեն 10 %-ը, որն էլ վկայում է այդ հարցում մարդկանց զգալի հատվածի շրջանում հիասթափության մեծացման, հայացքների վերանայման մասին:

ՌԽՖՍՀ-ի անկախության գործընթացը իրավական հիմքերի վրա դրվեցին, երբ 1990 թ. հունիսի 12-ին հրավիրված ժողովրդական պատգամավորների համագումարն ընդունեց երկրի պետական անկախության մասին հռչակագիր, որով էլ հունիսի 12-ը համարվում է Ռուսաստանի անկախության օր: Հարկ է ասել, որ հռչակագրում դեռևս չէր խոսվում ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին, բայց ասվում էր, որ ռուսական օրենքները ունեն գերակայություն համամիութենական օրենքների նկատմամբ:

1991 թ. հունիսի 12-ին՝ անկախության առաջին տարելիցին, Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան երկրի նախագահի ընտրություններ: Երկրի նախագահ ընտրվեց Բ. Ն. Ելցինը, որը բավական մեծ տարբերությամբ առավելության հասավ մրցակիցներ Ն. Ի. Ռիժկովի, Վ. Վ. Ժիրինովսկու, Ա. Մ. Տոլեևի, Ա. Մ. Մակաշովի և Վ. Վ. Բակատինի նկատմամբ: Նույն թվականի նոյեմբերին նախագահ Բ. Ն. Ելցինի գլխավորությամբ ձևավորվեց երկրի նոր կառավարությունը՝ երկու փոխվարչապետներով՝ հանձինս Գ. Բուրբուլիսի և Ե. Գալդարի: Կառավարությանը կից գործում էր նաև խորհրդականների ինստիտուտը, որում առաջատար դեր ուներ ամերիկյան լիբերալ-տնտեսագետ Դ. Սաքսը:

Կառավարությունը քայլեր ձեռնարկեց պետական կառավարման ապարատում բարեփոխումներ իրականացնել, որի արդյունքում վերացվեցին իշխանության կառավարության նախկին կառույցները, վերափոխվեց ողջ համակարգը: Մի շարք միութենական հաստատություններ, նախարարություններ դրվեցին ռուսական կառավարման իրավասության և համակարգի տրամադրության տակ:

1992 թ. ապրիլի 2-ին փոխվեց նաև ռուսական պետության պաշտոնական անվանումը՝ ՌԽՖՍՀ-ն վերանվանվեց Ռուսաստանի Դաշնության կամ Ռուսաստանի: Խորհրդային Միության փլուզումով Ռուսաստանի Դաշնությունը կանգնած էր նոր մարտահրավերների, նոր ճանապարհների ընտրության առջև, քանզի երկրում տեղի էր ունենում հասարակության արմատական փոխակերպում՝ տրանսֆորմացիա, որի մասին երկրի նոր ղեկավարությունը հասկանալի պատճառներով չէր կարող նորանկախ պետության առաջին իսկ օրերից հայտարարել և բացահայտ խոսել:

Պատմական որոշակի պատճառներով և ավանդույթներով խորհրդային մարդիկ բացասական պատկերացումներ, քննադատական մոտե-

ցումներ, դիրքորոշումներ ունեին կապիտալիստական հասարակարգի, շուկայական հարաբերությունների, ազատական, լիբերալ գաղափարների և Արևմուտքի այլ արժեքների նկատմամբ:

Երկրի նախագահ Բ. Ն. Ելցինը 1991-1992 թթ. իր հրապարակային ելույթներից և ոչ մեկում չէր խոսում կապիտալիզմի՝ որպես պետության վերջնական նպատակի մասին: Իսկ դա նշանակում էր, որ հարցի կարևոր պատասխանը, թե որն էր Ռուսաստանի զարգացման ճանապարհը, մնում էր անպատասխան: Դա է պատճառը, որ 1991 թ. աշնանը Ռուսաստանի ներքաղաքական իրավիճակը դեռևս անորոշ էր: Երկիրն ապրում էր տագնապալի և խառնակ օրեր:

Ինչպես գնահատում են պատմաբանները, քաղաքագետները, Բ. Ն. Ելցինը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո չէր «ցանկանում նավակը ճոճել», տարուբերել, քանզի մնան հեռանկարը ձեռնուրու չէր ո՛չ ռուսական նախկին կուսակցական պաշտոնյաներին և ո՛չ էլ ռուսական մոր դեմոկրատներին:

Նաև անհրաժեշտ էր հաշվի առնել այն հանգամանքը, որ Ռուսաստանի Ֆեդերացիայի, նրանում ապրող հարյուրից ավելի ազգերի, ազգությունների ներկայացուցիչները երկրի հասարակական-քաղաքական զարգացումների մասին ունեին տարբեր մոտեցումներ, տարբեր ընկալումներ, հոգևոր, մշակութային, քաղաքակրթական տարբեր մակարդակներ և որ կարևոր է, պահպանողական հայացքներ, ուստի երկրի առջև ծառացած վերափոխումները պետք է իրականացվեին ոչ այնքան հապճեպությամբ:

Բավական է ասել, որ Ռուսաստանի Դաշնության կազմում կային 89 սուբյեկտներ, այդ թվում 21 ինքնավար հանրապետություն⁴⁶: Իրողություն էր նաև այն, որ երկրի ղեկավարության առջև ծառացած ամենակարևոր հարցերից մեկը երկիրը քաղաքական և տնտեսական ճգնաժամից հանելն էր, երկրում սկսված ժողովրդավարական վերափոխումների իրականացումը և իրավական պետության ստեղծումն էր: Ընդ որում փոփոխությունները դեպի մորը կատարվում էին բավական դանդաղ և զգույշ, քանզի դրանք բախվում էին հին խորհրդային մոնենկլատուրայի (անվանակարգային ցուցակի աշխատողների) դիմադրությանը: Դա է պատճառը, որ խորհուրդների մոր ընտրություններ տեղի չունեցան, ուստի խորհուրդներում և տնտեսական մյուս կառույցներում դեռևս շա-

⁴⁶ *Տե՛ս Ա. С. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Силькина. История России. М., 2006, էջ 468:*

րունակվում էին գերիշխող դիրք գրավել մախսկին մոմենկլատուրայի ներկայացուցիչները: Իսկ փոփոխություններն ավելի շատ և առաջին հերթին վերաբերում էին ԽՄԿԿ ապարատին, որի գործունեությունը արգելվեց, իսկ կուսակցության ունեցվածքը, գույքը արգելափակվեց: Իրականում իշխանության տարբեր թևերի միջև կային խոր հակասություններ, որոնք համագեցնում էին միմյանց միջև սուր պայքարի: Խոսքը վերաբերում էր օրենսդիր և գործադիր իշխանություններին, նրանց կողմից երկրում կատարվող արմատական փոփոխություններին, դաշնային և տարածաշրջանային (ռեգիոնալ) ինքնավար իշխանություններին, որոնց մի մասի շրջանում ուժեղանում էին անջատողական, սեպարատիստական ձգտումները, որոնք սպառնում էին Ռուսաստանի Ֆեդերացիայի պառակտմանը:

1991 թ. սեպտեմբերին Չեչենա-Ինգուշեթական Ինքնավար Հանրապետության Գերագույն Խորհուրդը հայտարարեց Ռուսաստանի կազմից դուրս գալու մասին, որը հետագայում համագեցրեց տարածաշրջանում ծանր ճգնաժամային իրավիճակի և ի վերջո՝ պատերազմի:

Ռուսաստանի Դաշնության փլուզման վտանգը հատկապես ուժեղացավ 1992 թվականին: 1992 թ. ամռանը ռուսական դաշնության տասնյակ սուբյեկտներ՝ Թաթարստանը, Բաշկիրիան, Յակուտիան, Ուլմուրտիան, Նոսիտիբիրսկի, Տյումենի մարզերը կամ ուլացնում էին, կամ դադարեցնում էին Դաշնային բյուջեին տրվող հարկերը: Իսկ որոշ սուբյեկտներ առաջարկում էին երկիրը վերափոխել համադաշնության, ոմանք էլ ավելի հեռուն էին գնում՝ առաջարկելով կամ անջատվել Կենտրոնից կամ էլ ավելի հստակեցնել Կենտրոնի և ծայրամասերի, տեղական ինքնավարությունների իրավունքներն ու պարտականությունները: Նման տրամադրությունները սպառնում էին երկրի միասնությանը, ամբողջությանը՝ ստեղծելով պառակտման վտանգ:

1992 թ. մարտի 31-ին Ռուսաստանի Դաշնության բոլոր սուբյեկտները, բացառությամբ Թաթարստանի և Չեչնիայի, կնքեցին Դաշնային պայմանագիր, որով հստակեցվեցին Դաշնության մեջ մտնող սուբյեկտների միջև եղած հարաբերությունները, իրավունքներն ու պարտականությունները, միմյանց միջև իրավունքների բաշխումը և այլն: Այդ պայմանագրով զգալիորեն մեղմացվեց երկրի ներքաղաքական լարվածությունը և մասնակիորեն դադարեցվեց օրենքների, պատկերավոր ասած, պատերազմը:

Երկրում առաջացած քաղաքական ճգնաժամը հաղթահարելու նպատակով Բ. Ն. Ելցինը 1993 թ. սեպտեմբերի 21-ին հրաման արձակեց

(թիվ 1400) «Սահմանադրական փուլային ռեֆորմներ» անցկացնելու մասին՝ այդ նպատակով արձակելով Ժողովրդական պատգամավորների համագումարը և Գերագույն խորհուրդը, միաժամանակ նպատակ ունենալով անցկացնել հանրաքվե, ձևավորելու նոր՝ երկպալատ Դաշնային խորհուրդ (Պետական դումա, Դաշնային խորհուրդ):

Սակայն ընդդիմությունը մերժեց լեգիտիմ ճանապարհով դեպքերի զարգացման նման ընթացքը և դիմեց վճռական քայլերի նախագահի նախաձեռնությունների դեմ: 1993 թ. սեպտեմբերի 23-ի գիշերը ժողովրդական պատգամավորների արտահերթ տասներորդ համագումարը, որը չուներ քվորում, ընդունեց որոշում, որով նախագահ Բ. Ն. Ելցինի քայլը որակվեց «պետական հեղաշրջում» և նրան հեռացրեց պաշտոնից: Համագումարը փոխնախագահ Ա. Վ. Ռուցկոյին ընտրեց նախագահի պաշտոնակատար: Դեպքերի նման զարգացումը հանգեցրեց պայքարող կողմերի միջև ուժային գործողությունների՝ զինված ընդհարման:

1993 թ. հոկտեմբերի 3-ին ընդդիմությունը Մոսկվայի Սմոլենսկի հրապարակում կազմակերպեց անկարգություններ՝ ցանկանալով գրոհով գրավել «Օստանկինո» հեռուստակենտրոնը:

Նման պայմաններում Բ. Ն. Ելցինը, ամբողջ պատասխանատվությունը վերցնելով իր վրա, հրաման արձակեց շրջափակել «Սպիտակ տունը» և գրոհով այն վերցնել: Այդ գործողությունների ընթացքում երկու կողմից եղան զոհեր, իսկ խռովարարները ձերբակալվեցին⁴⁷: Նույն 1993 թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցան ՌԴ-ի Պետական դումայի և Դաշնային խորհրդի ընտրությունները: Միաժամանակ անցկացվեց Սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվե: Ընտրություններն, ընդ որում, Ռուսաստանի Դաշնությունում 80-ամյա ընդմիջումից հետո տեղի էին ունենում բազմակուսակցական հիմքի վրա, որոնք ընթանում էին կուսակցությունների միջև մղվող սուր պայքարում: Սկզբնական շրջանում ընտրություններին հավակնում էին մասնակցել 35 քաղաքական կուսակցություններ և շարժումներ, սակայն դրանցից միայն 13-ին հաջողվեց գրանցվելու համար հավաքել անհրաժեշտ 100 հազար ընտրողների ստորագրությունները:

Ընդհանուր առմամբ Պետական դումայում ընտրվեցին 444 պատգամավորներ՝ կուսակցական (համամասնական) և մեծամասնական (միա-

⁴⁷ *Տե՛ս Բ. Ա. Шестаков, Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 417-418:*

մանդատ) ընտրացուցակներով: Ընտրություններին մասնակից 13 ընտրական միավորումներից միայն 8-ին հաջողվեց հավաքել անհրաժեշտ ձայներ՝ Պետական դումայում իրենց ընտրողներին ներկայացնելու համար: Առավել շատ ձայներ ստացան «Всё для России» կուսակցությունը՝ 76 տեղ, Լիբերալ դեմոկրատական կուսակցությունը՝ 63 տեղ, Ագրարային կուսակցությունը՝ 55 տեղ և Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունը՝ 45 տեղ:

Կարևոր իրադարձություն էր նաև նոր Սահմանադրության ընդունման համար հանրաքվեի անցկացումը, որի օգտին քվեարկեցին 50 %-ից ավելի ընտրողներ, որն էլ կարևոր քայլ էր երկիրը ժողովրդավարության ուղիով զարգացնելու համար: 1993 թ. Սահմանադրությունը վերջ տվեց պետական իշխանության գաղափարայնացմանը, խորհրդային ամբողջատիրական համակարգին: Նոր Սահմանադրությունը օրենսդրորեն հիմք դրեց իշխանության ճյուղերի բաժանմանը, իրական, ժամանակակից պառլամենտարիզմի ձևավորմանը, ժողովրդավարության անցմանը և այլն: Եվ չնայած նրա որոշ թերություններին, անկատարությանը, այնուամենայնիվ, նոր Սահմանադրությամբ երաշխավորվում էին միջազգային նորմերին համապատասխան մարդու իրավունքները՝ խոսքի, խղճի, տեղեկատվության ազատությունները և այլն: Այդ ամենը հանդիսանում էր որոշակի հիմք Ռուսաստանի Դաշնությունում երկպալատ պառլամենտի ձևավորման համար, որն էլ իրավական հիմք էր ժողովրդավարական Ռուսաստանի ձևավորման համար: Պետական դումայի առաջին գումարման աշխատանքներում կենտրոնական տեղ էին գրավում տնտեսական և ազգային քաղաքականության հարցերը, սոցիալական խնդիրները, միջազգային հարաբերությունները: 1993-1995 թվականներին դումայի պատգամավորները ընդունել էին ավելի քան 320 օրենքներ, որոնց գերակշիռ մասը ստորագրվել էր երկրի նախագահի կողմից: Իսկ դրանք հիմնականում վերաբերվում էին երկրի կառավարական և սահմանադրական համակարգին, սեփականության նոր ձևերին, գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին, բաժնետիրական ընկերություններին, ազատ տնտեսական գոտուն և այլն:

1994 թ. աշմանը երկրում սկսվեց Պետական դումայի երկրորդ գումարման նոր ընտրական գործընթացը, որի իրավասություններն ավարտվում էին 1995 թ.: Ի տարբերություն նախորդ ընտրությունների, որոնք տեղի էին ունենում քաղաքական և իրավական արտակարգ պայմաններում, 1995 թ. ընտրությունները տեղի էին ունենում համեմատաբար հանգիստ պայմաններում:

Ընդհանուր առմամբ գրանցվել էին 43 ընտրական միավորումներ և խմբավորումներ, որոնց առատությունն էլ ցույց տվեց, որ նման ցրվածությունը նախ վկայում էր ռուսական ժողովրդավարության ոչ հասունության մասին և երկրորդը, որ հենց այդ հանգամանքն էլ զգալի չափով խանգարեց, որ որոշ խմբավորումներ չկարողացան հաղթահարել 5 տոկոսի սահմանը Պետական դումայում տեղեր ստանալու համար:

Երկրորդ գումարման Պետական դումայում ընտրվեցին 450 պատգամավորներ: Պատգամավորների գերակշիռ մասը օրենսդիր և գործադիր մարմինների աշխատողներ էին, որոնցից շատերը նախկին պատգամավորական խմբերի անդամներ էին: Դումայի ընդհանուր թվի 36 %-ը ՌԴԿԿ-ի անդամներ էին, 12 % -ը՝ «Մեր տունը Ռուսաստանն է» (Наш дом-Россия) կուսակցության անդամներ, 11 % -ը՝ Լիբերալ-դեմոկրատական կուսակցության անդամներ, 12 % -ը՝ «Յարլոկո» («Яблоко») խմբի անդամներ՝ Գ. Ա. Յավլինսկու գլխավորությամբ, 17 %-ը անկախ պատգամավորներ էին, իսկ 14 % -ը՝ տարբեր ընտրական միավորումների անդամներ և այլն⁴⁸:

Պետական դումայի նման կազմը վկայում էր, որ միջկուսակցական պայքարը դումայում բավական սուր բնույթ էր կրում: Հիմնական պայքարը և տարաձայնությունները վերաբերում էին երկրի վարած ներքին և արտաքին քաղաքականությանը, հատկապես տնտեսական և քաղաքական բարեփոխումներին, Չեչնիայի նկատմամբ վարվող քաղաքականությանը, ՆԱՏՕ-ի հետ մերձեցման քայլերին և այլն:

Իշխանությունների նկատմամբ ընդդիմադիր ուժերի դիրքորոշումները (Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցություն, Լիբերալ-դեմոկրատական կուսակցություն, Գ. Ա. Յավլինսկու «Յարլոկո» խմբավորում և այլն) պաշտպանություն էին գտնում հասարակության որոշակի խավերի շրջանում, ովքեր, ապրելով կարոտախտի զգացում, կապված տնտեսական դժվարությունների և այլնի հետ, ձգտում էին վերականգնել նախկին կարգերը, այսինքն վերադառնալ սոցիալիզմի արժեքներին: Հենց այն փաստը, որ Պետական դումայի երկրորդ գումարման ընտրություններում Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունը ուներ 158 մանդատ, վկայում է հասարակության մեջ տեղի ունեցող նման խմորումների մասին:

⁴⁸ St'u A. C. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Силькина. История России. М., 2006, էջ 474-475:

Այդ ամենը ավելի սուր ձևով դրսևորվեց 1996 թ. երկրում անցկացվող նախագահական ընտրությունների ժամանակ, որին հավակնում էին 11 թեկնածուներ, այդ թվում Բ. Ն. Ելցինը, Գ. Ա. Ջյուզանովը, Վ. Վ. Ժիրինովսկին, Մ. Ս. Գորբաչովը, Գ. Ա. Յավլինսկին և ուրիշներ: Պայքարն այնքան սուր էր, որ ընտրությունները առաջին փուլով չավարտվեցին: Երկրորդ փուլում կրկին հաղթանակի հասավ Բ. Ն. Ելցինը, որի օգտին քվեարկել էին ընտրողների 55 %-ը: Նրա գլխավոր մրցակից Գ. Ա. Ջյուզանովը ստացել էր 40,7 %-ը: Բայց բոլոր դեպքերում նախագահական ընտրությունների արդյունքները վկայում էին, որ ընդհանուր առմամբ ընտրողների մեծ մասը պաշտպանում էր նախագահի վարած քաղաքական գիծը, որն ուղղված էր շուկայական հարաբերությունների ձևավորմանը և երկրի դեմոկրատացմանը:

Հետագա ընտրությունները տեղի էին ունենում մոտ օրենքի հիման վրա, որը նպաստում էր երկրում բազմակուսակցության ձևավորմանը և ընտրությունները միայն համամասնական ընտրակարգով, կուսակցական ցուցակներով անցկացնելուն և այլն: Ընդ որում ռուսական քաղաքական կյանքի առանձնահատկություններից մեկն այն էր, որ երկրում աստիճանաբար տեղի էր ունենում կուսակցությունների միավորում, խոշորացում: 2003 թ. երկրի առաջատար ուժ համարվող «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը դումայի ընտրություններում ստացավ ընտրողների 37,57 %-ը, այսինքն՝ ավելի շատ, քան մյուսները միասին վերցրած, որոնք կարողացան հաղթահարել 5 %-ի սահմանագիծը: Ընդհանուր առմամբ «Միասնական Ռուսաստան» ֆրակցիան դումայում ուներ 303 պատգամավոր, որն էլ հնարավորություն տվեց ունենալ «սահմանադրական մեծամասնություն» և կազմել կառավարություն:

Իշխանական կուսակցության հետագա քայլերը ուղղված էին իր դիրքերի ավելի ամրապնդմանը: Այդ նպատակով ընդունվեց օրենք, որի համաձայն կուսակցության անդամների նվազագույն թիվը 5 անգամ ավելացվեց՝ 10 հազարից հասցնելով 50 հազարի, որն էլ առաջին հերթին ապահովում էր վարչական ռեսուրսներ ունեցող կուսակցության հնարավորությունները: Իսկ այն կուսակցությունները, որոնք չէին կարող բավարարել նոր պահանջները, դատարանի միջոցով ենթակա էին վերացման: Նման հանգամանքը ունեցավ այն հետևանքը, որ գրանցված կուսակցությունների թիվը կտրուկ կրճատվեց: Եթե 2003 թ. երկրում

գործում էր 45 կուսակցություն, ապա արդեն 2007 թ. նրա թիվը հասավ 15-ի, իսկ արդեն 2009 թ. սկզբներին՝ 9-ի⁴⁹:

2005 թ. ամռանը ընդունած նոր օրենքով ընտրական խմբավորումներով միավորված կուսակցությունները Դումայում ընտրվելու համար պետք է հաղթահարեին արդեն ոչ թե նախկին 5 %-սահմանը, այլ արդեն 7 %-ը: Վերացվեց նաև «բոլորի դեմ» ընտրակարգը: Մյուս նորությունն այն էր, որ նախկին խառը ընտրությունների համակարգը փոխարինվեց 100 %-անոց համամասնական ընտրակարգով ընտրելուն, որն էլ ավելի մեծացրեց գլխավոր լիդեր՝ «Միասնական Ռուսաստան» կուսակցության հնարավորությունները, որն ուներ բոլոր հնարավորությունները մեծամասնություն գրավելու համար:

2007 թ. Պետական դումայի ընտրություններում «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը ստացավ ընտրողների 64,3 %-ը՝ դրանով երկրորդ անգամ նվաճելով «սահմանադրական մեծամասնության» իրավունքը, կրկին հաստատեց, որ ռուսական կուսակցական համակարգում նա գրավում է առաջնային տեղը: Նույնպիսի հաջողություններ «Միասնական Ռուսաստան» ունեցավ 2009 թ. մարտի 1-ին անցկացված տարածաշրջանային ընտրություններում, որտեղ հավաքեց ձայների 52 %-ից ավելին: Իսկ մրցակցությամբ երկրորդ տեղը գրավող Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունն հավաքեց ընդամենը 8 % ձայն⁵⁰:

Ռուսաստանի Դաշնության քաղաքական կյանքում հատկապես կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ 1999 թ. օգոստոսի 9-ին Բ. Ն. Ելցինը երկրի կառավարության նախագահի (վարչապետ) պաշտոնակատար նշանակեց Վ. Վ. Պուտինին: Օգոստոսի 16-ին Պետական դուման հաստատեց նրա թեկնածությունը: Կառավարության նոր նախագահը ակտիվ քայլեր ձեռնարկեց չեչենական պատերազմը ավարտին հասցնելու ուղղությամբ: Կարճ ժամանակում զգալի տարածքներ ազատագրվեցին ռուսական ուժերի կողմից: Այդ բոլորը նպատակ ուներ տարածաշրջանում ստեղծել կայուն վիճակ: 1999 թ. դեկտեմբերի 31-ին Բ. Ն. Ելցինը հրաժարվեց երկրի նախագահի պարտականություններից և նախագահի պաշտոնակատար նշանակեց Վ. Վ. Պուտինին, որը հա-

⁴⁹ *St'u Vestnik Moskovskogo universiteta. Seriya 18. Sotsiologiya i politologiya. № 4, 2009, էջ 213-214:*

⁵⁰ *Նույն տեղում, էջ 214-215:*

մապատասխանում էր երկրի Սահմանադրությամբ: 2000 թ. մարտի 26-ին Վ. Վ. Պուտինը նախագահական ընտրություններում հաղթանակեց և սկսեց կառավարել երկիրը՝ ձեռնարկելով ակտիվ քայլեր երկրում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ: 2003 թ. Չեչնիայում անցկացվեցին ընտրություններ, որոնք նպատակ ունեին աստիճանաբար անցում կատարելու քաղաքացիական հասարակարգի կառուցմանը: 2003 թ. հոկտեմբերի 5-ին Ահմադ Կադիրովը ընտրվեց երկրի նախագահ: Նա այդ պաշտոնում էր 2000 թվականից: Հետագա տարիները ցույց տվեցին, որ Չեչնիայում աստիճանաբար անցում էր կատարվում նորմալ քաղաքական, տնտեսական հարաբերությունների հաստատմանը, չնայած որ 2004 թ. մայիսին ահաբեկիչների կողմից Ա. Կադիրովը սպանվեց, որին փոխարինեց իր որդին: Նման նշանակումը նպատակ ուներ խուսափել Չեչնիայում քաղաքական լավաժության մեծացումից: Երկրում ակտիվացող սոցիալական դժգոհությունը մեղմելու նպատակով Վ. Վ. Պուտինը հանդես եկավ ավելի համարձակ քայլերով՝ խնդիր դնելով 2010 թ. երկրում կառուցել սոցիալական պետություն: Եվ չնայած Պուտինի մի շարք քայլերը, հայտարարությունները երկրի առաջընթացի մասին դեռևս հեռու էին իրականանալուց, բայց նա հաստատական և վճռական էր իր գործողություններում: Կարճ ժամանակում Վ. Վ. Պուտինը կառավարության մի քանի նախագահներ փոխեց. Մ. Ֆրադկով (2004 թ. մարտ), Վ. Ա. Ջուրկով (2007 թ.), Դ. Ա. Մեդվեդև (2005 թ. նոյեմբերի 9՝ երկրի վարչապետի առաջին տեղակալ):

2007-2008 թթ. պառլամենտական և նախագահական ընտրությունների ժամանակաշրջանը հայտարարվեց որպես «Պուտինի պլանի» իրականացման ժամանակաշրջան:

2007 թ. դեկտեմբերի 2-ին անցկացված դումայական ընտրությունները դարձան Վ. Վ. Պուտինի նկատմամբ յուրօրինակ վստահության ընտրություններ: «Միասնական Ռուսաստանը» Վ. Վ. Պուտինի գլխավորությամբ ստացավ ընտրողների 64,3 %-ը, որը 21,5 մլն. ձայնով ավելին էր նախորդ ընտրությունների համեմատ, Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը՝ 11,5 % (350 հազ. ձայնով նախորդից ավել), Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը՝ 8,14 % (նախորդից 1,3 մլն. ձայնով պակաս), «Արդարացի Ռուսաստան» կուսակցությունը՝ 7,4%: Մյուս կուսակցությունները, հատկապես «Յաբլոկոն», կորցրել էր նախորդի համեմատ 3 մլն. ձայն, աջ լիբերալ կուսակցությունը և այլն

չկարողացան հաղթահարել ընտրությունների համար նախատեսված շեմը:

Պետական դումայի խոսնակ ընտրվեց «Միասնական Ռուսաստան» կուսակցության լիդեր Բ. Վ. Գրիզլովը:

Դումայական ընտրություններից հետո Վ. Վ. Պուտինը, որն արդեն սահմանադրորեն իրավունք չուներ երրորդ անգամ իր թեկնածությունը դնելու երկրի նախագահի ընտրություններում, որոշեց այն հնարավոր թեկնածուին, որը պետք է փոխարիներ իրեն:

2007 թ. դեկտեմբերի 10-ին երկրի չորս առաջատար կուսակցությունների լիդերների հետ հանդիպման ժամանակ («Միասնական Ռուսաստան», «Արդարության Ռուսաստան», «Ազրարային կուսակցություն» և «Քաղաքացիական ուժեր») որպես հավանական հետնորդի թեկնածուներ կայացրեց Դ. Ս. Մեդվեդևին, որն էլ 2008 թ. մարտին նախագահական ընտրություններում հասավ հաղթանակի՝ ապահովելով երկրի պետական քաղաքականության հաջորդայնությունը և քաղաքական կայունությունը:

Ներկա Ռուսաստանը կանգնած է անչափ կարևոր, բախտորոշ նախագահական մոր՝ 2012 թ. ընտրությունների առջև, որն էլ կարող է կարևոր դեր խաղալ, թե ինչպիսին կլինի Ռուսաստանի ուղեգիծը առաջիկա տարիներին՝ լիբերալ-ազատական, արևմտամետ ուղիով զարգացում, թե Արևմուտքի նկատմամբ ավելի կոշտ, ավտորիտար (կառավարվող դեմոկրատիա) ուղիով զարգացում:

2. ՀՈՒԿԱՅՈՒՄՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՅՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ

Հետխորհրդային և հետվերակառուցման շրջանի Ռուսաստանի Դաշնության տնտեսական քաղաքականության գլխավոր խնդիրն ու ուղղությունը տնտեսության ազատականացումը և շուկայական հարաբերությունների անցումն էր: Անհրաժեշտ էր երկրում կատարված քաղաքական փոփոխություններին համապատասխան փոխել նաև խորհրդային կարգերից ժառանգություն մնացած տնտեսության պլանային, վարչաիրամայական համակարգը և սկսել սեփականաշնորհման, ապամենաշնորհային գործընթացը: Իսկ դա նշանակում էր աստիճա-

նաքար երկրում ձևավորել սեփականատերերի, ձեռնարկատերերի մի նոր դասակարգ:

1991 թ. հոկտեմբերին Ռուսաստանի Դաշնության Ժողովրդական պատգամավորների 5-րդ համագումարում Բ. Ելցինը համոզեւ է գալիս երկրում արմատական տնտեսական ռեֆորմների մասին ծրագրային ելույթով, որով նախատեսվում էր գների, աշխատավարձի, առևտրի, սեփականաշնորհման ազատականացում: Անցումը նման քաղաքականության երկրի ղեկավարը հիմնավորում էր այն հանգամանքով, որ Ռուսաստանը կանգնած էր նոր մարտահրավերների առաջ, որի համար էլ անհրաժեշտ էր հատկապես տնտեսության ոլորտում, դիմել վճռական քայլերի: Միաժամանակ շատ լավ գիտակցելով նման կտրուկ վերափոխումների դժվարությունները, Բ. Ելցինը համագումարի ամբիոնից դիմում էր երկրի բնակչությանը պաշտպանելու իր առաջ քաշած ծրագիրը՝ նաև նշելով, որ դրանց իրականացումը լինելու է ցավագին, բայց առաջարկված քաղաքականությունը ստեղծված պայմաններում միակ ճիշտ ճանապարհն էր:

Հաշվի առնելով երկրում ստեղծված ծանր տնտեսական վիճակը, համագումարի պատգամավորները հավանություն տվեցին այդ ծրագրին և նույնիսկ այդ նպատակով երկրի նախագահին լրացուցիչ իրավունքներ տվեցին:

Իսկ տնտեսական բարեփոխումների ծրագիրը մշակվել էր Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Ե. Թ. Գայդարի կողմից, որի անկյունաքարը գների ազատականացումն էր, տնտեսության պետական սեկտորի սեփականաշնորհումն էր, այսինքն՝ պետության վերահսկողությունից աստիճանաբար ազատումն էր:

1992 թ. հունվարին Ռուսաստանի Դաշնությունը շուկայական տնտեսության ձևավորման ճանապարհին փաստորեն առաջին քայլն էր անում: Ըստ այդ ծրագրի հեղինակ Ե. Գայդարի, նման քաղաքականությունը պետք է հնարավորություն տար ռուսական ռուբլուն արտադրության գների կարգավորման գործում խաղալու կարգավորող դեր: Մակայն թերագնահատելով արտադրության նախկին մենաշնորհային կարգավիճակը, ինչպես նաև կառավարության կողմից գների ձևավորման վերահսկման նկատմամբ այժմ արդեն ստեղծված ինքնամեկուսացումը՝ 1992 թ. սկզբին երկրում սկսվեց գների արդեն անվերահսկելի մի

թույլը: Հունվարին գնաճը երկրում կազմեց 1000-1200 %, իսկ տարվա վերջին այն բարձրացավ 26 անգամ⁵¹: Ընդ որում այդ նույն ժամանակ աշխատավարձը բարձրացել էր 12 անգամ: Գների մասն ռեֆորմը հաշվի չէր առել բնակչության խնայողական բանկերում կատարած ներդրումների ցուցանիշը, որն էլ հանգեցրեց դրամի միաժամանակյա արժեզրկմանը:

Չարդարացվեցին նաև Արևմուտքից լայնամասշտաբ օգնություն ստանալու երկրի կառավարության հույսերը: Նման պայմաններում Ելցին-Գայդար կառավարությունը, փաստորեն, չկարողացավ կատարել ժողովրդին խոստացած սոցիալական ռեֆորմները: 1992 թ. փետրվարին կառավարությունը հրապարակեց նույն թվականի տնտեսական քաղաքականության հուշագիրը, որի գլխավոր նպատակը ֆինանսական համակարգի կայունության հաստատումն էր և անմանցորդ բյուջեի ստեղծումը: Այդ ոլորտում կատարած հաջորդ քայլերը նպատակամղված էին աստիճանաբար ապահովել երկրի տնտեսության կայուն զարգացումը:

Կառավարության ծրագիրը իր մեջ ներառում էր միջոցառումների մի շարք, որը բավական հանրահայտ էր համաշխարհային պրակտիկայում, այն է՝ սկզբում իրականացնել գների ազատականացում, այնուհետև ազատ առևտրի կիրառում, իսկ հետո արդեն սեփականաշնորհում:

Նման քաղաքականությունը, այսինքն՝ գների ազատականացումը, նշանակում էր որոշել ապրանքների իրական գները, այնուհետև կիրառել մրցակցային մեխանիզմ, որով ստիպել մարդկանց փող «աշխատել»: Իսկ սեփականաշնորհումը նշանակում էր պետական սեփականությունը հանձնել մասնավոր մարդկանց, որով էլ մարդկանց դարձնել սեփականատերեր և դրանով էլ ստեղծել աշխատանքի նկատմամբ հզոր, մեծ շահագրգռվածություն⁵²:

Կառավարության վերոհիշյալ ծրագրին որպես այլընտրանք առաջ քաշվեց երկրում ճանաչված տնտեսագետ, «Яблоко» կուսակցության լիդեր Գ. Ա. Յավլինսկու ծրագիրը, որը հանգում էր նրան, որ մախ անհրաժեշտ էր հասնել տնտեսական վիճակի կայունացմանը, իսկ հետո միայն իրականացնել շուկայական բարեփոխումներ, որը սակայն մերժ-

⁵¹ *Տե՛ս Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 449:*

⁵² *Տե՛ս В. А. Шестаков. Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 429:*

վեց երկրի ղեկավարության կողմից, քանի որ պահանջում էր իրականացնել կոշտ վարչական միջոցառումներ, քայլեր, որի ապահովումը և իրականացումը, երբ երկրի պետական իշխանությունը թուլացել էր, հնարավոր չէր:

Եվ իրոք, 1991 թ. փետրվարին Ռուսաստանի կոշտ, կարծր ուղղահայաց իշխանությունն արդեն քանդվել էր, որի հետևանքով էլ խարխալվել էր երկրում նախկին կարգուկանոնը, նախկին համակարգը:

Երկրում իշխանության դերի վերականգնումը պահանջեց մի ամբողջ տասնամյակ՝ 1990-ական թթ, քանի որ Ե. Գալդարի և նրա թիմի սկսած բարեփոխումները ի սկզբանե կրում էին հեղափոխական բնույթ, որը նշանակում էր անցում կատարել մեկ հասարակարգից մեկ այլ հասարակարգի, այն է՝ քանդել նախկին խորհրդային վարչահրամայական համակարգը և անցում կատարել դեպի տնտեսության ազատականացում:

Անհրաժեշտ էր ստեղծել ֆոնդային, ապրանքային բիրժաներ, նոր բանկային արժութային շուկայի մի ամբողջ համակարգ:

Փաստորեն, Եզոր Գալդարի մշակած կառավարության ծրագիրը, հրաժարվելով տնտեսության բարեփոխումները իրականացնել ինչպես նախկինում պետության կարգավորող, վերահսկող դերակատարությունից ու գործառույթներից, շեշտը դնում էր բավական արագ տեմպերով նոր խավի ձևավորման վրա, որը կարող էր դառնալ թե՛ բարեփոխումների և թե՛ իշխանության հուսալի հենարանը:

Իսկ ինչ վերաբերում է մտավորականությանը և ծառայողներին, ինչպես նաև որակյալ բանվորներին, ովքեր հանդիսացել էին կոմունիստական ամբողջատիրության դեմ պայքարի հիմնական սոցիալական հեմարանը, այժմ երբ արդեն տեղի էր ունենում երկրի սեփականության վերաբաշխում, ըստ բարեփոխիչների այլևս չէին կարող լինել հուսալի հենարան: Այսպես կոչված խորհրդային դարաշրջանի, խորհրդային հասարակության միջին դասակարգը, որը քվեարկել էր ժողովրդավարության և ազատ շուկայի օգտին, նոր պայմաններում չէր կարող լինել սեփականատեր դասակարգ: Անհրաժեշտ էր ստեղծել նոր սեփականատերերի դասակարգ: Սա է խնդիրը: Ընդ որում դա պետք է կատարվեր արագ տեմպերով, որն էլ հանդիսանում էր երկրի կառավարող ուժերի գլխավոր խնդիրը, որպեսզի չկորցնեք իշխանությունը:

Սեփականաշնորհումը առաջին հերթին ընդգրկում էր մանրածախ առևտրի ձեռնարկությունները, հասարակական սննդի օբյեկտները, կենցաղի սպասարկման ոլորտը և այլն: Այդ քաղաքականության հետևանքով մասնավոր ձեռնարկատերերի ձեռքն անցավ 110 հազ. արդյունաբերական ձեռնարկություն:

Սակայն սեփականության ձևի փոփոխությունը չբարձրացրեց տնտեսության արդյունաբերությունը: 1993-1994 թթ. կեսերին արդյունաբերական արտադրության անկումը կազմում էր 21 %, այդ թվում մեքենաշինության բնագավառում 31 %, լայն սպառման ապրանքների բնագավառում 30 %: Ռուսական շուկայի ապրանքների ավելի քան 50 % բաժին էր ընկնում արտասահմանյան արտադրանքին⁵³:

Տնտեսական նման վերափոխումները ունեցան այն բացասական հետևանքները, որ 1990-ական թվականների սկզբներին Ռուսաստանի ազգային եկամուտը գտնվում էր 1976 թ. մակարդակին, որն էլ զգալի չափով հեղինակագրկեց Ե. Գալդարի կառավարությանը:

1992 թ. վերջին Ժողովրդական պատգամավորների համագումարում այսպես կոչված «կարմիր դիրեկտորները» հասան նրան, որ Ե. Գալդարը տվեց հրաժարական:

Նոր կառավարությունը սկսեց գլխավորել Վ. Ս. Չերնոմիրդինը, որով էլ ավարտվեց լիբերալ, ազատական, տնտեսական բարեփոխումների առաջին փուլը, որն ստացել էր «Գալդարի ռեֆորմներ» կամ «ռոմանտիկ» անվանումը, և սկսվեց նոր՝ պրագմատիկ փուլը:

Բայց բոլոր դեպքերում Ե. Գալդարի կառավարությանը հաջողվեց տնտեսական բարեփոխումների առաջին փուլում հասնել գլխավորին՝ փոխել երկրի զարգացման ուղղությունը, որի գլխավոր արդյունքը կայանում էր նրանում, որ երկիրը դուրս եկավ սոցիալիզմից և սկսեց ձևավորվել, թեկուզև ծայրահեղ, ոչ հասուն շուկան:

Շնորհիվ տնտեսության ազատականացման՝ Ռուսաստանը խուսափեց համընդհանուր սմանկացումից, և վերականգնվեց արտասահմանյան գործընկերների կողմից Ռուսաստանի նկատմամբ վստահությունը, և սկսվեց համաշխարհային տնտեսության, շուկայի մեջ սերտաճման, ինտեգրման դժվար ու երկար ճանապարհը:

⁵³ *Sh'u A. C. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Сивохина. История России. М., 2008, էջ 469:*

Վ. Ս. Չերնոմիրդինի կառավարությունը կրում էր կոալիցիոն բնույթ, որի մեջ ներկայացված էին և՛ դեմոկրատները, և՛ կոմունիստները, և՛ ագրարնիկները, և՛ ուրիշները: Իսկ այդ հանգամանքը բավական դժվարություններ էր ստեղծում մշակելու և ընդունելու մեկ միասնական ծրագիր, կարծիք: Սակայն 1993 թ. սեպտեմբերին նորից կառավարություն վերադարձավ փոխվարչապետի և էկոնոմիկայի նախարարի կարգավիճակով Ե. Գալդարը, որին էլ կրկին հնարավորություն տրվեց շարունակելու տնտեսության ապապետականացման քաղաքականությունը:

1993 թ. աշնանը գրեթե ամբողջովին ազատականացվեց գյուղատնտեսության ոլորտը, որով էլ վերջացավ այսպես կոչված «էժան փողերի» շրջանը, այսինքն՝ ժողովրդական տնտեսության նախկին վարկավորման, բյուջեից սնման հզոր պետական ֆինանսավորման համակարգը: Այդ նոր քաղաքականության և փոփոխությունների հետևանքով երկրի տնտեսության արժեզրկման տեմպերը զգալի չափով իջան:

Կառավարության մեջ կատարվեցին նոր փոփոխություններ, նրանում հայտնվեցին շուկայական տնտեսության մեծ ջատագովներ, շուկայագետ Ա. Չուբայսը, որը դարձավ կառավարության առաջին փոխվարչապետը: Հետագա երկու տարիների ընթացքում՝ 1995-1996 թթ., հաջողվեց կանգնեցնել թղթաղրամի արժեզրկումը և իրականացնել զանգվածային սեփականաշնորհում: Ի վերջո երկիրը կարողացավ հաղթահարել սպառողական ապրանքների պակասորդը:

Սակայն տնտեսության բնագավառում կատարվող վերափոխումների առանձնահատկություններից մեկն այն էր, որ 1995-1996 թթ. իրականացվող տնտեսական բարեփոխումները շարունակվում էին կատարվել առանց ձեռնարկությունների արդիականացման, առանց տեխնոլոգիաների նորացման: Փաստորեն, երկրի կապիտալը մեկ ճյուղից տեղափոխվում կամ էլ ներարկվում էր մեկ այլ բնագավառ:

Հետաքրքիր է ասել, որ Խորհրդային Միությունում տնտեսության առաջատար ճյուղ համարվող մեքենաշինության 60 %-ն աշխատում էր երկրի պաշտպանության և ռազմական կարիքների համար, իսկ քաղաքացիական մեքենաշինությունը զարգանում էր ցածր մակարդակով: Եվ հենց այդ նույն ժամանակ արտասահմանյան ֆիրմաների հետ մրցակցության պայմաններում կտրուկ կերպով կրճատվեցին կամ էլ դադարեցվեցին հայրենական մի շարք ապրանքների արտադրանքը ինչպես օրինակ, հեռուստացույցների, համակարգիչների, տեքստիլ արտադրանքի և այլն:

Մի շարք բնագավառներ, որոնք կարևոր տեղ էին գրավում Խորհրդային Միության և ռուսական տնտեսության մեջ, բերելով զգալի եկամուտներ (մեքենաշինություն, պաշտպանական և թեթև արդյունաբերություն և այլն)⁵⁴ հայտնվեցին խոր անկման պայմաններում: 1996 թ. արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1991 թ. համեմատ կրճատվեց երկու անգամ:

1997 թ. երկրում ավարտվեց 16 նավթային արդյունաբերական ընկերությունների համախմբման գործընթացը, որի հետևանքով երկրում ստեղծված հզոր ֆինանսա-արդյունաբերական միավորումները իրենց հնարավորություններով սկսեցին գերազանցել արևմտյան նույնատիպ մյ շարք հայտնի ընկերությունների:

1998 թ. աշնանը՝ հոկտեմբերին, արդյունաբերական արտադրության ոլորտում նկատվեցին դրական տեղաշարժեր, որոնց հետևանքով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ապրանքների արտահանման համար: Զգալի չափով թուլացավ նաև ներքին շուկայում ներմուծվող ապրանքների մրցակցությունը⁵⁴:

Շատ ավելի դժվար խնդիրներ էին կանգնած գյուղատնտեսության առջև:

Ընդհանուր առմամբ խորհրդային կարգերի և ավելի վաղ ժամանակներից գյուղատնտեսության ոլորտում կատարված բազմաթիվ վերափոխումները, փորձարկումները ցավոք ցանկալի արդյունքները չէին տվել: Գյուղացիության կյանքի մակարդակը, նրանց կուլտուր-կենցաղային պայմանները զգալի չափով զիջում էին քաղաքային պայմաններին, որոնց հետևանքով էլ մեծ էր գյուղից քաղաք հատկապես երիտասարդների հոսքը: Դա է պատճառը, որ գյուղում իրականացվող բարեփոխումները բախվում էին բազմաթիվ դժվարությունների հետ:

Սկսած 1988 թ. գյուղում իրականացվել են բարեփոխումների մի շարք մոդելներ, իսկ 1990 թ. վերջին ժողովրդական պատգամավորների արտահերթ 2-րդ համագումարը ընդունեց «Գյուղացիական ֆերմերային տնտեսության մասին» և «Հողային ռեֆորմների մասին» օրենքները, որոնց գլխավոր խնդիրը կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների՝ սովխոզների վերափոխումն էր: Համապատասխան այդ օրենքներին՝ գյուղացիները իրավունք ստացան դուրս գալ կոլտնտեսություններից, խորհտնտեսություններից իրենց հասանելի հողաբաժնով:

⁵⁴ *Տե՛ս В. А. Шестаков. Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 436-437:*

Սակայն իրականությունն այն էր, որ մինչև 1992 թ. կոլտնտեսականները դժկամությամբ էին հող վերցնում՝ վախենալով երկրում քաղաքական կուրսի, քաղաքական գծի հնարավոր փոփոխություններից:

Բայց բոլոր դեպքերում 1991 թ. երկրում ստեղծվեց 44,5 հազար ֆերմերային տնտեսություն: Եվ որպեսզի ֆերմերային տնտեսությունը զարգանար, Բ. Ելցինը ագրարային քաղաքականության մեջ անհրաժեշտ ճշգրտումներ մտցրեց: 1991 թ. դեկտեմբերին ընդունվեց որոշում «ՌԽՖՍՀ-ում հողային ռեֆորմների իրականացման անհապաղ միջոցառումների մասին», որի հետևանքով ստեղծվեցին հողի բաշխման շրջանային ֆոնդեր, իսկ կոլտնտեսություններն ու խորհրտնտեսությունները երկու ամսվա ընթացքում պետք է ենթակվեին վերափոխումների: Եվ 1992 թ. ագրարային ոլորտում տեղի ունեցած առավել նշանակալի արդյունքներից մեկն այն էր, որ ձևավորվեցին հազարավոր ֆերմերային նոր տնտեսություններ: Մեկ տարվա ընթացքում նրանց թիվը աճեց ավելի քան 130 հազարով: 1993 թ. այդ թիվն ավելացավ ևս 90 հազարով՝ հասնելով ընդհանուր առմամբ 270 հազարի: Իսկ հետագայում, սկսած 1993 թ. երկրորդ կեսից, նոր ֆերմերային տնտեսությունների կազմակերպումը դադարեց: 1995 թ. սկսվեց մի նոր գործընթաց, նրանց թիվը սկսեց նույնիսկ կրճատվել⁵⁵: Այդ նոր երևույթի գլխավոր պատճառն այն էր, որ երկրում դեռևս չէին կարգավորվել հողային հարաբերությունները, Ռուսաստանի համար հավերժ խնդիր համարվող ագրարային հարցը և մինչև 1992 թ. աշնանը հողի նկատմամբ մասնավոր սեփականության հարցը հանդիսանում էր երկրի քաղաքական հակամարտությունների գլխավոր թեման:

Խնդիրն այն էր, որ մինչև 1993 թ. հոկտեմբերյան իրադարձությունները երկրի Գերագույն խորհուրդը խոչընդոտում էր հողի մասնավոր սեփականության վերածնունդը և միայն 1993 թ. հոկտեմբերի 27-ին երկրի նախագահի՝ Բ. Ելցինի «Ռուսաստանում հողային հարաբերությունների կարգավորման և ագրարային վերափոխումների զարգացման մասին» հրամանագրով լուծվեց հողի նկատմամբ մասնավոր սեփականության հարցը: Համապատասխան այդ որոշման՝ հողը կարելի էր վաճառել և գրավ դնել: Հողօգտագործման օրենսդրությունը ուներ երեք սահմանափակումներ՝ հողին չէին կարող տիրանալ օտարերկրացիները, չէր կարելի ունենալ ավելի մեծ քանակությամբ հող, որը որոշված էր

⁵⁵ Նույն տեղում, էջ 437-438:

յուրաքանչյուր տարածաշրջանի համար և վերջապես, չէր կարելի փոխել հողի գյուղատնտեսական ուղղվածությունը, այսինքն չէր կարելի հողը այլ նպատակների համար օգտագործել:

Սակայն հետաքրքիր է ասել, որ 1994 թ. գարնանը, երբ երկրի մախագահի վերոհիշյալ հրամանագիրը դրվեց պետական դումայի քննարկմանը, հավանության չարժանացավ նրա ստորին պալատի կողմից: Եվ միայն այն բանից հետո, երբ հողային օրենսդրության մեջ մտցվեց հավելում, համապատասխան կետ այն մասին, որ «հողը կարող է լինել մասնավոր սեփականություն, բայց առանց վաճառելու իրավունքի», նոր գումարման Պետական դուման և Դաշնային խորհուրդը հաստատեցին մախագահի հետևյալ հրամանագիրը:

1995 թ. գյուղատնտեսության և ընդհանրապես ագրարային արդյունաբերական ոլորտը շուկայական հարաբերությունների տեսանկյունից դարձավ շրջադարձային: Գյուղացիների նյութական շահագրգռվածությունը հանգեցրեց նրան, որ ընդլայնվեցին ցանքաստարածությունները, բարձրացավ բերքատվությունը և այլն: Նման դրական միտումները վերջին հաշվով նպաստեցին երկրի գյուղատնտեսական արտադրության զարգացմանը, որն էլ դարձավ կարևոր պայման և մախաղդյալ՝ կանգնեցնելու տնտեսական ճգնաժամը:

1997 թ. մարտի 6-ին երկրի մախագահ Բ. Ելցինը Ռուսաստանի Դաշնության Դաշնային Ժողովին ուղղված ամենամյա ուղերձում խոսում է ազատական տնտեսական ռեֆորմների նոր փուլի մասին, որի կարևոր ձեռքբերումներից մեկն այն էր, որ տեղի էր ունեցել երկրի համախառն ներքին արդյունքի 1 % աճ: Ընդ որում աճը նկատելի էր թեթև արդյունաբերության ոլորտում, ավելի քան 9 %: Դա, փաստորեն, հետխորհրդային շրջանում երկրի տնտեսության պատմության մեջ առաջին իրական հաջողությունն էր: Իհարկե անհրաժեշտ է նշել, որ աճը տեղի էր ունեցել ինվեստիցիաների, փոխառությունների զանգվածային ներդրումների շնորհիվ⁵⁶:

Ընդհանուր առմամբ այդ նույն շրջանում Ռուսաստանի տնտեսական զարգացումն ուներ արդեն դրական մախաղդյալներ: Առաջին անգամ ռուսական կառավարության հետխորհրդային շրջանի նորագույն պատմության մեջ, որն արդեն 1999 թ. օգոստոսից սկսեց գլխավո-

⁵⁶ *Sl' u, Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 453:*

րել Վ. Վ. Պուտինը, նկատելի էր այն համագմանքը, որ երկրի տնտեսական քաղաքականությունը աջակցություն էր ստանում ռուսական օրենսդիրների կողմից: Այդ աջակցությունն արտահայտվում էր օրենսդիրների կողմից երկրում անցկացվող ռեֆորմների, պետական բյուջեի ընդունման, հաստատման քաղաքականության մեջ: Նոր կառավարության գործունեության մեջ հատկապես կարևոր էր արդեն երկրի նախագահ Վ. Վ. Պուտինի հեղինակությունը, որը 1999 թ. օգոստոսից գլխավորում էր երկրի կառավարությունը, իսկ դեկտեմբերի 31-ից նաև երկրի նախագահի պարտականությունները մինչև 2000 թ. մարտը, երբ արդեն ընտրություններում հաղթելով՝ դարձավ Ռուսաստանի Դաշնության նախագահ: Ռուսաստանի Դաշնության մոր կառավարությունը և նախագահ Վ. Վ. Պուտինը հատկապես ակտիվ քայլեր ձեռնարկեցին վերահսկելու Ռուսաստան ներքին ֆինանսները՝ դրանով նպաստելով երկրի բյուջեի համալրմանը: Հատկապես քաղաքական վերահսկողության տակ էին հանրահայտ օլիգարխները՝ Բերեզովսկին ու Գուսինսկին, ովքեր պատասխանատվությունից խուսափելու համար ստիպված էին թողնել երկիրը և մեկնել արտասահման:

Ռուսաստանի Դաշնության տնտեսության զարգացման համար կարևոր պայման հանդիսացավ համաշխարհային շուկայում էներգակիրների գների աճը, որի հետևանքով երկրի բյուջեն հսկայական քանակությամբ վալյուտային մաքսեր ունեցավ: Ռուսական նավթային ընկերությունների շահույթները 1999 թ. ավելացան 7 մլրդ. ռուբլով, 2000 թ.՝ 17 մլրդ. ռուբլով: Այդ նույն ժամանակ ռուսական Կենտրոնական բանկի ոսկու պաշարները ավելացան ավելի քան երկու անգամ և 2000 թ. կազմում էին 27,95 մլրդ. դոլար⁵⁷:

Արդյունաբերական արտադրության մեջ սկսված դրական տեղաշարժերը, որոնք սկսվել էին Ե. Պրիմակովի կառավարության ժամանակ (1998 թ. սեպտեմբեր-1999 թ. մայիս) և ամրապնդվել 1999 թ. երկրորդ կեսից՝ Վ. Պուտինի կառավարության ժամանակաշրջանում, ստացան հետագա զարգացում: Ընդհանուր առմամբ երկրի արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական աճը 1999 թ. կազմեց 3,5 %, 2000 թ.՝ 8,3 %: Միաժամանակ նվազեցին թղթադրամի արժեզրկման

⁵⁷ *Տե՛ս Ա. Ю. Дворниченко, Ю. В. Тог, М. В. Ходяков. История России, М., 2008, էջ 426; Новейшая история России, 1914-2008. М., 2008, էջ 456:*

տեմպերը: Եթե 1999 թ. այն կազմում էր մոտ 36 %, 2000 թ. 20 %, ապա արդեն 2001 թ.՝ մոտ 18 %: Այդ նույն ժամանակ բնակչության ռեալ դրամական եկամուտները աճեցին 6.4 %-ով:

Երկրի համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) աճը 2001 թ. կազմում էր 5,2 %, որը այլ պատճառներից բացի բացատրվում էր նաև այն հանգամանքով, որ արտասահմանյան ներդրումները տնտեսության մեջ զգալի բաժին էին կազմում: Միայն ԱՄՆ-ի ներդրումները Ռուսաստանի տնտեսության մեջ 2001 թ. կազմել են 5 մլրդ. դոլար: 1999-2001 թթ. Ռուսաստանի տնտեսության հաջող առաջընթացը շարունակվեց նաև 2002-2004 թթ., որի տարեկան համախառն աճը կազմում էր ավելի քան 7 %: Ռուսական տնտեսության աճի կարևոր գործոններից մեկը այդ ժամանակաշրջանում համարվում է էներգակիրների համաշխարհային գների բարձրացումը: Մեկ բարել նավթի գինը այդ տարիներին՝ 2002-2004 թթ. կազմում էր 40 դոլար, 2005-2008 թթ.՝ 90 դոլար, իսկ առանձին դեպքերում մինչև 100 դոլար (1 բարել նավթը հավասար է 158,76 լիտրի)⁵⁸

Ռուսաստանի Դաշնության դիրքերը բավական ուժեղ էին նաև այլ էներգակիրների բնագավառում, որն էլ կանխորոշում էր նրա՝ որպես գերիզուցող էներգակիր երկիր, մշակելու երկրի մոտ տնտեսական ռազմավարությունը: Այս ամենն էլ հիմք է տալիս անելու հետևություն, որ ռուսական տնտեսությունը կարող է դառնալ ինքնաբավարար, որի համար կան բոլոր պայմանները. հսկայական տերիտորիա, հարուստ վառելիքա-էներգետիկ պաշարներ, լայնածավալ գյուղատնտեսական անդաստաններ, բազմամիլիոն մարդկային ներուժ և տարողունակ շուկա:

Տնտեսության մեջ կատարված բարեփոխումները նպաստեցին նաև հասարակության սոցիալական կառուցվածքում կատարվող փոփոխություններին: Ձևավորվեցին սոցիալական մոր խմբեր, մոր ձեռնարկատերեր (խոշոր, միջին և փոքր), ֆերմերներ, անհատ ձեռներեցներ և այլն: Նման վերափոխումները նպաստում էին նաև սոցիալական ոլորտի բարելավմանը, մարդկանց բարեկեցության համար պայմանների ստեղծմանն ու զարգացմանը: Շնորհիվ տնտեսական նման բարեփոխումների, երկրի տնտեսական աճին՝ Ռուսաստանի Դաշնությունն ունի բոլոր հնարավորությունները ապահովելու երկրի դինամիկ զարգացումը և դառնալու աշխարհի առաջատար, հզոր երկրներից մեկը:

⁵⁸ *Sl'u Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 456:*

3. ՈՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊՀ ԱՆԴԱՄ ՄՅՈՒՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՅԵՏՈՐՀԴԿԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային Միության փլուզման նախօրյակին Կենտրոնի և Միութենական հանրապետությունների փոխհարաբերությունները բավական լարված էին: Ձգտումը Կենտրոնից առանձնանալու՝ զնալով մեծանում էր: Միության մեջ մտնող հանրապետությունները ուղիներ էին փնտրում առանց կորուստների ու արյունահեղության դուրս գալ Միության կազմից, կառուցել նորանկախ պետություն՝ միաժամանակ պահպանելով որոշակի կապեր միմյանց հետ: ԽՍՀՄ փլուզման գործընթացներն ավելի արագացան 1991 թ. դեկտեմբերի 8-ին երեք սլավոնական պետությունների ղեկավարների ԽՍՀՄ փլուզման մասին Բելովեժյան հայտնի որոշումից հետո: Սակայն ճշմարտությունն այն է, որ ԽՍՀՄ-ի փլուզման նախադրյալներն ավելի վաղ էին հասունացել, որոնք ավելի սրվեցին Գորբաչովյան հանրահայտ վերակառուցման քաղաքականության, հասարակության դեմոկրատացման, պատմական անցյալի սխալներից հրաժարվելու և պատմական ճշմարտությունը վերականգնելու նոր քաղաքականության հետևանքով: Երկրում ստեղծվեց հասարակական-քաղաքական մտածողության մի նոր մթնոլորտ, որն էլ հնարավորություն տվեց Միութենական հանրապետություններին ժողովրդավարական նոր ալիքի վրա ձևավորված խորհրդարաններում քննարկման հարց դարձնել Միությունից դուրս գալու և նորանկախ պետություն ձևավորելու խնդիրը: Փաստորեն, այդ նոր շարժումը դարձավ այն հզոր ալիքը և այն նոր մտածելակերպը, որ պահպանել Խորհրդային Միությունը իր դարն ապրած, իրեն վաղուց սպառած կառավարման հին համակարգով, հին աշխատառճով և ձևերով հնարավոր չէր:

Ներկայացնելով և գնահատելով տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական գործընթացները և ընդհանրապես հասարակական մտածելակերպը, երկրում իշխող նոր մթնոլորտը՝ ակադեմիկոս Բ. Ն. Տոպորնին այդ օրերի մասին գրում է. «Խորհրդային Միությունը այն ձևով, որով նա ձևավորվել էր նախորդ տասնամյակների ընթացքում, չէր բավարարում նրա մեջ մտնող հանրապետություններին: Չևավորվել էր միմյանց հակադրվելու յուրօրինակ մի ստերեոտիպ, մի անփոփոխ շաբլոն, երբ Միությունը չէր դիտվում որպես նրա մեջ մտնող

բաղկացուցիչ մասերը՝ հանրապետությունները միավորող, ինտեգրող և նրանց շահերն արտահայտող մարմին, այլ ավելի շատ դիտվում էր ինչ-որ օտար մի ուժ, որը կտրված էր նրա սուբյեկտներից իր անչափ կենտրոնացված, մեծ բյուրոկրատական ապարատով»⁵⁹։ Նման հանգամանքն էլ նպաստեց ԽՍՀՄ-ից դուրս գալու գործընթացին, որն ավելի հստակ սկսեց ձևակերպվել հատկապես Մերձբալթյան հանրապետությունների պետական սուվերենության մասին ընդունած հռչակագրերում (Էստոնիա-1988 թ. նոյեմբերի 16, Լիտվա-1989 թ. մայիսի 15, Լատվիա-1989 թ. հուլիսի 28), որոնցում միարժեքորեն խոսվում էր այն մասին, որ այդ հանրապետությունները իրենց համարում են բուրժուական հանրապետությունների շարունակողներ, որոնք հաստատվել էին իրենց տերիտորիաներում մինչև խորհրդային կարգերի հաստատումը (խորհրդային կարգեր Մերձբալթյան երկրներում հաստատվել են 1940 թ. ամռանը, որի արդյունքում բոլոր երեք հանրապետությունները մույն 1940 թ. հուլիսին մտցվել են ԽՍՀՄ կազմի մեջ – ընդդ. Հ. Ա.), և որ նրանք մտադիր են իրենց հարաբերությունները Խորհրդային Միության հետ կառուցել միջպետական պայմանագրերի հիման վրա⁶⁰։ Սակայն հետաքրքիր է ասել, որ 1989-1991 թթ. Միութենական հանրապետությունները, ընդունելով որոշումներ իրենց ինքնորոշումների մասին, դեռևս չէին դնում ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին հարցը։ Բայց բոլոր դեպքերում առաջիններից մեկը մնան որոշում ընդունեց Ադրբեյջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության նորընտիր խորհրդարանը 1989 թ. սեպտեմբերի 23-ին, որը կոչվում էր «Ադրբեյջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ինքնիշխանության մասին»։ Նրանում դեռևս չէր խոսվում ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին, այլ ասվում էր այն մասին, որ Ադրբեյջանը ինքնիշխան սոցիալիստական պետություն է ԽՍՀՄ-ի կազմում, որի հարաբերությունները Միության հետ պետք է կառուցված լինեն պայմանագրային հիմքի վրա։ Միաժամանակ Ադրբեյջանական ԽՍՀ-ն իրեն իրավունք էր վերապահում ազատ կերպով դուրս գալու ԽՍՀՄ-ից։

⁵⁹ St'iu Топорнин Б. Н. Новый Союзный договор: Теоретические подходы. Трудные поиски решений. М., 1990, էջ 9:

⁶⁰ St'iu Г. Г. Шинкаревич. Сдружество независимых государств (правовые основы деятельности). Учебное пособие. М., 2006, էջ 3:

1989-1990 թթ. նման որոշումներ ընդունեցին նաև Միութենական մյուս հանրապետությունները: Դրանց շարքում առանձնանում է Խորհրդային Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի (1990 թ. մայիս) «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը (1990 թ. օգոստոսի 23): Դրանում ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը և գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև, նաև նպատակ ունենալով վերականգնելու պատմական արդարությունը ու կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, շարունակելով 1918 թ. մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի կառուցումը և այլն, հռչակում է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը⁶¹:

Նման կարգի որոշումներ ընդունեցին նաև Բելոռուսիան (1990 թ., հունիսի 27), Ղազախստանը (1990 թ., օգոստոսի 23), Կիրգիզիան (1990 թ., դեկտեմբերի 15), Մոլդավիան (1990 թ, հունիսի 23), ՌԽՖՍՀ-ն (1990 թ., հունիսի 12), Տաջիկստանը (1990 թ., օգոստոսի 24), Թուրքմենիան (1990 թ. օգոստոսի 22), Ուզբեկստանը (1990 թ. հունիսի 20), Ուկրաինան (1990 թ., հուլիսի 16):

Այսպիսով, փաստորեն, 1989-1990 թթ. Միութենական հանրապետությունները ձևականորեն գործում էին դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ-ի կազմում, և ոչ մի հանրապետություն մինչև 1991 թ. օգոստոսյան հայտնի խռովությունը («ГКЧП») չհրապարակեց որևէ որոշում իր անկախության մասին:

Միակ հանրապետությունը, որ անմիջապես հռչակեց իր անկախությունը, Վրաստանն էր: 1990 թ. մարտի 9-ին Վրաստանի ԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց «Վրաստանի սուվերենության պետական շահերի երաշխիքների մասին» որոշում, որի մեջ ուղղակի ասվում է, որ 1921 թ. փետրվարին Խորհրդային Ռուսաստանի գորքերի մուտքը Վրաստան և նրա տերիտորիայի զավթումը հանդիսանում է իրավական տեսակետից ռազմական միջամտություն (ինտերվենցիա) և զավթում (օկուպացիա), որի նպատակն էր տապալել գոյություն ունեցող քաղաքական համակարգը և բռնակցել երկիրը: 1991 թ. ապրիլի 9-ին հանրա-

⁶¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 9-10:

պետության խորհրդարանը ընդունեց Վրաստանի պետական անկախության մասին որոշում: Իսկ արդեն 1991 թ. օգոստոսյան դեպքերից հետո համրապետությունները սկսեցին ընդունել անկախության մասին որոշումներ:

Եթե մի շարք համրապետություններ իրենց անկախությունը հռչակում, ընդունում էին առանց համաժողովրդական հանրաքվեների, ապա Հայաստանի Հանրապետությունը առաջիններից մեկն էր, որ 1991 թ. սեպտեմբերի 21-ին անցկացրեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին հանրաքվե, որի ընթացքում քվեարկության 95 % մասնակիցներից 94,39 %-ը «այո» ասաց ԽՍՀՄ-ից դուրս գալուն, որի արդյունքները հաստատվեցին Հանրապետության Գերագույն խորհրդի 1991 թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ: Իսկ 1991 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին Հայաստանի Հանրապետության սանմանադրական օրենքը կիրառել այն հրապարակելու պահից» որոշումը⁶²:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, ապա այստեղ գործընթացները տեղի էին ունենում մի փոքր այլ ձևով: ՌԴ-ում, փաստորեն, չէին ընդունվել անկախության մասին նորմատիվ ակտեր: ՌԴ-ում նոր իրավակարգի և սահմանադրության հիմքը հանդիսացավ 1990 թ. հունիսի 12-ի ինքնորոշման մասին Հռչակագիրը:

Նորանկախ համրապետությունների ձևավորման գործընթացում կարևոր իրադարձություն էր փոխադարձաբար միմյանց ճանաչելը: Ընդ որում դա հաճախ կատարվում էր, երբ միութենական համրապետությունները, նույնիսկ մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը, իրենց ընդունած անկախության, ինքնիշխանության մասին հռչակագրում պատրաստակամություն էին հայտնում միմյանց միջև հաստատել միջպետական մակարդակով հարաբերություններ: Եվ իրոք, մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը՝ 1990 թ. վերջից մինչև 1991 թ. սկիզբը, նրանք իրար միջև կնքեցին միջազգային մի շարք պայմանագրեր: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունը Մերձբալթյան համրապետությունների հետ կնքեց միջպետական համրապետությունների մասին պայմանագրեր. Էստոնիայի համրապետության հետ՝ 1991 թ. հունվարի 12-ին, Լատվիայի Հանրապետության

⁶² Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 9-10, 179: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ. 1990-1995, Երևան, 1995, էջ 19:

հետ՝ 1991 թ հունվարի 13-ին, Լիտվայի Հանրապետության հետ՝ 1991 թ. հուլիսի 29-ին: Մյուս հանրապետությունների հետ պայմանագրերը չունեին հատուկ անվանում: Դրանք կնքվեցին Ուկրաինայի հետ՝ 1990 թ. նոյեմբերի 19-ին, Ղազախստանի Հանրապետության հետ՝ 1990 թ. նոյեմբերի 21-ին, Բելոռուսիայի Հանրապետության հետ՝ 1990 թ. դեկտեմբերին և այլն:

Եվ քանի որ 1990 թ. երկրորդ կեսին բոլոր հանրապետությունները ինքնորոշման մասին արդեն ընդունել էին հռչակագրեր, ուստի նրանցից յուրաքանչյուրը մույմպիսի դիրքորոշում ուներ նաև մյուս հանրապետությունների նկատմամբ: Փաստորեն, նորանկախ պետությունները սկսում էին միմյանց ճանաչել և միմյանց հետ նոր տիպի փոխհարաբերություններ հաստատել: Մյուս առանձնահատկությունն այն էր, որ 1991 թ. դեկտեմբերի 8-ի Բելովեժյան համաձայնությամբ նախատեսվում էր նաև ստեղծել Անկախ պետությունների համագործակցություն՝ ԱՊՀ, որի դռները բաց էին ոչ միայն նախկին Միութենական հանրապետությունների, այլ նաև այլ երկրների առջև, ուստի այդ գործընթացն էլ ավելի արագացավ: Փաստորեն, Խորհրդային Միության փլուզման ժամանակ այժմ արդեն նախկին խորհրդային հանրապետությունների միջև սկսեցին ձևավորվել նոր հարաբերություններ, որոնք ընթանում էին երկու ճանապարհով. նախ ԱՊՀ շրջանակներում և հետո երկկողմանի հարաբերություններ համագործակցության մեջ մտնող երկրների միջև: ԱՊՀ ձևավորումը, փաստորեն, օգնեց կանխելու ԽՍՀՄ տարերային փլուզումը և ապահովեց սահուն կերպով լուծելու հարցեր, որոնք կապված էին գույքի բաժանման, ԽՍՀՄ-ի նախկին պարտքերի, տրանսպորտի, ֆինանսական, բնակչության միգրացիայի՝ տեղաշարժերի, փախըստականների և այլ հարցերի հետ:

Բելովեժյան որոշումից հետո՝ 1991 թ. դեկտեմբերի 13-ին, Աշխաբադում տեղի ունեցավ Կենտրոնական Ասիայի 5 հանրապետությունների ղեկավարների՝ Ղազախստանի (Ն. Նազարբաև), Կիրգիզիայի (Ա. Ական), Տաջիկստանի (Ռ. Նաբիև), Թուրքմենստանի՝ (Ս. Նիյազով), Ուզբեկստանի՝ (Ի. Զարիմով) հանդիպումը, որի ընթացքում ընդունվեց որոշում ուղիներ փնտրել նախկին հանրապետություններ միավորելու մեկ ընդհանուր համագործակցության մեջ: Մասնակիցներից Ն. Նազարբաևը առաջարկեց այդ հարցը քննարկելու համար կազմակերպել նախկին բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների հավաք և ընդունել համատեղ մի որոշում: 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում տեղի

ունեցավ բոլոր հանրապետությունների ղեկավարների հանդիպումը բավական լայն ներկայացուցչական կազմով: Այդ հանդիպման արդյունքն այն էր, որ ընդունվեց հռչակագիր ԱՊՀ ստեղծման մասին, որը ստորագրեցին Խորհրդային Միության նախկին 11 հանրապետությունների ղեկավարները: Ռուսաստանի Դաշնությունից այն ստորագրեց Բ. Ելցինը, Ուկրաինայի ամունից՝ Լ. Կրավչուկը, Բելոռուսից՝ Ս. Շուշկիչը, Ղազախստանից՝ Ն. Նազարբաևը, Կիրգիզիայից՝ Ա. Ակաևը, Տաջիկստանից՝ Ռ. Նաբիևը, Թուրքմենստանից՝ Ս. Նիյազովը, Ուզբեկստանից՝ Ի. Բարիմովը, Հայաստանից՝ Լ. Տեր-Պետրոսյանը, Մոլդովայից՝ Մ. Սնեգուրը և Ադրբեջանից՝ Ա. Մութալիբովը: Ավա-Աթայի հավաքը լուսաբանելու համար Ղազախստանի մայրաքաղաք էին ժամանել ավելի քան 500 ժուռնալիստներ, ընդ որում 200-ը արտասահմանյան երկրներից⁶³:

Նորանկախ ԱՊՀ-ի կառուցվածքը դեռևս հստակ չէր, բայց համագործակցության ներսում սկսվել էին արդեն երկկողմանի պայմանագրեր կնքել, տարբեր կարգի հանդիպումներ կազմակերպել և այլն: Ընդունվեց որոշում՝ սահմանել մասնակից երկրների հերթափոխով նախագահելու կարգ, մտցնել ԱՊՀ գործադիր քարտուղարի պոստ, ստեղծել ԱՊՀ երկրների միջխորհրդարանական ասամբլեա, մշակել ԱՊՀ կանոնադրությունը և այլն: Միաժամանակ հասկանալի է, որ Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ դարձան առաջնային, որքան էլ որ դրանք հաճախ ենթարկվում էին փոփոխությունների և դժվարությունների:

Ռուսաստանի Դաշնության համար նորաստեղծ ԱՊՀ-ում կարևոր և անհանգստացնող խնդիրներից մեկը Ռուսաստանից դուրս գտնվող ռուսների հարցն էր, որոնք, պատկերավոր ասած, մեկ ժամում դարձան օտարերկրացիներ: Դրանց թիվը ԽՍՀՄ-ի փլուզման պահին հաշվվում էր 25 մլն.⁶⁴: Ռուսական բնակչությունը նախկին հանրապետությունների թվում ենթարկվում էր անբարյացական վերաբերմունքի: Միլիոնավոր ռուսներ հարկադրված էին գաղթել Ռուսաստան, որքան էլ որ ռուսական կառավարությունը ջանքեր էր թափում կանխելու, կանգնեցնելու այդ տարերային տեղաշարժերը:

⁶³ *St'u Новейшая история России, 1914-2008. М., 2008, էջ 457-458:*

⁶⁴ *St'u Новейшая история Отечества XX век. В двух томах, т. 2, էջ 417:*

Այդ գործընթացները հատկապես սկսեցին դրսևորվել Մերձբալթյան հանրապետություններում, Ղրղզստանում, Մոլդովայում: Միայն 1990-ական թվականներին 2-2,5 մլն. ռուսներ և այլազգիներ վերաբնակեցվեցին Ռուսաստանի Դաշնությունում⁶⁵:

Ազգամիջյան խնդիրների շարքում լարված վիճակ էր ստեղծվել հատկապես Հարավային Կովկասում, ավելի կոնկրետ՝ Ադրբեջանի և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև, որը վերածվեց պատերազմի: Գլխավոր պատճառը Լեռնային Ղարաբաղն էր, որը տասնամյակներ շարունակ անարդարացիորեն գտնվում էր Ադրբեջանի կազմում:

Այդ պատերազմում Ադրբեջանի պարտությունը հանգեցրեց կառավարական ճգնաժամի և փոփոխության: Իշխանության եկած նոր ուժերը՝ Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ, որը ժողովրդական ճակատի շարժման լիդերն էր, քայլեր ձեռնարկեց Ադրբեջանը ԱՊՀ-ի կազմից դուրս բերելու ուղղությամբ: Այդ քայլը ոչնչով չփոխեց երկրում ստեղծված ճգնաժամային վիճակը, որն էլ հանգեցրեց նրան, որ Ադրբեջանում նորից իշխանափոխություն տեղի ունեցավ: Իշխանության եկած նոր նախագահը՝ փորձառու Հեյդար Ալիևը, որը 1982-1987 թթ. եղել էր ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ, կրկին ցանկություն հայտնեց դառնալու ԱՊՀ անդամ: Այդ համգամանքը փոխեց Ադրբեջան-Ռուսաստան հարաբերությունները, որոնք սկսեցին աստիճանաբար բարելավվել: Ընդ որում նման մթնոլորտը շարունակվեց նաև Ալիևի որդի՝ Իլիամ Ալիևի կառավարման տարիներին: Բավական է ասել, որ 2007 թ. ռուս-ադրբեջանական առևտրի ծավալը հասավ 1,5 մլրդ. դոլարի:

Եվ այսօր էլ Ռուսաստանը ամուր կերպով շարունակում է Ադրբեջանի հետ պահպանել առևտրային հարաբերություններում առաջնային դեր:

Ռուսաստան-Վրաստան հարաբերությունները կրում էին լարված բնույթ՝ կապված այն հանգամանքի հետ, որ 1991 թ. մայիսին Վրաստանում իշխանության եկավ Զվիադ Գամսախուրդիան, որն իրեն դրսևորեց, ինչպես գնահատում են ռուսական առանձին հեղինակներ, ուսումնասիրողներ (Մ. Վ. Խոդյակով, Վ. Ա. Կուտուզով, Ն. Բ. Լեբինա, Ի. Ս. Ռատկովսկի, Մ. Ֆ. Ֆլորինսկի և ուրիշներ) որպես բացահայտ շովինիստ: Նրա առաջին քայլերից մեկը Հարավային Օսիայում և

⁶⁵ *Տե՛ս Новейшая история России. 1914-2008. М., 2008, էջ 458:*

Աբխազիայում արյունալի դեպքերի հրահրումն էր, որոնց բնակչությունը ցանկանում էր Ռուսաստանի հետ ավելի մերձենալ ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական տեսակետից: Չ. Գամսախուրդիայի ոչ այնքան հեռատես, չմտածված և չկշռադատված քաղաքականությունը և քայլերը հանգեցրին նրա հեղինակության խաթարմանը և 1992 թ. սկզբներին երկրում տեղի ունեցած պետական հեղաշրջման արդյունքում իշխանության եկավ Խորհրդային Միության նախկին արտաքին գործերի նախարար (1985 թ. հուլիս-1991 թ. հունվար) Էդուարդ Շևարձնաձեն, որը նաև դեռևս 1976 թ. ԽՄԿԿ Կենտկոմի Զարդյուրդի անդամ էր: Նրան հաջողվեց մի փոքր մեղմել Հարավային Օսիայում առաջացած հակամարտությունը, սակայն աբխազները, որոնք իրենց հայրենիքում դարձել էին ազգային փոքրամասնություն, այլևս չէին հանդուրժում մնալ իրավիճակը: Մինչդեռ Վրաստանը փորձեց զենքի ուժով կարգավորել պատմականորեն առաջացած ազգամիջյան հակամարտությունը՝ զորքերը մտցնելով Աբխազիա: Պատերազմը Վրաստանի համար չդարձավ հաղթական: Վրացական զորքերը ջախջախիչ պարտություն կրեցին և ստիպված թողեցին Աբխազիայի սահմանները, իսկ վրացական բնակչությունը դիմեց փախուստի: Ռուսաստանի միջամտությունը այդ անչափ բարդ խնդրին ի վերջո հանգեցրեց նրան, որ ռուսական խաղարարար զորքերը մտան Աբխազիա և փորձեցին կանխել հետագա բախումները:

Այդ բոլորի արդյունքն եղավ այն, որ 1994 թ. Վրաստանն որոշեց դառնալ ԱՊՀ անդամ և Մոսկվայի հետ համաձայնելով՝ ռուսական զորքեր տեղակայվեցին Վրաստանի տարածքում⁶⁶: Հետագա քայլերը թե՛ ԱՊՀ շրջանակներում և թե՛ Ռուսաստան-Վրաստան հարաբերություններում ցանկալի արդյունք չտվեցին: Դրանք ավելի լարված բնույթ ստացան 2003 թ. Վրաստանում իրականացված գումավոր «վարդերի» հեղափոխությունից հետո, երբ իշխանության եկավ Մ. Սահակաշվիլին հայտարարեց Վրաստանի տերիտորիալ ամբողջականության վերականգնման մասին: 2004 թ. օգոստոսին իրադարձությունները հասան արյունահեղ ընդհարումների: Վրացական կողմը հետևողականորեն պահանջում էր Մոսկվայից ռուսական զորքերը հանել Վրաստանից: Այդ խնդիրը շատ ավելի հստակ կերպով ձևակերպեց Մ. Սահակաշվիլին 2007 թվականին: Եվ չնայած այն պլանավորված էր 2008 թ.

⁶⁶ *Տե՛ս Новейшая история России. 1914-2008, М., 2008, էջ 459-460:*

ընթացքում, բայց արդեն 2007 թ. նոյեմբերի 15-ին ժամկետից շուտ Ախալքալաքում գտնվող ռուսական ամենամեծ հենակետը՝ թողնելով միայն որոշ խաղաղապահ ուժեր ՄԱԿ-ի մանդատի հիման վրա: Նույն թվականի Դազոմիսյան համաձայնությամբ որոշ ուժեր թողնվեցին Հարավային Օսիայում: Դժվար չէ ենթադրել, որ նման գործընթացները էլ ավելի վատթարացրին ռուս-վրացական հարաբերությունները, որոնք ի վերջո հանգեցրին 2008 թ. օգոստոսյան 5-օրյա (7-11) ռուս-վրացական պատերազմի: Պատերազմը փոխեց Հարավկովկասյան տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը: 2008 թ. օգոստոսի 12-ին Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին հայտարարեց ԱՊՀ-ից դուրս գալու մասին: Օգոստոսի 14-ին Վրաստանի խորհրդարանը միաձայն (117 կողմ) որոշում ընդունեց ԱՊՀ-ից Վրաստանի դուրս գալու վերաբերյալ: Եվ քանի որ ԱՊՀ կանոնադրության 9-րդ հոդվածով այդ իրավունքը թույլատրվում էր, ուստի ԱՊՀ-ի Արտաքին գործերի նախարարության կողեգիան նախ ընդունեց որոշում Վրաստանի անդամակցության դադարեցման մասին, իսկ հետո՝ 2009 թ. օգոստոսի 18-ին, Վրաստանը պաշտոնապես դադարեցրեց իր անդամակցությունը ԱՊՀ-ին⁶⁷:

Ռուսաստանի Դաշնության համար անչափ կարևոր նշանակություն ուներ թե ինչպիսին կլինեին հարաբերությունները Ուկրաինայի և Բելոռուսի հետ:

Զբաղեցնելով նախկին Խորհրդային Միության տարածքի 76 %-ը՝ Ռուսաստանի Դաշնությունը կենտրոնացրել էր ԱՊՀ հարստության մեծ մասը: 1991 թ. ՌԽՖՍՀ չափաբաժինը համամիութենական ընդհանուր կշռի մեջ կազմում էր նավթի 92 %-ը, բնական գազի 76 %-ը, քարածխի 57 %-ը, նիկելի և վոլֆրամի հանքերի ավելի քան 92 %-ը, արծիճի 98,5 %-ը, ապատիտի (ֆոսֆատների) և ալմաստի 100 %-ը, ցեմենտի արտադրության 60%-ը, պատրաստի հանքային պարարտանյութերի 60 %-ը: Ռուսաստանին էր պատկանում երկրի տնտեսության մի շարք ճյուղերի արտադրության մենաշնորհը, հատկապես մեքենաշինության, մետալուրգիական և քիմիական արտադրության, ինչպես նաև ժողովրդական տնտեսության սպառման բազմաթիվ ապրանքների և այլնի գծով: Սակայն երբ տեղի ունեցավ ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև ԱՊՀ երկրների տնտեսության ապակենտրոնացում, այսինքն նախկին

⁶⁷ *Տվյալները վերցված են ՌԴ համապատասխան կայքից. www.mid.ru.*

ամբողջը բաժանվեց մասերի, առաջացան նոր դժվարություններ և բարդություններ հանրապետությունների միջև: Օրինակ, Ուկրաինայի անջատումը Ռուսաստանից երկու երկրներին էլ մեծ վնաս պատճառեց: Ընդ որում, բացի տնտեսական դժվարություններից, ճգնաժամից, այն ունեցավ նաև քաղաքական հետևանքներ: Ուկրաինայի և Ռուսաստանի միջև 1992 թ. առաջացավ սուր ճգնաժամ՝ կապված սևծովյան նավատորմի հետ: Ուկրաինայի նախագահ Լ. Կրավչուկի հրամանով երկրի տարածքում գտնվող բոլոր ռազմական ուժերը անցնում էին նրա իրավասության տակ, իսկ Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինի հրամանով սևծովյան նավատորմը անցնում էր Ռուսաստանի իրավասության տակ և այլն: Նման վիճակը հղի էր ռազմական բախման վտանգով: Բայց, այնուամենայնիվ, կողմերին հաջողվեց 1992 թ. օգոստոսի 3-ին Յալթայում գալ համաձայնության սևծովյան նավատորմի բաժանման և համատեղ ռազմական հրամանատարության ստեղծման մասին:

Մյուս դժվարությունը երկու երկրների միջև այն էր, որ Ռուսաստանում շատերը չէին հաշտվում այն փաստի հետ, որ 1954 թ. Ն. Խրուշչովի ոչ հեռատես քաղաքականության շնորհիվ և կամայական որոշմամբ Գրիմի թերակղզին տրվեց Ուկրաինային: Այս հանգամանքը ունեցավ այն նշանակությունը և հետևանքը, որ Ուկրաինան սկսեց ավելի հեռանալ Ռուսաստանից: 1995 թ. հունիսի 9-ին Մոսկվայում կնքվեց սևծովյան նավատորմի վերաբերյալ պայմանագիր, որով նավատորմի 81,7 %-ը տրվում էր Ռուսաստանին, իսկ 18, 3 %-ը՝ Ուկրաինային: 1997 թ. գարնանը Բ. Ելցինը ժամանեց Կիև, որտեղ էլ մայիսի 31-ին կնքվեց բարեկամության և համագործակցության մասին պայմանագիր, որի շնորհիվ հնարավոր եղավ վիճելի հարցերի մի մասի վերաբերյալ գալ փոխզիջման: Սևաստոպոլը 20 տարվա վարձակալության իրավունքով մնաց որպես Ռուսաստանի հենակետ, իսկ Ռուսաստանն էլ ճանաչեց Ուկրաինայի իրավունքները Գրիմի նկատմամբ:

Սակայն ճշմարտությունն այն է, որ Մոսկվայի և Կիևի միջև հարաբերությունները շարունակում էին մնալ ոչ բարեկամական: Ռուսաստան-Ուկրաինա փոխհարաբերություններում դրական տեղաշարժեր տեղի ունեցան, երբ 2010 թ. փետրվարին Ուկրաինայում նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ «Ռեգիոնների կուսակցության» առաջնորդ, ռուսամետ Վիկտոր Յանուկովիչը: Նա իր առաջին իսկ հարցազրույցում հայտարարեց, որ իր վարած քաղաքականության հիմնական սկզբունքը լինելու են Ուկրաինայի ազգային շահերը, նա միաժա-

մանակ կջանա հավասարակշռված հարաբերություններ կառուցել Ռուսաստանի և Եվրոպայի հետ⁶⁸։ Եվ իրոք, Վիկտոր Յանուկովիչի առաջին քայլերից մեկը Ռուսաստանի հետ ավանդական բարիդրացիական հարաբերությունների և Մեծովյան մավատորմի հարցում որոշակի առաջընթացի հաստատումն էր։

Ռուսաստան-ԱՊՀ հարաբերություններում ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն Ռուսաստանի Դաշնություն-Բելոռուս հարաբերությունները։ Այս հարաբերություններում ևս կան որոշակի առանձնահատկություններ։ Խնդիրն այն է, որ «Բելովեժյան համաձայնությունը» այնքան էլ հավանություն և պաշտպանություն չէր գտնում բելոռուս բնակչության մեծ մասի կողմից, որքան էլ որ իշխանական վերնախավում վիճակը մի փոքր այլ էր։ Դրա լավագույն օրինակը այն է, որ 1991 թ. դեկտեմբերին Բելոռուսիայի Գերագույն խորհրդի նստաշրջանում Բելովեժյան համաձայնությանը դեմ է քվեարկել մեկ պատգամավոր՝ Ալեքսանդր Լուկաշենկոն, որը ԱՊՀ ղեկավարներից առաջինն էր, որ այդ իրադարձությունը գնահատեց որպես «խորհրդային Միության ժողովուրդների նկատմամբ հանցագործություն»⁶⁹։

Երբ արդեն 1994 թ. Ա. Լուկաշենկոն նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ և ընտրվեց երկրի նախագահ, սկսվեց երկու բարեկամ ժողովուրդների ու երկրների միջև ավելի սերտ հարաբերությունների հաստատումը։ 1994 թ. ապրիլին կնքվեց ռուս-բելոռուսական միջկառավարական դրամական դաշինք, համաձայնություն։ 1995 թ. մայիսին տեղի ունեցավ Բելոռուսի Գերագույն խորհրդի ընտրություններ, որի արդյունքում ազգայնական կուսակցությունները լիակատար պարտություն կրեցին։ 1995 թ. մայիսի 14-ին երկրում անցկացված հանրաքվեի ընթացքում հավանություն տրվեց երկրի նախագահի առաջարկությանը Ռուսաստանի հետ հաստատելու ավելի սերտ ինտեգրման քաղաքականություն, ինչպես նաև ռուսաց լեզվին տալ բելոռուսերենին հավասար պետական լեզվի կարգավիճակ։ Միաժամանակ որոշվեց Ռուսաստանի և Բելոռուսի սահմանում վերացնել մաքսային վերահսկողությունը, որն էլ հնարավորություն տվեց երկու երկրների միջև աշխուժացնել ապրանքափոխանակությունը։ 1990-ական թվականների վերջե-

⁶⁸ Տե՛ս «Առավոտ», 11 փետրվարի, 2010։

⁶⁹ Տե՛ս *Новейшая история России. 1914-2008*, М., 2008, էջ 461։

րին եվրոպական երկրների հետ Ռուսաստանի արտաքին առևտրի 80 %-ը իրականացվում էր Բելոռուսի տարածքով:

Ա. Լուկաշենկոն որոշակի քայլեր ձեռնարկեց մաև երկու երկրների միջև քաղաքական կապերի ամրապնդման ուղղությամբ: 1995 թ. օգոստոսին կնքվեց բարեկամության, համագործակցության, բարիդրացիական հարաբերությունների մասին պայմանագիր:

1996 թ. մարտին Ա. Լուկաշենկոն այցելեց Մոսկվա և անցկացրեց քաղաքական խորհրդակցություններ ռուսական ղեկավարության հետ: Այդ նույն ժամանակ Ռուսաստանի Դաշնային խորհրդի ներկայացուցիչների պալատի նախագահ Ե. Ստրոնի գլխավորությամբ բանակցություններ էին ընթանում Բելոռուսի համապատասխան մարմինների հետ՝ ռուս-բելոռուսական միության ստեղծման մասին: 1996 թ. ապրիլի 2-ին Կրեմլում ստորագրվեց պայմանագիր երկու երկրների համագործակցության մասին: Արդեն մեկ տարի անց՝ 1997 թ. ապրիլին, այդ համագործակցությունը ստացավ Ինքնավար Հանրապետությունների Միություն (ԻՀՄ-ССР – ընդ. Հ. Ա.) անվանումը⁷⁰:

Ռուսաստան-Բելոռուս քաղաքական դաշինքը և միմյանց մերձեցումը ստանում էր հատուկ իմաստ, բովանդակություն մաև այն պատճառով, որ այդ նույն ժամանակ ՆԱՏՕ-ն ընդլայնում էր իր ազդեցությունը դեպի Արևելք՝ մոտենալով Բելոռուսի և Ռուսաստանի Դաշնության սահմաններին: Երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացումը հանգեցրեց նրան, որ կողմերը համաձայնության եկան ստեղծելու միասնական, Միութենական պետություն: 1999 թ. դեկտեմբերի 8-ին (դեկտեմբերի 8-ը պատահական չէր ընտրված – Հ. Ա.) տեղի ունեցավ Ռուսաստանի և Բելոռուսի Միության Բարձրագույն խորհրդի նիստը, որտեղ էլ ստորագրվեց պայմանագիր, որի նպատակը երկու եղբայրական ժողովուրդների խաղաղ, ժողովրդավարական զարգացումն էր, միասնական տնտեսական տարածաշրջանի, գոտու ստեղծումն էր, պաշտպանության քաղաքականության իրականացումը և այլն: Հետագա տարիները ցույց տվեցին, որ հարաբերությունները ԱՊՀ երկրների, այդ թվում մաև Բելոռուսի հետ ընթանում են ոչ միանշանակ, կան դեռևս շատ չլուծված խնդիրներ, հարցեր և այլն:

Խոսքը հատկապես վերաբերում է ԱՊՀ երկրների միջև նախկինից ժառանգություն մնացած մի շարք հակամարտությունների հաղթահար-

⁷⁰ Նույն տեղում, էջ 461:

մանն ու կարգավորմանը: Դրանց շարքում առանձնանում է Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Որքան էլ որ 1994 թ. մայիսին Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ երկու կողմերի միջև դադարեցվեց պատերազմը, և կողմերը պարտավորվեցին խնդիրը լուծել քաղաքական ճանապարհով, այնուամենայնիվ, այն մինչև այժմ շարունակում է մնալ չլուծված, պայթուցավտանգ՝ չնայած խնդրի լուծմանը ներգրաված են նաև միջազգային ուժեր, առաջին հերթին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Ֆրանսիայի ներկայացուցիչները, որոնք մինչև այժմ բազմաթիվ նախագծեր, առաջարկություններ են ներկայացրել:

Ռուսաստանի՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից մեկի, նաև որպես ԱՊՀ երկրների առաջատար պետության դիրքորոշումը, ի վերջո հանգում է նրան, որ խնդրի լուծումը կախված է երկու հակամարտող կողմերի կամքից, որոնք պատրաստակամություն պետք է դրսևորեն գալու ընդհանուր եզրակացության՝ բացառելով պատերազմը: Սակայն ճշմարտությունն այն է, որ առայժմ, չնայած երկու կողմերի նախագահների տասնյակ հանդիպումներին, շոշափելի առաջընթաց այդ հարցում դեռևս տեսանելի չէ: Ի դեպ միայն 2008-2011 թթ. ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի նախագահները եռակողմ ձևաչափով (նկատի ունենք Ռուսաստանի Դաշնության նախագահին – Հ. Ա.) հանդիպել են երեք անգամ Սանկտ-Պետերբուրգում, երկուական անգամ՝ Մոսկվայում և Սոչիում, մեկ անգամ՝ Աստրախանում, որոնց ընթացքում ընդունվել են մի շարք փաստաթղթեր. 2008-ին Մայենդորֆի հռչակագիրը, 2010-ին՝ Աստրախանի հայտարարությունը և 2011-ին՝ Սոչիի հայտարարությունը:

Իսկ այն փաստը, որ 2009 թ. հուլիսի 10-ի Ակվիլայի, 2010 թ. Հունիսի 26-ի Մոսկովայի և 2011 թ. Մայիսի 26-ին Դոմիլիում Մեդվեդևի, Օբամայի և Սարկոզիի հանդիպումներն ու հայտարարությունները ունեն նպատակ ամեն ինչ անել խաղաղ ճանապարհով կարգավորելու դարաբաղյան հակամարտությունը և վերջին հաշվով խնդրի լուծման ուղղությամբ հասնել որոշակի արդյունքների և բեկման, խոսում է այն մասին, որ դարաբաղյան հակամարտությունը գտնվում է մեծ տերությունների ուշադրության կենտրոնում: Խնդրի լուծման ուղղությամբ հատկապես որոշակի հույսեր էին կապված 2011 թ. հունիսի 24-ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում նախատեսվող եռակողմ՝ Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևի, Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի և Ադրբե-

ջանի նախագահ Ի. Ալիևի հանդիպման հետ, որը, սակայն, չարդարացրեց այդ հույսերը՝ բավարարվելով միայն հայտարարությամբ այն մասին, որ հանդիպելով Կազանում երեք պետությունների նախագահները արձանագրեցին մի շարք հարցերի շուրջ փոխըմբռնման ձեռքբերումը, որոնց լուծումը կնպաստի Հիմնական սկզբունքներին հավանություն տալու համար պայմանների ստեղծմանը:

Միաժամանակ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները երախտագիտություն են հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների առաջնորդներին և բարձր են գնահատում պայմանավորվածությունների ձեռքբերմանն օժանդակելու ՌԴ նախագահի անձնական ջանքերը:

Սակայն այդ բոլորով հանդերձ որևէ համաձայնություն հիմնարար սկզբունքների շուրջ Կազանում ձեռք չբերվեց, որն էլ ի չիք դարձրեց այն ակնկալիքները, որ Կազանյան հանդիպումը կարող էր դառնալ բեկումնային: Դժվար չէ համոզվել, որ դարաբաղյան հիմնախնդիրը դեռ երկար ու երկար քննարկումների նյութ կարող է դառնալ⁷¹: Բոլոր դեպքերում բանակցությունները շարունակվում են՝ հույս ներշնչելով, որ դրանք կարող են երկուստեք ընդունելի տարբերակների հանգեցնել և հակառակ կողմը ի վերջո կհասկանա, որ ինքը որևէ իրավունք Վարաբաղի նկատմամբ չունի:

2002 թ. լրացավ ԱՊՀ երկրների ռազմական համագործակցության 10 տարին: Նույն թվականի փետրվարի 27-ին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ ռազմական նախարարների պաշտպանության խնդիրներին նվիրված խորհրդակցություն, որին մասնակցում էին Ռուսաստանի, Հայաստանի, Բելոռուսի, Վրաստանի, Հազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Ադրբեջանի, Մոլդովայի և Ուկրաինայի ներկայացուցիչները: Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Ս. Իվանովը, որը նաև ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարությունների խորհրդի նախագահն էր, առաջարկեց մինչ այդ ընդունված 400 պայմանագրերին, որոշումներին ևս ավելացնել նորերը, որոնք ուղղված էին ավելի ամրապնդելու դաշինքի մեջ մտնող երկրների կողակտիվ անվտանգությունը և ավելի զարգացնելու ռազմական համագործակցությունը միմյանց միջև:

⁷¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 25 հունիսի, 2011: «Առավոտ», 25 հունիսի, 2011:

ԱՊՀ կոլեկտիվ անվտանգության համակարգի երկրների համագործակցության հարցում հատկապես կարևոր նշանակություն ունի 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ձևավորված Հավաքական անվտանգության պաշտպանության կազմակերպությունը (ՀԱՊԿ), որի մեջ մտնող երկրները՝ Ռուսաստանը, Ղազախստանը, Հայաստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը, պարտավորվեցին համատեղ ջանքեր գործադրել դաշինքի մեջ մտնող երկրների անվտանգության և միասնական ռազմական քաղաքականության իրականացման ուղղությամբ: ՀԱՊԿ պայմանագիրը հետագայում ստորագրել են Ադրբեյջանը (1993 թ. սեպտեմբերի 24), Վրաստանը (1993 թ. սեպտեմբերի 9), Բելոռուսը (1993 թ. դեկտեմբերի 31): Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1994 թ. ապրիլի 20-ին 5 տարի ժամկետով:

1999 թ. ապրիլի 2-ին Ռուսաստանի, Հայաստանի, Բելոռուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի նախագահները ստորագրեցին մի նոր պայմանագիր՝ դաշինքը ևս 5 տարով երկարացնելու մասին, սակայն Ադրբեյջանը, Վրաստանը և Ուզբեկստանը հրաժարվեցին ստորագրել այն: Այդ նույն թվականին Ուզբեկստանը միացավ ԳՌԽԱՄ-ին (ԳՌԽԱՄ-ը ստեղծվել է 1999 թ., որի մեջ մտնում են Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեյջանը, Մոլդովան և Ուզբեկստանը, որը մինչև 1999 թ. ապրիլի 2-ը ՀԱՊԿ-ի անդամ էր, իսկ հետագայում՝ 2005 թ., մայիսին հայտարարեց ԳՌԽԱՄ-ից դուրս գալու մասին և կրկին 2006 թ. օգոստոսի 16-ին մտավ ՀԱՊԿ-ի մեջ):

ՀԱՊԿ-ի հետագա զարգացման և անվտանգության էլ ավելի ամրապնդման նպատակով 2009 թ. փետրվարի 4-ին Մոսկվայում ՀԱՊԿ անդամ երկրների լիդերները որոշեցին ստեղծել արագ արձագանքման կոլեկտիվ անվտանգության ուժեր, որոնք հարկ եղած դեպքում կարող են պայմանագրի մեջ մտնող որևէ երկրի նկատմամբ սպառնալիքի դեպքում արագ արձագանքել և ձեռնարկել համապատասխան քայլեր⁷²: Ընդհանրապես Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ հետապնդում են մի շարք նպատակներ. ապահովել կենսական նշանակություն ունեցող այնպիսի խնդիրների լուծում, ինչպիսիք են՝ համագործակցության մեջ մտնող երկրների միջև տնտեսական սերտաճման գործընթացի էլ ավելի արդյունավետ զարգացումը, քաղաքական, ռազմական համագործակցությունը և, որ կարևոր է, ջանքեր գոր-

⁷² Տվյալները վերցված են ՌԴ համապատասխան կայքից. www.mid.ru.

ծաղրել համաշխարհային համագործակցության մեջ արժանի տեղ գրավելու ուղղությամբ, ինչպես նաև ամեն ինչ անել բոլոր ոլորտներում կայուն վիճակ ստեղծելու համար և այլն:

Հարկ է նաև ընդգծել, որ Ռուսաստանի Դաշնությունը ԱՊՀ անդամ մյուս երկրների հարաբերություններում առանձնապես կարևորում է իր առաջատար դերը, որը կոչված է նոր դերակատարություն ունենալ հետխորհրդային շրջանում և տարածաշրջանում համագործակցության մեջ մտնող պետությունների միջև քաղաքական, տնտեսական, պաշտպանական և բազմաթիվ այլ խնդիրների լուծման գործում:

Այդ խնդիրների լուծման գործում կարևոր դերակատարություն ունի նաև ԱՊՀ-ի մեջ մտնող երկրների միջխորհրդարանական համագործակցության ստեղծումը, որտեղ քննարկվում են միջխորհրդարանական կապերի զարգացմանը նվիրված բազմաթիվ հարցեր, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ և այլն: Ռուսաստանի Դաշնություն-ԱՊՀ անդամ մյուս երկրները հարաբերություններում հատկապես կարևորվում են ռուս-հայկական հարաբերությունները: Հարկ է ասել, որ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ ապրիլի 3-ին և մինչև այժմ կնքվել են տարբեր բնույթի ավելի քան 160 միջպետական, միջկառավարական, միջգերատեսչական պայմանագրեր, համաձայնագրեր: Դրանց շարքում հատկապես առանձնանում է 1997 թ. օգոստոսի 29-ի հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից կնքված «Քարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը, որը պատմության մեջ մտավ որպես «մեծ պայմանագիր» անունով: Այդ պայմանագրով հայ-ռուսական հարաբերությունները մտան որակական մի նոր փուլ, ռազմավարական տեսակետից մի նոր աստիճան, որն ավելի է մերձեցնում երկու երկրներին, նրանց դարձնում ռազմական դաշնակիցներ: Այդ դաշինքն ավելի ամրապնդվեց, երբ 2000 թ. երկու կողմերը ստորագրեցին 21-րդ դարաշրջանում համատեղ համագործակցության վերաբերյալ հռչակագիր:

2009 թ. ապրիլի 23-ին ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի այցը Ռուսաստան և հանդիպումը ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի հետ կրկին հաստատեցին երկու երկրների ռազմավարական համագործակցության նշանակությունը, որն ուղղված է նրանց անվտանգության ապահովմանը և անչափ կարևոր Հարավային Կովկասում կայունություն հաստա-

տելում: Նույն նշանակությունը ունեցավ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի (2009 թ. հոկտեմբերին) պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն: Բարձր մակարդակի նման հանդիպումներ, փոխադարձ այցելություններ շարունակվել են մաս 2010 թ.⁷³ կրելով փաստորեն սխտեմատիկ բնույթ: Այդ տեսակետից հատկապես կարևորվում է 2010 թ. օգոստոսին ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի այցը Հայաստան, որի արդյունքում բացի բազմաթիվ այլ հարցերի քննարկումից (թվով 5), հատկապես կարևորվում է «ՀՀ-ի և ՌԴ-ի միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը, որը համապատասխանում է երկու երկրների ռազմավարական հետաքրքրություններին և բխում է տարածաշրջանային մակարդակով անվտանգության և կայունության ամրապնդման շահերից⁷³:

Հայ-ռուսական հարաբերությունների բարելավմանը և ամրապնդմանը նպաստում է մաս այն հանգամանքը, որը Ռուսաստանում նոր ձևավորված ներքին սփյուռքում ապրում են ավելի քան 2 մլն. մեր հայրենակիցներ, իսկ Հայաստանում տարբեր հաշվարկներով ավելի քան 8000 ռուսներ, որոնք միավորված են տարբեր համայնքներում և զգալի աշխատանք են կատարում երկու երկրների և ժողովուրդների միջև բարեկամության հաստատման, հոգևոր-մշակութային, տնտեսական և այլ բնույթի կապերի ամրապնդման ուղղությամբ և այլն:

Եվ վերջապես, որքան էլ որ Ռուսաստան-ԱՊՀ հարաբերություններն իրենց մեջ կրում են դեռևս չլուծված բազմաթիվ խնդիրներ, խոչընդոտներ և այլն, այնուամենայնիվ, այդ համագործակցությունը նրա մասնակից երկրների, այդ թվում մաս Հայաստանի Հանրապետության համար փոխադարձ օգտակար է:

⁷³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 օգոստոսի, 2010:

ՎԵՐՋԱՄԱՆ

Խորհրդային Միության և հետխորհրդային՝ 1945-2011 թվականների պատմությունն ընդգրկում է մի ժամանակաշրջան, որը հարուստ է պատմական կարևոր իրադարձություններով, երկու համակարգերի միջև տասնամյակներ ընթացող անզիջում պայքարով՝ սառը պատերազմով, գաղափարական, քաղաքական, տնտեսական պայքարով և այդ պայքարի ավարտին պատմական մի կարևոր իրողությամբ՝ Խորհրդային Միության փլուզմամբ, նորանկախ պետությունների նոր համագործակցությամբ, այդ համագործակցության մեջ մտնող առանձին երկրների միջև միջէթնիկական բախումներով, երբեմն պատերազմներով և այլ կտրգի հակամարտություններով ու դժվարություններով։ Հետաքրքրությունը այդ հարցերի նկատմամբ բավական մեծ է։ Ուսումնասիրելով խորհրդային և հետխորհրդային շրջանի մոտ 70-ամյա պատմությունը՝ մենք հաշվի ենք առել նաև այն կարևոր համագամանքը, որ ոչ վաղ անցյալում՝ 1945-1991 թվականներին, այսօրվա ԱՊՀ անդամ պետությունները մտնում էին մեկ միասնական պետության մեջ և, որքան էլ որ նրանում մտնող տարբեր ազգերը, ժողովուրդները ունեին որոշակի ընդհանրություններ, այնուամենայնիվ, նրանցից շատերը տարբեր արժեքներ, տարբեր մշակույթներ կրող, տարբեր պատմություններ ունեցող ժողովուրդներ էին, որն էլ դարձնում էր անհրաժեշտություն՝ յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել առանձնակի մոտեցում։

Աշխատանքում՝ ըստ առանձին փուլերի, ցույց են տրված և ամփոփված այն իրողությունները, որոնցով անցել են խորհրդային բոլոր ժողովուրդները, որոնք վերաբերվում են Հայրենական մեծ պատերազմից հետո խաղաղ շինարարության անցմանը, աշխարհը երկու հակամարտ համակարգերի բաժանմանը և «սառը պատերազմի» հրահրմանը, երկրի զարգացման նոր հնարավորությունների ոչ արդյունավետ օգտագործմանը, խրուշչովյան արտաքին քաղաքականության ոլորտում ոչ հավասարակշռված քաղաքականությանը և այլն։ Նույնպիսի ձևով ներկայացված են Խորհրդային Միության 1965-1984 թվականներն ընդգրկող, մոտ երկու տասնամյակ ներառող պատմությունը, որի ընթացքում փորձ արվեց տնտեսական բարեփոխումների միջոցով բարելավել երկրի տնտեսական վիճակը և նույնպիսի ձևով փորձել հարթել արտաքին քաղաքականության բնագավառում եղած հակասությունները, բարձրացնել երկրի միջազգային հեղինակությունը։ Աշխատանքում ցույց է տրված, որ անկախ այդ ամենից, երկրի տնտեսա-

թյունը հայտնվեց «զճացման» մեջ, որից դուրս գալը սովորական, ավանդական եղանակներով հնարավոր չէր: Այն հնարավոր չէր նաև երկրի՝ այդ ժամանակվա կառավարող բրեժնևյան վերնախավի միջոցով, որն էլ համաձայնորեն ցույց է տրված աշխատանքում: Աշխատանքի կարևոր արդյունքներից մեկը խորհրդային համակարգի ճգնաժամի և գորբաչովյան վերակառուցման քաղաքականության վերլուծությունն է, հասարակության վերափոխման, դեմոկրատացման, քաղաքական կուսակցությունների ձևավորման ուղղությամբ առաջին քայլերը ներկայացնելը և վերլուծելն է, որոնք էլ աշխատանքում համաձայնորեն ցույց են տրված:

Աշխատանքի վերջին բաժնում ցույց են տրված հետխորհրդային ժամանակաշրջանում Ռուսաստանի Դաշնության և նոր ձևավորված ԱՊՀ մյուս պետությունների փոխհարաբերությունները: Այդ հարցում հստակապես կարևորվում են նոր պայմաններում նորանկախ պետությունների քաղաքական նոր զարգացումների, շուկայական տնտեսության կայացման նոր գործընթացների, Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մյուս հանրապետությունների միջև հետխորհրդային ժամանակաշրջանի նոր որակի, նոր կարգի հարաբերություններին վերաբերվող խնդիրների լուսաբանումը: Այդ հարաբերությունների շարքում առանձնապես կարևորվում են Ռուսաստանի Դաշնություն-Հայաստանի Հանրապետություն փոխհարաբերությունները, որոնք առանձնանում են նաև նրանով, որ երկու երկրների միջև հաստատվել է ռազմավարական նոր կարգի դաշինք՝ հիմնված իրավահավասար սկզբունքների վրա: Այդ հարցերը ևս լուսաբանված են աշխատանքում: Ընդհանրացնելով խորհրդային և հետխորհրդային հասարակությունների՝ 1945-2011 թթ. պատմությունը՝ հարկ է ասել, որ այն բավական ուսունելի է, որքան էլ որ լի է բազմաթիվ խնդիրներով, հակասություններով, խորհրդային տարիներին կառավարման համակարգում թույլ տված սխալներով և այլն:

Եվ վերջապես հետխորհրդային շրջանը միանգամայն այլ բովանդակություն և այլ ուղղվածություն ունի: Այդ շրջանի բնորոշ գիծը նորանկախ պետությունների նոր հիմունքներով հարաբերությունների հաստատումն է, որի ուսումնասիրումը և պատմությունից դասեր քաղելը, ճիշտ հետևություններ անելը առավել քան կարևոր են յուրաքանչյուր երկրի ինքնության ապահովման, նոր ռազմավարության մշակման, նորմալ ու խաղաղ զարգացման համար:

**СОВЕТСКОЕ И ПОСТСОВЕТСКОЕ
ОБЩЕСТВО 1945-2011 ГГ.**

РЕЗЮМЕ

В настоящее время возрастает необходимость глубокого научного переосмысления истории развития советского и постсоветского общества, и в этом плане сравнительный подход к изучению данного вопроса в армянской историографии является одним из первых. В работе с критических позиций рассматривается и оценивается исторический ход событий с 1945-2011 гг.

Первые послевоенные годы характеризуются продолжением сталинских репрессий внутри страны и началом «холодной войны» в международной жизни. Годы восстановления демократических основ в стране, связанных с именем Н. С. Хрущёва, вошли в историю под названием «оттепель». Показана историческая роль XX съезда партии, который осудил культ личности Сталина. С середины 50-х годов демократические тенденции в силу демократических действий сверху стали ослабевать, возникла опасность волюнтаризма и администрирования, и Хрущёв был смещён со всех постов руководства.

Брежневское время характеризуется осуществлением нового курса в политике и экономике, однако экономические реформы сопровождались свёртыванием демократических преобразований, что привело страну к глубокому застою и кризису. С середины 80-х годов начинается процесс горбачёвской перестройки. В работе указывается, что программы её имели декларативный характер, и скоро стал очевиден разрыв между тем, что пытались реализовать руководство и реальной обстановкой в стране. Перестройка завершилась распадом Советского Союза. Была достигнута договорённость о создании Содружества Независимых Государств.

Далее в работе рассмотрены проблемы дальнейшего политического развития Российской Федерации, а также вопросы становления рыночной экономики. Показаны новые взаимоотношения между Россией и странами Содружества. Особое место занимают вопросы сотрудничества Республики Армении и Российской Федерации.

- Армения: проблемы независимого развития. (под ред. Кожокина Е. М.), М., 1998.*
- Всемирная история. (под ред. Поляка Г. Б., Марковой А. Н.), М., 1997.*
- Исторический опыт и перестройка. М., 1989.*
- Новейшая история Отечества. XX век. В. 2 т., (под ред. Киселева А. Ф., Щагина Э. М.), М., 1999.*
- Новейшая история. Подробности. 1945-1999, М., 2000.*
- Новейшая история России. 1914-2008. (под ред. Ходякова М. В.), М., 2008.*
- Отечественная история. XX век. (под ред. Ушакова А. В.), М., 1997.*
- Политическая история России. М., 1998.*
- Политические партии России: история и современность. (под ред. Зезелева А. И., Свириденко Ю. П., Шелохаева В. В.), М., 2000.*
- Политические партии России в контексте ее истории. Ростов-на-Дону, 1998.*
- Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство. (под ред. Авакова Р. М., Лисова А. Г.), М., 2000.*
- Страницы истории советского общества. Факты, проблемы, люди. М., 1989.*
- Боффа Дж.** История Советского Союза. Пер. с ит., М., 1990.
- Боффа Дж.** От СССР к России. История неоконченного кризиса. 1964-1994. Пер. с ит. М., 1996.
- Валовой Дмитрий.** XXI век: три сценария развития. М., 1999.
- Вартанян Р. Г.** Российская политика на Кавказе. Ереван, 2005.
- Верт Н.** История Советского государства. 1900-1991. Пер. с фр., М., 1999.
- Гренвилл Дж.** История XX века. Люди. События. Факты. Пер. с англ., М., 1999.
- Дворниченко А. Ю., Тот Ю. В., Ходяков М. В.,** История России. М., 2008.

Мунчаев Ш. М., Устинов В. М. Политическая история России. От становления самодержавия до падения Советской власти. М., 1999.

Мунчаев Ш. М., Устинов В. М. История Советского государства. М., 2008.

Орлов А. С., Георгиев В. А., Георгиева Н. Г., Сивохина Т. А. История России. М., 2006.

Поцелуев В. А., История России XX столетия: (основные проблемы). М., 1997.

Примаков Е., Мир без России? К чему ведёт политическая близорукость. М., 2009.

Семёнов В. С., Уроки XX века и путь в XXI век (Социально-философский анализ и прогноз) М., 2000.

Сёмин В. П., Русская история: проблемы и спорные вопросы. М., 2007.

Топорнин Б. Н., Новый союзный договор: Теоретические подходы. Трудные поиски и решений, М., 1990.

Шестаков В. А., Новейшая история России. М., 2008.

Шинкаревич Г. Г., Содружество Независимых Государств. Правовые основы деятельности СНГ М., 2006.

Вестник Московского университета Серия 18. Социология и политология № 4. М., 2009.

ԵԱԴՀ Հեւսինկի 1975, եզրափակիչ ակտ, Երևան, 2007:

Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ. 1990-1995, Երևան, 1995:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարի նյութերը, Երևան, 1986:

«Հայաստանի Հանրապետություն», 25 հունիսի, 2011:

«Առավոտ», 11 փետրվարի, 2010:

«Առավոտ», 22 հունիսի, 2011:

«Առավոտ», 25 հունիսի, 2011:

Ինտերնետային հասցե՝ www.mld.ru.

ՀԵՆՐԻԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1945-2011 ԹԹ.

**Տեխ. խմբագիր՝ Վ. Բոդյան
Կազմի և համ. ձևավորումը՝ Կ. Սաքոսյանի**

**Ստորագրված է տպագրության 15. 07. 2011 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Հրատ. 6,3 մամուլ, տպագր. 7,75 մամուլ = 7,2 պլայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 200: Պատվեր՝ 46:**

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արովյան 52